

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
(Հայպատոնագիր)



Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
No 1 (17)

Патентное управление Республики Армения
(Армпатент)

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2001 թվականի ապրիլի 10-ից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	5, 135
Հայաստանի Հանրապետության օրենքը «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին»	7, 137
ԳՅՈՒՏԵՐ	25, 155
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	27, 157
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	43, 171
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	45, 173
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ	47, 175
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	49, 177
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	51
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	53
ՑՈՒՑԻՉՆԵՐ	127
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	131
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	178

Հրատարակվում է Հայարտոնագրի կողմից 1995թ. Издаётся Армпатентом с 1995г.

375010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3 375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
 Հեռ. 563-258 ընդհանուր բաժին Тел. 563-258 общий отдел
 Հեռ. 561-126 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին Тел. 561-126 отдел информационных технологий

E-mail: patent@arminco.com

СОДЕРЖАНИЕ**CONTENTS**

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5, 135	LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS
Закон Республики Армения “О товарных знаках и знаках обслуживания, наименованиях мест происхождения товаров”	7, 137	Law of the Republic of Armenia on Trademarks, Service Marks and Appellations of Origin
ИЗОБРЕТЕНИЯ	25, 155	INVENTIONS
Сведения о выданных патентах	27, 157	Information on granted patents
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	43, 171	UTILITY MODELS
Сведения о выданных патентах	45, 173	Information on granted patents
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	47, 175	INDUSTRIAL DESIGNS
Сведения о выданных патентах	49, 177	Information on granted patents
ТОВАРНЫЕ ЗНАКИ	51	TRADE MARKS
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	53	Information on registered trade marks and service marks
УКАЗАТЕЛИ	127	INDEXES
СООБЩЕНИЯ	131	REPORTS
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	178	TWO-LETTER CODES

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
2000 թվականի մարտի 20-ին

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԵՆ ՍԱԿԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքով կարգավորվում են ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության եւ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ապրանքային եւ սպասարկման նշաններ

ԳԼՈՒԽ 1

Ապրանքային եւ սպասարկման նշանները, դրանց իրավական պահպանությունը

Հոդված 1. Ապրանքային եւ սպասարկման նշանները

Ապրանքային եւ սպասարկման նշանները (այսուհետ՝ ապրանքային նշան) այն նշաններն են, որոնցով որեւէ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ապրանքները եւ ծառայությունները համապատասխանաբար տարբերվում են այլ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի նույնատիպ ապրանքներից եւ ծառայություններից (այսուհետ՝ ապրանքներ):

Հոդված 2. Ապրանքային նշանի իրավական պահպանությունը

Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի իրավական պահպանությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով ապրանքային նշանի պետական գրանցման

(այսուհետ՝ գրանցում) հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը պահպանվում է օրենքով:

Հոդված 3. Ապրանքային նշանի գրանցման վկայագիրը

1. Ապրանքային նշանը կարող է գրանցվել իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունով:

2. Գրանցված ապրանքային նշանի սեփականատիրոջը տրվում է ապրանքային նշանի գրանցման վկայագիր (այսուհետ՝ ապրանքային նշանի վկայագիր):

3. Ապրանքային նշանի վկայագիրը հաստատում է ապրանքային նշանի գրանցման փաստը, առաջնությունը, ինչպես նաեւ ապրանքային

քային նշանի վկայագրում նշված ապրանքների նկատմամբ ապրանքային նշանի օգտագործման բացառիկ իրավունքը:

Հոդված 4. Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը

1. Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքն առաջանում է դրա գրանցման պահից:

2. Ապրանքային նշանի սեփականատերն ունի այն տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու, ինչպես նաեւ այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք: Առանց ապրանքային նշանի սեփականատիրոջ թույլտվության ոչ ոք իրավունք չունի օգտագործել Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը:

3. Գրանցված ապրանքային նշանի սեփականատերը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց առեւտրային գործունեության ընթացքում արգելելու առանց իր թույլտվության ապրանքային նշանի կամ դրանով նշված ապրանքի պատրաստումը, կիրառումը, ներմուծումը, վաճառքը եւ դրա առաջարկը, ինչպես նաեւ այլ ձեւերով տնտեսական շրջանառության մեջ մտցնելը կամ այդ նշանով նշված ապրանքի կամ ապրանքային նշանի նույն նպատակով պահեստավորումը եւ սույն օրենքի 22 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված գործողությունների իրականացումը, եթե այդ ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճան մնան է իր ապրանքային նշանին եւ օգտագործված է այն ապրանքների նկատմամբ՝ ա) որոնց համար գրանցված է իր ապրանքային նշանը.

բ) որոնք նույնատիպ են այն ապրանքների, որոնց համար գրանցված է իր ապրանքային նշանը.

4. Արգելվում է առեւտրային գործունեության ընթացքում օգտագործել որեւէ նշան, որը Հայաստանի Հանրապետությունում որոշակի ապրանքների նկատմամբ հանրահայտ համարվող ապրանքային նշանին շփոթելու աստիճան մնան նշանի վերարտադրությունը, մանակունը կամ թարգմանությունն է եւ առանց վերջինիս սեփականատիրոջ թույլտվության օգտագործվում է՝

ա) նույն կամ նույնատիպ ապրանքների նկատմամբ.

բ) ոչ նույնատիպ ապրանքների նկատմամբ, ինչը մոլորեցնելով ստիպում է այդ ապրանքների եւ հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ միջեւ կապ ենթադրել, պայմանով, որ այդպիսի օգտագործումը կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

5. Սույն դրույթները տարածվում են նաեւ

այն դեպքերի վրա, երբ նշանի էական մասը այդպիսի հանրահայտ ապրանքային նշանի վերարտադրությունն է կամ դրա շփոթելու աստիճանի մանակունը:

6. Եթե ապրանքային նշանը գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի (այսուհետ՝ Փարիզյան կոնվենցիա) անդամ երկրներից որեւէ մեկում պահպանվող ապրանքային նշանի սեփականատիրոջ գործակալի կամ ներկայացուցչի անունով՝ առանց այդ սեփականատիրոջ համաձայնության, ապա վերջինս իրավունք ունի արգելելու առանց իր թույլտվության այդ ապրանքային նշանի օգտագործումը գործակալի կամ ներկայացուցչի կողմից, եթե նա իր գործողություններն արդարացնող ապացույցներ չի ներկայացնում:

Հոդված 5. Ապրանքային նշանի տեսակները

1. Որպես ապրանքային նշան կարող են գրանցվել բառային (ներառյալ՝ բառեր, թվեր, տառեր, անուններ), պատկերային, ծավալային, ձայնային եւ այլ գրառմամբ ներկայացվող նշաններ կամ դրանց համակցությունը:

2. Ապրանքային նշանը կարող է գրանցվել ցանկացած գույնով կամ գունային համակցությամբ:

ԳԼՈՒԽ 2

Ապրանքային նշանի գրանցումը

Հոդված 6. Ապրանքային նշանի գրանցման հայտը

1. Ապրանքային նշանի գրանցման հայտը (այսուհետ՝ հայտ) Հայաստանի Հանրապետության արտոնագրային գերատեսչություն (այսուհետ՝ գերատեսչություն) է ներկայացնում այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ մինչեւ սույն մասի ավարտը՝ հայտատու), որի անունով խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը:

2. Հայտը կարող է ներկայացվել նաեւ գերատեսչությունում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

3. Օտարերկրյա իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերն ապրանքային նշանների գրանցման հետ կապված գործերը վարում են գերատեսչությունում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով: Արտոնագրային հավատարմատարի իրավասությունը վավերացվում է այն անձի կողմից տրված

լիազորագրով, որի անունով խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը:

4. Արտոնագրային հավատարմատարների որակավորման եւ գրանցման կարգը սահմանում է գերատեսչությունը:

5. Արտոնագրային հավատարմատարների գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կանոնադրությամբ:

6. Հայտը պետք է վերաբերի մեկ ապրանքային նշանի եւ պարունակի՝

ա) դիմում ապրանքային նշանի գրանցման մասին, որում նշվում են հայտատուն եւ նրա գտնվելու կամ բնակության վայրը.

բ) հայտարկվող նշանի պատկերը եւ դրա նկարագրությունը.

գ) ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման դասերին համապատասխան խնդրարկված այն ապրանքների ցանկը, որոնց համար խնդրարկվում է նշանի գրանցումը:

7. Հայտին կցվում են՝

ա) հայտ ներկայացնելու եւ փորձաքննություն անցկացնելու համար սահմանված չափով տուրքի վճարման անդորրագիրը.

բ) կոլեկտիվ նշանի կանոնադրությունը, եթե ներկայացվում է կոլեկտիվ նշանի հայտ.

գ) արտոնագրային հավատարմատարի իրավասությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագիրը), եթե հայտը ներկայացվում է նրա միջոցով:

8. Հայտը ներկայացվում է հայերեն: Հայտին կցվող փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով: Այդ դեպքում Հայաստանի Հանրապետության հայտատուները պարտավոր են դրանց հայերեն թարգմանությունը ներկայացնել հայտի հետ, իսկ օտարերկրյա հայտատուները՝ հայտը ներկայացնելու օրվանից երկամսյա ժամկետում:

9. Հայտի փաստաթղթերի նկատմամբ պահանջները սահմանում է գերատեսչությունը:

Հոդված 7. Ապրանքային նշանի առաջնությունը

1. Ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է հայտը գերատեսչություն ներկայացնելու տարով, ամսով, ամսաթվով (այսուհետ՝ թվական):

2. Ապրանքային նշանի առաջնությունը կարող է սահմանվել առաջին հայտը Փարիզյան կոնվենցիայի մասնակից որեւէ պետություն ներկայացնելու թվականով (կոնվենցիայով առաջնություն), եթե հայտը գերատեսչություն է ներկայացվել այդ թվականից 6 ամսվա ընթացքում:

3. Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում պաշտոնա-

կան կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսների ցուցանմուշների վրա տեղադրված նշանի առաջնությունը կարող է սահմանվել ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականով (ցուցահանդեսային առաջնություն), եթե հայտը գերատեսչություն է ներկայացվել այդ թվականից 6 ամսվա ընթացքում:

4. Կոնվենցիայով կամ ցուցահանդեսային առաջնության իրավունքից օգտվել ցանկացող հայտատուն պարտավոր է այդ մասին նշել հայտը ներկայացնելիս կամ հայտը պետական լիազորված մարմին ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում՝ կցելով այդ պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը, կամ այդ փաստաթղթերը գերատեսչություն ներկայացնել հայտի ներկայացման թվականից երեք ամսվա ընթացքում:

5. Ապրանքային նշանի առաջնությունը կարող է սահմանվել միջազգային գրանցում ունեցող ապրանքային նշանի առաջնության թվականով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

6. Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ լրիվ կամ մասամբ համընկնող ապրանքների ցանկի համար գրանցման ներկայացված նույնական կամ շփոթելու աստիճան նման նշաններն ունեն նույն առաջնության թվականը, ապա հայտատուների միջեւ կնքված համաձայնագրին համապատասխան, համընկնող ապրանքների համար, նշանը (կամ շփոթելու աստիճան նման նշաններից որեւէ մեկը) կարող է գրանցվել նրանցից մեկի անունով:

Այդ մասին գերատեսչության ծանուցագիրն ստանալու օրվանից 6 ամսվա ընթացքում, համընկնող ապրանքների համար նշանի գրանցման հարցում հայտատուների համաձայնության չգալու դեպքում, համընկնող ապրանքների մասով հայտերը համարվում են հետկանչված:

Հոդված 8. Հայտի փորձաքննությունը

1. Հայտի փորձաքննությունը, որը ներառում է նախնական փորձաքննություն եւ հայտարկված նշանի փորձաքննություն, իրականացնում է գերատեսչությունը:

2. Հայտի ներկայացման օրվանից երկու ամսվա ընթացքում, մինչեւ դրա վերաբերյալ որոշման ընդունումը, հայտատուն իրավունք ունի իր նախաձեռնությամբ լրացումներ, ծջորտումներ եւ ուղղումներ կատարելու հայտի նյութերում:

3. Փորձաքննության ընթացքում, մինչեւ նշանի գրանցման մասին որոշման ընդունումը, հայտատուն իրավունք ունի դիմում ներկայացնել տվյալ հայտով հայտատուի փոփոխության մասին:

4. Եթե լրացուցիչ նյութերը էապես փո-

փոխում են գրանցման ներկայացված նշանը, կամ եթե հայտի մեջ նշված ապրանքների ցանկում ներառվել են ոչ նույնատիպ ապրանքներ, ապա այդ նյութերը քննարկման չեն ընդունվում եւ կարող են հայտատուի կողմից ձեւակերպվել որպէս ինքնուրույն հայտ:

5. Փորձաքննության ընթացքում գերատեսչությունը կարող է հայտատուից պահանջել լրացուցիչ նյութեր՝ առանց որոնց փորձաքննության անցկացումն անհնար է: Լրացուցիչ նյութերը պետք է ներկայացվեն դրա մասին հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Հայտատուի խնդրանքով նշված ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 6 ամսով, եթե ժամկետի երկարաձգման մասին դիմումն ստացվել է մինչեւ վերոհիշյալ երկամսյա ժամկետի ավարտը: Սահմանված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում հայտը համարվում է հետկանչված, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

7. Հայտատուի խնդրանքով հայտը կարող է հետ կանչվել փորձաքննության ցանկացած փուլում:

Հոդված 9. Նախնական փորձաքննությունը

1. Հայտի նախնական փորձաքննությունն անցկացվում է հայտի ներկայացման օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն օրենքի 8 հոդվածի 5-րդ կետին համապատասխան հարցում ուղարկելու դեպքում նշված ժամկետի ընթացքը դադարեցվում է մինչեւ պատասխանի ստացումը:

2. Նախնական փորձաքննության ընթացքում ստուգվում են հայտի կազմը, անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, ինչպէս նաեւ դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին: Նախնական փորձաքննության արդյունքների հիման վրա հայտատուն ծանուցվում է հայտը քննարկման ընդունվելու կամ չընդունվելու մասին:

3. Հայտը քննարկման ընդունվելու դեպքում հայտատուն ծանուցվում է ապրանքային նշանի ներկայացման թվականի մասին:

Հոդված 10. Հայտարկվող նշանի փորձաքննությունը

1. Հայտարկվող նշանի փորձաքննությունն անցկացվում է նախնական փորձաքննությունն ավարտվելուց հետո 6-ամսյա ժամկետում: Փորձաքննության ընթացքում սահմանվում է ապրանքային նշանի առաջնությունը եւ ստուգվում՝ հայտարկվող ապրանքային նշանի համապատասխանությունը առնվազն սույն օրենքի 11 հոդ-

վածով եւ 12 հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջներին:

2. Փորձաքննության արդյունքների հիման վրա ընդունվում է որոշում՝ հայտարկված նշանը որպէս ապրանքային նշան գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին:

3. Նշանի գրանցումը մերժելու մասին որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուն կարող է դիմում ներկայացնել կրկնական փորձաքննություն անցկացնելու խնդրանքով՝ բերելով հիմնավոր փաստարկներ:

4. Նշված ժամկետը հայտատուի խնդրանքով կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 6 ամսով, եթե ժամկետի երկարաձգման մասին դիմումն ստացվել է մինչեւ վերոհիշյալ երկամսյա ժամկետի ավարտը:

5. Նշանի գրանցման մասին փորձաքննության որոշումը կարող է վերանայվել Գերատեսչության կողմից նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությունից օգտվող նույնական կամ շփոթելու աստիճան մասն նշանի հայտի ստացման կամ ապրանքի ծագման տեղանվան գրանցման կապակցությամբ:

Հոդված 11. Ապրանքային նշանի գրանցումը մերժելու բացարձակ հիմքերը

1. Ապրանքային նշանը չի գրանցվում, եթե այն բաղկացած է միայն այնպիսի նշաններից, որոնք՝

ա) չունեն տարբերակիչ հատկանիշ.

բ) պետական զինանշաններ են, դրոշներ եւ խորհրդանիշներ, պետությունների պաշտոնական անվանումներ, միջազգային կազմակերպությունների լրիվ կամ կրճատ անվանումներ, պաշտոնական խորհրդանիշներ, պաշտոնական վերահսկողական, երաշխիքային եւ հարգորոշիչ դրոշմներ, կնիքներ, պարգևներ եւ այլ տարբերանշաններ կամ թվարկվածներին շփոթելու աստիճան մասն նշաններ: Այդպիսի նշանները, որպէս չպահանջվող տարրեր, կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ՝ դրանց սեփականատիրոջ կամ համապատասխան իրավասու մարմնի համաձայնությամբ,

գ) համընդհանուր օգտագործման մեջ են մտել որպէս որոշակի տեսակի ապրանքներ բնորոշող նշաններ.

դ) համընդհանուր ճանաչում ստացած խորհրդանիշներ եւ տերմիններ են.

ե) նշում են ապրանքի տեսակը, որակը, քանակը, հատկությունները, արժեքը, ստեղծման մպատակը, ինչպէս նաեւ ապրանքի արտադրության եւ իրացման տեղն ու ժամանակը.

զ) բացառապէս ներկայացնում են ապրանքի արտաքին ձեւը, որը՝

- բխում է զուտ ապրանքի բնույթից.
- անհրաժեշտ է որեւէ տեխնիկական արդյունքի հասնելու համար.

- ապրանքին տալիս է էական արժեք:

2. Սույն հոդվածի 1-ին կետի «ա»-«զ» ենթակետերում նշված նշանները, որպես չպահպանվող տարրեր, կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ, եթե դրանք չեն կազմում դրա գերիշխող մասը:

3. Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել նաեւ այն նշանները, որոնք հանդիսանում կամ պարունակում են՝

ա) կեղծ կամ սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություններ ապրանքի կամ արտադրողի մասին.

բ) աշխարհագրական նշում եւ գրանցման են ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական նշմամբ տեղանքից, եթե այդ աշխարհագրական նշման օգտագործումը մոլորության մեջ է գցում սպառողին ապրանքների իրական ծագման վայրի հարցում.

գ) գինիներ անհատականացնող աշխարհագրական նշում այն գինիների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական նշմամբ տեղանքից կամ սպիրտային խմիչքներ անհատականացնող աշխարհագրական նշում այն սպիրտային խմիչքների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական նշմամբ տեղանքից, նույնիսկ եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» եւ այլ նման արտահայտությունների զուգակցմամբ:

4. Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել նաեւ այն նշանները, որոնք հակասում են հասարակության շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին, կամ անբարեխիղճ մրցակցության կանխման կանոններին (գործարար շրջանառության սովորություններին):

5. Սույն հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի պահանջները՝ ապրանքի արտադրության վայրի (աշխարհագրական նշման) մասով, սույն օրենքի 21 հոդվածի համաձայն գրանցվող կոլեկտիվ նշանների նկատմամբ չեն տարածվում:

Հոդված 12. Ապրանքային նշանի գրանցումը մերժելու այլ հիմքեր

1. Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են՝

ա) նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման

ներկայացված ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին.

բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող՝ այլ անձանց ապրանքային նշաններին.

գ) նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ համարվող ապրանքային նշաններին, որոնք որոշվում են Գերատեսչության կողմից.

դ) Հայաստանի Հանրապետության օրենքով պահպանվող ապրանքի ծագման տեղանվանը, բացառությամբ այն դեպքերի, երբ որպես չպահպանվող տարր այն ներառված է տեղանվան օգտագործման իրավունք ունեցող անձանց անունով գրանցված ապրանքային նշանի մեջ.

ե) սահմանված կարգով գրանցված հավաստագրային նշաններին:

2. Որպես ապրանքային նշան չեն գրանցվում նաև այն նշանները, որոնք վերարտադրում են՝

ա) Հայաստանի Հանրապետությունում հայտնի եւ այլ անձանց պատկանող ֆիրմային անվանումները (կամ դրանց մի մասը), եթե դրանց նկատմամբ իրավունքը նրանք ստացել են մինչեւ նույնատիպ ապրանքների համար ապրանքային նշանի հայտի ներկայացման թվականը.

բ) ավելի վաղ առաջնությամբ արդյունաբերական նմուշները, որոնց տնօրինման իրավունքը Հայաստանի Հանրապետությունում պատկանում է այլ անձանց.

գ) Հայաստանի Հանրապետությունում գիտության, գրականության, արվեստի հանրահայտ ստեղծագործությունների անվանումները կամ դրանցից մեջբերումները՝ առանց դրանց հեղինակների կամ նրանց ժառանգների համաձայնության.

դ) հռչակավոր անձանց անունները, ազգանունները, կեղծանունները եւ դրանցից ածանցյալները, դիմանկարները եւ ֆաքսիմիլները առանց այդ անձանց, նրանց ժառանգների կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրված թույլտվության:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի պահանջին համապատասխան ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու համար հաշվի է առնվում Փարիզյան կոնվենցիայի մասնակից որեւէ երկրում տվյալ ապրանքային նշանի բարեխիղճ օգտագործման կամ Հայաստանի Հանրապետությունում գովազդային գործունեության հետեւանքով, հասարակության համապատասխան շրջանակներին նրա հայտնի դառնալու հանգամանքը:

4. Սույն հոդվածի 1-ին կետի «ա»-«գ» ենթակետերի դրույթները տարածվում են նաեւ այն ապրանքային նշանների վրա, որոնք գրանցման

են ներկայացվել ոչ նույնատիպ ապրանքների համար, եթե դա կարող է սպառողին մոլորության մեջ գցել եւ պատճառ դառնալ այդ ապրանքների եւ գրանցված կամ առանց գրանցման պահպանվող կամ Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ համարվող ապրանքային նշանի սեփականատիրոջ միջեւ կապ ենթադրելու, հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

5. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն տարածվում գինիների անհատականացման նույնական աշխարհագրական նշանների նկատմամբ, եթե դրանք զուգակցված են համապատասխան տարբերակիչ լրացումներով, պայմանով, որ պահպանված են սույն օրենքի 11 հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի պահանջները:

Հոդված 13. Փորձաքննության որոշման բողոքարկումը եւ հայտատուի կողմից բաց թողնված ժամկետների վերականգնումը

1. Նախնական կամ կրկնական փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի դրա ստացման օրվանից երեք ամսվա ընթացքում բողոք ներկայացնել գերատեսչության բողոքարկման խորհուրդ (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ):

2. Բողոքարկման խորհուրդը բողոքը քննարկում է գերատեսչության կողմից հաստատված կարգով:

3. Նախնական կամ կրկնական փորձաքննության, կամ բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան:

4. Հայտատուն իրավունք ունի ծանոթանալու փորձաքննության որոշման մեջ նշված նյութերին: Որոշման ստացման օրվանից մեկ ամսվա ընթացքում հայտատուն կարող է պահանջել այդ նյութերի պատճենները:

5. Գերատեսչությունը սույն օրենքի 8 հոդվածի 3-րդ եւ 6-րդ կետերով եւ սույն հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված եւ հայտատուի կողմից բաց թողնված ժամկետը կարող է վերականգնել՝ դրա լրանալուց հետո երեք ամսվա ընթացքում, հայտատուի տված դիմումի համաձայն, սահմանված տուրքի վճարման դեպքում:

Հոդված 14. Ապրանքային նշանի գրանցումը

Գերատեսչությունը, ապրանքային նշանը գրանցելու մասին որոշման հիման վրա՝ սահման-

ված տուրքի վճարման անդորրագիրն ստանալուց հետո, մեկամսյա ժամկետում, ապրանքային նշանը գրանցում է ապրանքային նշանների գրանցման Հայաստանի Հանրապետության պետական մատյանում (այսուհետ մինչեւ սույն մասի ավարտը՝ գրանցամատյան): Գրանցամատյանում գրանցվում են ապրանքային նշանը, դրա սեփականատիրոջ մասին տեղեկությունները, ապրանքային նշանի առաջնության եւ գրանցման թվականները, այն ապրանքների ցանկը, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, եւ գերատեսչության կողմից հաստատված ցանկով այլ տեղեկություններ, ինչպես նաեւ դրանց հետագա փոփոխությունները:

Հոդված 15. Ապրանքային նշանի վկայագրի հանձնումը

Ապրանքային նշանի վկայագիրը հանձնում է գերատեսչությունը՝ գրանցամատյանում ապրանքային նշանի գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում: Վկայագրի ձեւը եւ դրանում նշվող տեղեկությունների ցանկը սահմանում է գերատեսչությունը:

Հոդված 16. Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը

1. Ապրանքային նշանի գրանցումը գործում է մինչեւ գերատեսչություն հայտ ներկայացնելու թվականից 10 տարին լրանալը:

2. Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը կարող է երկարաձգվել բազմակի անգամ՝ 10-ական տարի ժամկետով: Ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգվում է դրա սեփականատիրոջ դիմումի համաձայն, որը տրվում է գրանցման գործողության ընթացիկ ժամկետի վերջին տարվա ընթացքում:

3. Գրանցման գործողությունը կարող է երկարաձգվել նաեւ ապրանքային նշանի սեփականատիրոջ դիմումի համաձայն, որը տրվել է ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի ավարտից հետո 6 ամսվա ընթացքում՝ լրացուցիչ տուրք վճարելու դեպքում:

4. Գերատեսչությունն ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին նշում է կատարում գրանցամատյանում, իսկ դրա սեփականատիրոջ խնդրանքով՝ ապրանքային նշանի վկայագրում:

Հոդված 17. Գրանցամատյանում փոփոխություններ կատարելը

1. Ապրանքային նշանի սեփականատերն իր անվանման կամ ազգանվան, անվան եւ հայր-

անվան փոփոխման, այն ապրանքների ցանկի կրճատման, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, առանց ապրանքային նշանի էությունը փոփոխելու նրա առանձին տարրերի փոփոխման եւ ապրանքային նշանի գրանցմանը վերաբերող այլ փոփոխությունների մասին տեղեկացնում է գերատեսչությանը:

2. Գրանցամատյանում եւ ապրանքային նշանի վկայագրում փոփոխությունները կատարվում են ապրանքային նշանի սեփականատիրոջ դիմումի համաձայն՝ սահմանված տուրքի վճարման դեպքում:

Հոդված 18. Գրանցման մասին տեղեկությունների հրապարակումը

Գերատեսչությունն, ապրանքային նշանի գրանցմանը վերաբերող եւ սույն օրենքի 14 հոդվածով նախատեսված տեղեկությունները գրանցման օրվանից 3 ամսվա ընթացքում հրապարակում է իր պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 19. Ապրանքային նշանի գրանցումն օտարերկրյա պետություններում

1. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերն իրավունք ունեն ապրանքային նշանը գրանցել օտարերկրյա պետություններում կամ կատարելու դրա միջազգային գրանցում:

2. Ապրանքային նշանի միջազգային գրանցման հայտը ներկայացվում է Գերատեսչության միջոցով:

ԳԼՈՒԽ 3

Կոլեկտիվ նշան

Հոդված 20. Կոլեկտիվ նշանը

1. Կոլեկտիվ նշան է համարվում որեւէ տնտեսական ընկերակցության ապրանքային նշանը, որը նախատեսված է միասնական որակական կամ այլ ընդհանուր բնութագրեր ունեցող եւ իրենց կողմից արտադրվող եւ(կամ) իրացվող ապրանքները նշելու համար:

2. Կոլեկտիվ նշանը եւ դրա օգտագործման իրավունքը փոխանցման ենթակա չեն:

Հոդված 21. Կոլեկտիվ նշանի գրանցումը

1. Կոլեկտիվ նշանի գրանցման հայտին կցվում են՝ կոլեկտիվ նշանի կանոնադրությունը,

որը պարունակում է տնտեսական ընկերակցության անվանումը, կոլեկտիվ նշանն իր անունով գրանցելու լիազորված իրավաբանական անձի անվանումը, տվյալ նշանի օգտագործման իրավունքն ունեցող իրավաբանական անձանց ցուցակը, գրանցման նպատակը, կոլեկտիվ նշանով նշվող ապրանքների անվանացանկը եւ դրանց միասնական որակական կամ այլ ընդհանուր բնութագրերը, կոլեկտիվ նշանի օգտագործման պայմանները, օգտագործման վերահսկողության կարգը, պատասխանատվությունը՝ կոլեկտիվ նշանի կանոնադրության խախտման համար:

2. Ի լրումն սույն օրենքի 14 հոդվածով նախատեսված տեղեկությունների՝ գրանցամատյանում նշվում են նաեւ տեղեկություններ՝ կոլեկտիվ նշանի օգտագործման իրավունք ունեցող իրավաբանական անձանց մասին: Այդ տեղեկությունները, ինչպես նաեւ կանոնադրությունից քաղվածքը, միասնական որակական կամ այլ ընդհանուր բնութագրեր ունեցող այն ապրանքների մասին, որոնց համար գրանցված է տվյալ կոլեկտիվ նշանը, հրատարակվում են գերատեսչության պաշտոնական տեղեկագրում:

3. Կոլեկտիվ նշանի սեփականատերը տեղեկացնում է գերատեսչությանը կոլեկտիվ նշանի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4. Միասնական որակական կամ այլ ընդհանուր բնութագրեր չունեցող ապրանքների վրա կոլեկտիվ նշանի օգտագործման դեպքում, ցանկացած անձի դիմումի հիման վրա, դատարանի որոշմամբ, գրանցման գործողությունը կարող է դադարեցվել՝ վաղաժամկետ՝ ամբողջովին կամ մասնակիորեն:

5. Կոլեկտիվ նշանը կամ դրա հայտը, գերատեսչության կողմից սահմանված կարգով կարող է համապատասխանաբար փոխակերպվել իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ապրանքային նշանի կամ ապրանքային նշանի հայտի եւ հակառակը:

ԳԼՈՒԽ 4

Ապրանքային նշանի օգտագործումը

Հոդված 22. Ապրանքային նշանի օգտագործումը եւ այն չօգտագործելու հետեւանքները

1. Ապրանքային նշանի օգտագործում է համարվում դրա գետեղումն այն ապրանքների վրա, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, եւ(կամ) դրանց փաթեթավորման վրա:

2. Ապրանքային նշանի օգտագործում է համարվում նաեւ դրա կիրառումը գովազդներում, հրատարակություններում, ինչպես նաեւ պաշտոնական ձեւաթղթերում, ցուցանակներում, Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող ցու-

ցահանդեսներում եւ տոնավաճառներում ցուցանմուշները ցուցադրելիս միայն այն դեպքերում, երբ ապրանքների եւ /կամ/ դրանց փաթեթավորման վրա նշանի կիրառումն անհնար է:

3. Միջնորդական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը պայմանագրային հիմունքներով կարող են իրենց ապրանքային նշանն օգտագործել ապրանքն արտադրողի ապրանքային նշանի հետ համատեղ կամ դրա փոխարեն:

4. Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, դատարանի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից կամ դիմումին նախորդող 5 տարվա ընթացքում ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ սույն օրենքի 26 հոդվածի համաձայն, լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից այն անընդհատորեն չի օգտագործվել:

5. Ապրանքային նշանի գրանցման գործողությունը չի կարող դադարեցվել բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե՝

ա) ապրանքային նշանի սեփականատերը կամ այն օգտագործելու իրավունք ունեցող անձը փաստարկներ է ներկայացնում, որ նշանի օգտագործումը պայմանավորված է իրենից անկախ, անհաղթահարելի, չնախատեսված հանգամանքներով:

բ) ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ այն օգտագործելու իրավունք ունեցող անձի կողմից ապրանքային նշանն օգտագործվել է այնպիսի ձևով, որը տարբերվում է գրանցվածից դրա տարբերակիչ բնույթը չփոփոխող միայն առանձին տարրերով:

գ) ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում գետեղվել է ապրանքների եւ(կամ) դրանց փաթեթավորման վրա բացառապես արտահանման նպատակով:

6. Դեղագործական, սննդամթերքի եւ արդյունաբերական որոշ ապրանքներ ու տեսակներ, ինչպես նաեւ ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային խմիչքներն ու ընպելիքները պետք է մակնշվեն գրանցված ապրանքային նշաններով: Այդ ապրանքների լրիվ ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 23. Ապրանքային նշանի սեփականատիրոջ իրավունքների սահմանափակումները

1. Ապրանքային նշանի սեփականատերն իրավունք չունի երրորդ անձանց արգելել առեւ-

տրային գործունեության ընթացքում օգտագործել՝ ա) իրենց անվանումը (անունը, կեղծանունը) կամ հասցեն:

բ) ապրանքի տեսակը, որակը, քանակը, արժեքը, ստեղծման (մատուցման) նպատակը եւ այլ հատկությունները, ինչպես նաեւ ապրանքի արտադրության եւ իրացման (մատուցման) տեղն ու ժամանակը բնորոշող նշանները:

գ) ապրանքային նշանը, եթե դա անհրաժեշտ է ապրանքի ստեղծման (մատուցման) նպատակը նշելու համար, մասնավորապես՝ որպես օժանդակ կամ պահեստային մասեր՝ եթե դրանք բոլորն օգտագործվում են առանց ապրանքային նշանի սեփականատիրոջ եւ երրորդ անձանց օրինական շահերին վնաս պատճառելու եւ սպառողին մոլորության մեջ գցելու:

2. Գրանցված ապրանքային նշանի սեփականատերն իրավունք չունի արգելելու այլ անձանց կողմից տվյալ նշանի օգտագործումն այն ապրանքների նկատմամբ, որոնք այդ նշանով տնտեսական շրջանառության մեջ են դրվել որեւէ երկրում՝ նշանի սեփականատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ, եթե այդ ապրանքների բնութագրերը շուկայավարման ընթացքում բնականոն կերպով կամ միջամտությամբ փոփոխության չեն ենթարկվել:

Հոդված 24. Նախազգուշական գրառումը

Ապրանքային նշանի սեփականատերը կարող է դրա կողքին գետեղել Հայաստանի Հանրապետությունում տվյալ ապրանքային նշանի գրանցված լինելը վկայող նախազգուշական գրառում՝ շրջանագծի մեջ ներառված ® կամ առանձին լատիներեն R տառի, ինչպես նաեւ «ապրանքային նշան» կամ «գրանցված ապրանքային նշան» արտահայտությունների տեսքով:

ԳԼՈՒԽ 5

Ապրանքային նշանի փոխանցումը

Հոդված 25. Ապրանքային նշանի զիջումը

Ապրանքային նշանը պայմանագրով կարող է զիջվել այլ անձանց՝ բոլոր այն ապրանքների կամ նրանց մի մասի համար, որոնք նշված են ապրանքային նշանի վկայագրում: Ապրանքային նշանը զիջել չի թույլատրվում, եթե այն կարող է սպառողին մոլորության մեջ գցելու պատճառ դառնալ՝ ապրանքին կամ դրա արտադրողին վերաբերող հարցերում:

Հոդված 26. Ապրանքային նշանի օգտագործման թույլտվությունը

1. Ապրանքային նշանի սեփականատերը (լիցենզատու) լիցենզային պայմանագրի հիման վրա կարող է այլ անձի (լիցենզառու) տալ ապրանքային նշանի օգտագործման թույլտվությունը:

2. Լիցենզային պայմանագրում պետք է նշվի, որ լիցենզառուի ապրանքը որակապես չպետք է զիջի լիցենզատուի ապրանքին, եւ վերջինս վերահսկողություն պետք է իրականացնի այդ պահանջի կատարման նկատմամբ:

3. Ապրանքային նշանի օգտագործման թույլտվություն չի տրվում, եթե դա կարող է սպառողին մոլորության մեջ գցելու պատճառ դառնալ՝ ապրանքի արտադրության վայրին վերաբերող հարցում:

Հոդված 27. Ապրանքային նշանի զիջման եւ լիցենզային պայմանագրերի գրանցումը

Ապրանքային նշանի զիջման եւ լիցենզային պայմանագրերը գրանցվում են գերատեսչությունում: Չգրանցված պայմանագիրը համարվում է անվավեր:

ԳԼՈՒԽ 6

Ապրանքային նշանի իրավական պահպանության դադարեցումը

Հոդված 28. Ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելը

1. Ապրանքային նշանի գրանցումը դրա գործողության ամբողջ ժամկետի ընթացքում կարող է ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչվել, եթե այն կատարվել է սույն օրենքի 3 եւ 11 հոդվածներով սահմանված պահանջների խախտմամբ կամ օգտագործվել է անբարեխիղճ, մասնավորապես՝ Փարիզյան կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրվանից 5 տարվա ընթացքում՝ սույն օրենքի 12 հոդվածի պահանջներից ելնելով:

2. Ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու մասին բողոքը կարող է բողոքարկման խորհուրդ ներկայացնել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ: Բողոքարկման խորհուրդը բողոքը քննարկում է գերատեսչության կողմից հաստատված կարգով:

3. Բողոքարկման խորհրդի որոշումը դրա

ընդունման օրվանից 6-ամսյա ժամկետում կարող է վիճարկվել դատական կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումն ամբողջովին կամ մասնակիորեն կարող է ճանաչվել անվավեր նաեւ գերատեսչության նախաձեռնությամբ՝ իր կողմից հաստատված կարգով:

Հոդված 29. Ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելը եւ կրկնական գրանցումը

1. Գերատեսչությունն ապրանքային նշանի գրանցումը չեղյալ է հայտարարում հետևյալ դեպքերում՝

ա) ավարտվել է սույն օրենքի 16 հոդվածով նախատեսված՝ ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը:

բ) սույն օրենքի 21 հոդվածի 4-րդ կետի համաձայն, դատարանի որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել է կոլեկտիվ նշանի գրանցումը՝ միասնական որակական կամ այլ ընդհանուր բնութագրեր չունեցող ապրանքների վրա կոլեկտիվ նշանն օգտագործելու պատճառով:

գ) սույն օրենքի 22 հոդվածի 4-րդ կետի համաձայն, դատարանի որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել է ապրանքային նշանի գործողությունը՝ ապրանքային նշանի չօգտագործման պատճառով:

դ) ապրանքային նշանի գրանցումը ճանաչվել է անվավեր՝ սույն օրենքի 28 հոդվածի համաձայն:

ե) լուծարվել է ապրանքային նշանի սեփականատերը:

զ) ցանկացած անձի դիմումի համաձայն՝ դատարանի որոշմամբ ապրանքային նշանը ճանաչվել է որոշակի տեսակի ապրանքների նշան վերածված եւ, համընդհանուր կիրառում ստացած նշան:

է) ապրանքային նշանին նույնական կամ շփոթելու աստիճան նման ապրանքի ծագման տեղանուն գրանցելու կապակցությամբ, հաշվի առնելով սույն օրենքի 41 հոդվածի 7-րդ կետի պահանջը:

ը) ապրանքային նշանից հրաժարվել է դրա սեփականատերը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու դեպքում (բացառությամբ «դ» ենթակետում նշվածի) գրանցման գործողության դադարեցման օրվանից երեք տարվա ընթացքում ապրանքային նշանը նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդից բացի այլ անձանց անունով չի կարող գրանցվել:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ապրանքի ծագման տեղանունը

ԳԼՈՒԽ 7

Ապրանքի ծագման տեղանունը եւ դրա իրավական պահպանությունը

Հոդված 30. Ապրանքի ծագման տեղանունը

1. Ապրանքի ծագման տեղանունը (այսուհետ՝ տեղանուն) երկրի, բնակավայրի, տեղանքի կամ աշխարհագրական այլ օբյեկտի (այսուհետ՝ աշխարհագրական օբյեկտ) անվանումն է, որն օգտագործվում է այն ապրանքի նշանն համար, որի առանձնահատկությունները բացառապես կամ գլխավորապես որոշվում են տվյալ աշխարհագրական տեղանքին բնորոշ բնապայմաններով եւ (կամ) մարդկային գործունեությամբ:

2. Տեղանունը կարող է լինել աշխարհագրական օբյեկտի պատմական անվանում:

3. Տեղանուն չի համարվում այն անվանումը, որը լինելով կամ իր մեջ բովանդակելով աշխարհագրական օբյեկտի անվանում, Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր գործածության մեջ է մտել որպես արտադրության տեղի հետ չկապված որոշակի տեսակի ապրանքի արտահայտչամիջոց:

Հոդված 31. Տեղանվան իրավական պահպանությունը

1. Հայաստանի Հանրապետությունում տեղանվան իրավական պահպանությունը իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով՝ դրա գրանցման հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

2. Տեղանունը պահպանվում է օրենքով:

3. Տեղանունը կարող են գրանցման ներկայացնել՝

ա) մեկ կամ մի քանի իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ովքեր հայտում նշված տեղանքում արտադրում են տվյալ ապրանքը:

բ) սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները:

գ) տվյալ ապրանքի արտադրությանն առնչություն ունեցող այլ իրավասու մարմիններ:

4. Տեղանունը գրանցման ներկայացրած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերն իրավունք է ստանում օգտագործել այն, եթե

նրա կողմից արտադրվող ապրանքը համապատասխանում է սույն օրենքի 30 հոդվածի 1-ին կետի պահանջներին:

5. Սահմանված կարգով գրանցված տեղանվան օգտագործման իրավունքը կարող է տրվել նույն աշխարհագրական տեղանքում նույն հատկանիշներով ապրանք արտադրող ցանկացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ:

6. Տեղանվան գրանցումը գործում է անժամկետ:

7. Որպես ապրանքի ծագման տեղանուն իրավական պահպանության ենթակա չէ այն անվանումը, որը լինելով ապրանքի իրական ծագման աշխարհագրական օբյեկտի անվանում, սպառողին տալիս է կեղծ պատկերացում այն մասին, իբրև ապրանք ծագել է մեկ այլ նույնանուն աշխարհագրական օբյեկտից:

8. Գինիների անհատականացման նույնանուն աշխարհագրական նշումների դեպքում դրանցից յուրաքանչյուրին տրվում է իրավական պահպանություն, եթե դրանք պարունակում են համապատասխան տարբերակիչ լրացումներ, պայմանով, որ կապահպանվեն սույն հոդվածի 6-րդ կետի դրույթները եւ արտադրողների արդարացի շահերը:

ԳԼՈՒԽ 8

Տեղանվան գրանցումը եւ օգտագործման իրավունքի ընձեռումը

Հոդված 32. Տեղանվան գրանցման եւ օգտագործման իրավունքի հայտը

1. Տեղանվան գրանցման եւ (կամ) օգտագործման իրավունքի հայտը (այսուհետ՝ հայտ) գերատեսչություն են ներկայացնում սույն օրենքի 31 հոդվածի 3-րդ կետում նշված իրավաբանական անձինք եւ (կամ) անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հայտատու):

2. Հայտը կարող է ներկայացվել սույն օրենքի 6 հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով՝ 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Հայտը պետք է վերաբերի մեկ տեղանվան եւ պարունակի՝

ա) դիմում տեղանվան գրանցման եւ (կամ) օգտագործման իրավունքի ընձեռման մասին, որում նշվում են հայտատուն և նրա գտնվելու կամ բնակության վայրը:

բ) հայտարկվող տեղանունը:

գ) այն ապրանքի նշումը, որի համար խնդրարկվում է տեղանվան գրանցումը եւ (կամ)

օգտագործման իրավունքի ընձեռումը՝ նշելով ապրանքի արտադրման վայրի (աշխարհագրական օբյեկտի) անվանումը:

դ) փաստաթղթեր, որոնք հստակ նույնականացնում են աշխարհագրական օբյեկտի սահմանները, որի նկատմամբ կիրառվում է տեղանունը.

ե) ապրանքի (անհրաժեշտության դեպքում՝ նաեւ հումքանյութի) յուրահատկությունների նկարագրությունը (հիմնական ֆիզիկական, քիմիական, մանրէաբանական եւ (կամ) օրգանոլեպտիկ բնութագրերը).

զ) անհրաժեշտության դեպքում՝ ապրանքի արտադրության տեղական յուրահատուկ եղանակի նկարագրությունը.

7) տեղանվան հետ կապված յուրահատուկ մակնշման մանրամասներ:

4. Հայտին կցվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության հայտատուների համար՝ տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմնից այն մասին, որ հայտատուն գտնվում է նշված աշխարհագրական օբյեկտում եւ արտադրում է ապրանք, որի առանձնահատկությունները որոշվում են տվյալ աշխարհագրական օբյեկտին բնորոշ բնապայմաններով եւ (կամ) մարդկային գործունեքով (սույն օրենքի 31 հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետում նշված հայտատուների համար).

բ) օտարերկրյա հայտատուների համար՝ ապրանքի ծագման երկրում տեղանվան օգտագործման իր իրավունքը հաստատող փաստաթուղթը.

գ) հայտ ներկայացնելու եւ փորձաքննություն անցկացնելու համար սահմանված չափով տուրքի վճարման անդորրագիրը.

դ) արտոնագրային հավատարմատարի իրավասությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագիրը), եթե հայտը ներկայացվում է արտոնագրային հավատարմատարի միջոցով:

5. Հայտը ներկայացվում է հայերեն: Հայտին կցվող փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով: Այդ դեպքում Հայաստանի Հանրապետության հայտատուները պարտավոր են դրանց հայերեն թարգմանությունը ներկայացնել հայտի հետ, իսկ օտարերկրյա հայտատուները՝ հայտը ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

6. Հայտի փաստաթղթերի նկատմամբ պահանջները սահմանում է գերատեսչությունը:

Հոդված 33. Հայտի փորձաքննությունը

1. Հայտի փորձաքննությունը, որը ներառում է նախնական եւ հայտարկված տեղանվան փորձաքննությունները, իրականացնում է գերատեսչությունը:

2. Գերատեսչություն հայտ ներկայացնելու օրվանից, մինչեւ դրա վերաբերյալ որոշման ընդունումը, հայտատուն իրավունք ունի իր նախաձեռնությամբ լրացումներ, ճշգրտումներ եւ ուղղումներ կատարել հայտի նյութերում:

3. Եթե լրացուցիչ նյութերը փոփոխում են գրանցման ներկայացված տեղանունն ըստ էության, ապա այդ նյութերը քննարկման չեն ընդունվում եւ կարող են հայտատուի կողմից ձեւակերպվել որպես ինքնուրույն հայտ:

4. Փորձաքննության ընթացքում գերատեսչությունը կարող է հայտատուից պահանջել լրացուցիչ նյութեր, առանց որոնց փորձաքննության անցկացումն անհնար է: Լրացուցիչ նյութերը պետք է ներկայացվեն հարցումն ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Հայտատուի խնդրանքով նշված ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 6 ամսով, եթե ժամկետի երկարաձգման մասին դիմումն ստացվել է մինչեւ վերոհիշյալ երկամսյա ժամկետի ավարտը: Սահմանված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում հայտը համարվում է հետկանչված:

6. Հայտի նախնական փորձաքննությունն անցկացվում է գերատեսչություն հայտ ներկայացնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան հարցում ուղարկելու դեպքում նշված ժամկետի ընթացքը դադարեցվում է մինչեւ պատասխան ստանալը:

7. Նախնական փորձաքննության ընթացքում ստուգվում են հայտի կազմը, անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, ինչպես նաեւ դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին: Նախնական փորձաքննության արդյունքների հիման վրա հայտատուն ծանուցվում է հայտը քննարկման ընդունելու կամ չընդունելու մասին:

8. Քննարկման ընդունված հայտով անցկացվում է հայտարկված տեղանվան փորձաքննություն, որի ընթացքում ստուգվում է դրա համապատասխանությունը սույն օրենքի 30 հոդվածով սահմանված պահանջներին:

9. Փորձաքննությունից հետո գերատեսչությունը որոշում է ընդունում տեղանվան գրանցման եւ օգտագործման իրավունք տալու, կամ տեղանվան գրանցումը մերժելու եւ դրա օգտագործման իրավունք չտալու, կամ արդեն գրանցված տեղանվան օգտագործման իրավունք տալու կամ չտալու մասին:

10. Փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուն կարող է դիմում ներկայացնել կրկնական փորձաքննություն անցկացնելու խնդրանքով՝ բերելով հիմնավոր փաստարկներ:

11. Նշված ժամկետը հայտատուի խնդ-

րանքով կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 6 ամսով, եթե ժամկետի երկարաձգման մասին դիմումն ստացվել է մինչև վերոհիշյալ երկամսյա ժամկետի ավարտը:

12. Հայտատուի խնդրանքով հայտը կարող է հետ կանչվել փորձաքննության ցանկացած փուլում:

Հոդված 34. Փորձաքննության որոշման բողոքարկումը եւ հայտատուի կողմից բաց թողնված ժամկետների վերականգնումը

1. Նախնական կամ կրկնական փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի դրա ստացման օրվանից երեք ամսվա ընթացքում բողոք ներկայացնել բողոքարկման խորհուրդ: Բողոքարկման խորհուրդը բողոքը քննարկում է գերատեսչության կողմից հաստատված կարգով:

2. Նախնական կամ կրկնական փորձաքննության որոշմանը կամ բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան:

Գերատեսչությունը սույն օրենքի 33 հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերով եւ սույն հոդվածի առաջին կետով նախատեսված եւ հայտատուի կողմից բաց թողնված ժամկետը կարող է վերականգնել դրա լրանալուց հետո երեք ամսվա ընթացքում, հայտատուի տված դիմումի համաձայն, սահմանված տուրքի վճարման դեպքում:

Հոդված 35. Տեղանվան գրանցումը մերժելու հիմքերը

Որպես ապրանքի ծագման տեղանուն չի կարող գրանցվել այն անվանումը, որը՝

ա) գրանցման է ներկայացվել ոչ իրավասու անձանց կողմից:

բ) չի համապատասխանում սույն օրենքի 30 հոդվածի պահանջներին:

գ) նույնական կամ շփոթելու աստիճանն ունի է նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված տեղանվանը:

դ) հակասում է հասարակական շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին կամ բարեխիղճ մրցակցության (գործարար շրջանառության) սովորություններին:

ե) կարող է խախտել այլ երրորդ անձանց իրավունքները (հեղինակային իրավունք, արդյունաբերական սեփականության նկատմամբ իրավունք եւ այլն):

զ) չի պահպանվում պահպանությունը դադարեցվել է կամ գործածությունը չի թույլատրվում ծագման երկրում:

է) մոլորության մեջ է գցում, մասնավորապես ապրանքի բնույթի, որակի կամ աշխարհագրական ծագման վերաբերյալ, նույնիսկ երբ տեղանունը բառացիորեն հավաստի է ապրանքի ծագման աշխարհագրական տեղանքի իմաստով (նույնանուն տեղանունների դեպքում), բայց սպառողին տալիս է կեղծ պատկերացում, իբրեւ ապրանքը ծագում է այլ աշխարհագրական տեղանքից:

Նույնանուն անվանումների դեպքում, տեղանունը կարող է գրանցվել, եթե ապրանքի մակնիշի վրա պարզ եւ տեսանելի արտահայտված է սպառողին մոլորեցնելը բացառող որեւէ տարբերակիչ տարր, օրինակ՝ ծագման երկրի կամ շրջանի անունը:

Հոդված 36. Տեղանվան գրանցումը եւ օգտագործման իրավունքի վկայագրի հանձնումը

1. Գերատեսչությունը, տեղանունը գրանցելու մասին որոշման հիման վրա, սահմանված տուրքի վճարման անդորրագիրն ստանալուց հետո, մեկ ամսվա ընթացքում տեղանունը գրանցում է ապրանքների ծագման տեղանունների գրանցման Հայաստանի Հանրապետության պետական մատյանում (այսուհետ՝ գրանցամատյան): Գրանցամատյանում գրանցվում են տեղանունը, դրա օգտագործման իրավունքի վկայագրի (այսուհետ՝ վկայագիր) սեփականատիրոջ մասին տեղեկություններ, այն ապրանքի նշումը, որի համար գրանցված է տվյալ տեղանունը, դրա առանձնահատկությունների նկարագրությունը և գերատեսչության կողմից սահմանված ցանկով այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են տեղանվան գրանցմանը եւ օգտագործման իրավունք տալուն, ինչպես նաեւ այդ տեղեկությունների հետագա փոփոխությունները:

2. Վկայագիրը հանձնում է գերատեսչությունը՝ տեղանվան գրանցամատյանում գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

3. Վկայագրի ձեւը եւ դրանում նշվող տեղեկությունների ցանկը սահմանում է գերատեսչությունը:

Հոդված 37. Տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը

1. Վկայագիրը գործում է մինչեւ գերատեսչությունը հայտ ներկայացնելու թվականից 10 տարին լրանալը:

2. Վկայագրի գործողության ժամկետը, դրա սեփականատիրոջ դիմումի համաձայն, կարող է երկարաձգվել բազմակի անգամ՝ 10-ական տարի ժամկետով, եթե դիմումին կից ներկայացվել է տվյալ աշխարհագրական տեղանքում վկայագրի սեփականատիրոջ գտնվելու եւ վկայագրում նշված հատկություններով ապրանք արտադրելու մասին համապատասխան իրավասու մարմինների տեղեկանքները: Վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումը տրվում է դրա գործողության ընթացիկ ժամկետի վերջին տարվա ընթացքում:

3. Վկայագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել նաեւ դրա սեփականատիրոջ դիմումի համաձայն, որը տրվել է վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո 6 ամսվա ընթացքում լրացուցիչ տուրք վճարելու դեպքում:

4. Գերատեսչությունը վկայագրի գործողության ժամկետի երկարաձգման մասին նշում է կատարում գրանցամատյանում, իսկ վկայագրի սեփականատիրոջ խնդրանքով՝ վկայագրում:

Հոդված 38. Գրանցամատյանում փոփոխություններ կատարելը

1. Վկայագրի սեփականատերն իր անվանման կամ ազգանվան, անվան եւ հայրանվան փոփոխության, ինչպես նաեւ տեղանվան գրանցման եւ օգտագործման իրավունքի վերաբերյալ փոփոխությունների մասին տեղեկացնում է գերատեսչությանը:

2. Գրանցամատյանում եւ վկայագրում փոփոխությունները կատարվում են վկայագրի սեփականատիրոջ դիմումի համաձայն՝ սահմանված տուրքի վճարման դեպքում:

Հոդված 39. Տեղանվան գրանցման եւ օգտագործման իրավունք տալու մասին տեղեկությունների հրապարակումը

Գերատեսչությունը տեղանվանը վերաբերող եւ սույն օրենքի 36 հոդվածին համապատասխան գրանցամատյանում գրանցված տեղեկությունները (բացառությամբ ապրանքի առանձնահատկություններին վերաբերող տեղեկությունների) գրանցման օրվանից 3 ամսվա ընթացքում հրապարակում է իր պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 40. Տեղանվան գրանցումն օտարերկրյա պետություններում

1. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատեր

ներն իրավունք ունեն տեղանունը գրանցելու օտարերկրյա պետություններում:

2. Օտարերկրյա պետություններում տեղանվան գրանցման հայտը ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում այն գրանցելուց եւ օգտագործման իրավունք ստանալուց հետո:

ԳԼՈՒԽ 9

Տեղանվան օգտագործումը

Հոդված 41. Տեղանվան օգտագործումը

1. Տեղանվան օգտագործում է համարվում դրա կիրառումն ապրանքի եւ փաթեթավորման վրա, զովագրումում, ազդագրերում, հաշիվներում, ձեւաթղթերում, ինչպես նաեւ ապրանքը տնտեսական շրջանառության մեջ մտցնելու հետ կապված այլ փաստաթղթերում:

2. Հի թույլատրվում տեղանվան ցանկացած օգտագործում, որը Փարիզյան կոնվենցիայի 10bis հոդվածի համաձայն, կարող է որակվել որպես անբարեխիղճ մրցակցության ակտ:

3. Հի թույլատրվում ապրանքների նշան կամ ներկայացման համար օգտագործել որեւէ միջոց, որը մատնանշում է կամ սպառողի մոտ ենթադրություն է առաջացնում այն մասին, իբր տվյալ ապրանքը ծագել է այլ աշխարհագրական օբյեկտից, քան դրա ծագման իրական աշխարհագրական օբյեկտն է:

4. Հի թույլատրվում գրանցված տեղանվան օգտագործումը համապատասխան վկայագիր չունեցող անձանց կողմից, եթե նույնիսկ նշվում է ապրանքի ծագման ճշգրիտ վայրը, կամ տեղանունն օգտագործվում է թարգմանաբար կամ այնպիսի արտահայտությունների զուգակցմամբ, ինչպիսիք են «տեսակ», «տիպ», «նմանակում» եւ այլն, ինչպես նաեւ ապրանքի ծագման տեղի եւ առանձնահատկությունների մասին սպառողներին մոլորության մեջ գցելու ընդունակ համանման նշանի օգտագործումը ցանկացած ապրանքի համար:

5. Նույնանուն անվանումների դեպքում, ապրանքի ծագման տեղանունը կարող է օգտագործվել, եթե այն զուգակցված է պարզ եւ տեսանելի արտահայտված, սպառողին մոլորեցնելը բացառող որեւէ տարբերակիչ տարրով, օրինակ՝ ծագման երկրի կամ շրջանի անվանմամբ:

6. Ցանկացած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր իրավունք ունի առեւտրային գործունեության ընթացքում օգտագործել՝

ա) գրանցված տեղանունն այն ապրանքների նկատմամբ, որոնք տնտեսական շրջանառության մեջ են դրվել որեւէ երկրում տեղանուն

օգտագործելու վկայագիր ունեցող անձի կողմից, եթե այդ ապրանքների բնութագրերը շուկայավարման ընթացքում բնականոն կերպով կամ միջամտությամբ չեն փոփոխվել:

բ) իր անունը կամ իր գործարարական իրավանախորդի անունը կամ հասցեն, եթե դա չի մոլորեցնում հասարակությանը՝ ապրանքի աշխարհագրական ծագման հարցում:

7. Հայաստանի Հանրապետությունում տեղանվան գրանցման օրվանից երեք տարվա ընթացքում այն կարող է օգտագործվել դրա հետ նույնական կամ շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի սեփականատիրոջ կողմից, եթե դա գրանցվել է տեղանունը գրանցելու օրվանից ոչ պակաս, քան 6 ամիս առաջ: Նշված ժամանակահատվածում ցանկացած անձ իրավունք ունի առևտրային գործունեության ընթացքում օգտագործելու գրանցված տեղանունն այն ապրանքների նկատմամբ, որոնք տնտեսական շրջանառության մեջ են դրվել որեւիցե երկրում նշված ապրանքային նշանի սեփականատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ, եթե այդ ապրանքների բնութագրերը շուկայի հետազոտման (մարքեթինգի) ընթացքում բնականոն կերպով կամ միջամտությամբ չեն փոփոխվել:

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության կամ գտնվելու վայր ունեցող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, որոնք ապրանքների եւ ծառայությունների հետ կապված գինիներ կամ սպիրտային խմիչքներ անհատականացնող այլ երկրի աշխարհագրական նշումները Հայաստանի Հանրապետությունում օգտագործել են՝

ա) անընդհատ՝ 1994թվականի ապրիլի 15-ին նախորդող առնվազն 10 տարվա ընթացքում, կամ

բ) բարեխիղճ կերպով՝ մինչեւ 1994թվականի ապրիլի 15-ը, իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում նույնատիպ ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ շարունակել կամ նման կերպ օգտագործել տվյալ աշխարհագրական նշումները:

9. Այլ երկրի աշխարհագրական նշում պարունակող, խաղողագործության արտադրանքների, այդ թվում՝ գինիների համար նախատեսված, եւ մինչեւ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության տարածքում իրավական պահպանություն ստացած աշխարհագրական նշումներ օրինական կարգով կամ բարեխիղճ կերպով օգտագործող անձանց, իրավունք է տրվում շարունակել տվյալ աշխարհագրական նշան օգտագործումը, եթե այն նույնական է Հայաստանի Հանրապետության տարածքում աճող խաղողի տարատեսակի սովորական անվանմանը:

10. Ապրանքի ծագման տեղանվանը նման կամ նույնական ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները շարունակում են պահպանվել, եթե վերջինս բարեխիղճորեն գրանցման է ներկայացվել կամ գրանցվել է՝

ա) մինչեւ Հայաստանի Հանրապետությունում Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Առևտրին վերաբերող մտավոր սեփականության իրավունքների ասպեկտների մասին (TRIPs) համաձայնագրի դրույթների կիրառման թվականը, կամ

բ) մինչեւ այդ տեղանվան պահպանություն ձեռք բերելը իր ծագման երկրում:

11. Սույն օրենքի 31 հոդվածի 3-րդ կետում նշված իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, կազմակերպությունների եւ իրավասու մարմինների պահանջները ապրանքային նշանի օգտագործման կամ գրանցման վերաբերյալ պետք է ներկայացվեն պահպանվող տեղանվան անօրինական օգտագործման մասին Հայաստանի Հանրապետությունում լայնորեն հայտնի դառնալուց 5 տարվա ընթացքում, պայմանով որ այդ անվանումը գրանցվել է բարեխիղճորեն:

12. Վկայագրի սեփականատերն իրավունք չունի տեղանվան օգտագործման իրավունքը փոխանցել այլ անձանց:

Հոդված 42. Նախագուշակյան գրառում

Վկայագրի սեփականատերը կարող է տեղանվան կողքին զետեղել Հայաստանի Հանրապետությունում տվյալ տեղանվան գրանցված լիցենզի վկայող նախագուշակյան գրառում «գրանցված ապրանքի ծագման տեղանուն» կամ «գրանց. ԱԾՏ» արտահայտությունների տեսքով:

ԳԼՈՒԽ 10

Տեղանվան իրավական պահպանության դադարեցումը

Հոդված 43. Տեղանվան գրանցման եւ օգտագործման իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելը

1. Տեղանվան գրանցումը կարող է անվավեր ճանաչվել, եթե դա կատարվել է սույն օրենքով սահմանված պահանջների խախտմամբ:

2. Վկայագիրը կարող է անվավեր ճանաչվել, եթե այն տրվել է սույն օրենքով սահմանված պահանջների խախտմամբ:

3. Ցանկացած անձ սույն օրենքի 30, 31

եւ 35 հողվածներում նշված հիմքերով կարող է բողոք ներկայացնել բողոքարկման խորհուրդ կամ դատարան՝ տեղանվան գրանցման եւ տեղանվան օգտագործման իրավունքի վկայագիր տալու դեմ: Բողոքարկման խորհուրդը բողոքը քննարկում է գերատեսչության կողմից հաստատված կարգով:

4. Բողոքարկման խորհրդի որոշումը, այն ստանալու օրվանից 6 ամսվա ընթացքում, կարող է վիճարկվել դատական կարգով:

Հոդված 44. Տեղանվան գրանցումը եւ օգտագործման իրավունքի վկայագրի գործողությունն ուժը կորցրած ճանաչելը

1. Գերատեսչությունը տեղանվան գրանցման գործողությունն ուժը կորցրած է ճանաչում, եթե՝

ա) տեղանվան գրանցումը անվավեր է ճանաչվել սույն օրենքի 43 հոդվածի համաձայն:

բ) վերացել են տվյալ աշխարհագրական տեղանքին բնորոշ պայմանները եւ անհնար է դարձել պետական գրանցամատյանում նշված հատկություններով ապրանքի արտադրությունը:

Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս ապրող անհատ ձեռնարկատերերի եւ օտարերկրյա իրավաբանական անձանց անունով տեղանվան գրանցումը, բացի նշված հիմքերից, ուժը կորցրած է ճանաչվում նաեւ ապրանքի ծագման երկրում նրանց կողմից տվյալ անվանման օգտագործման իրավունքը կորցնելու դեպքում:

2. Գերատեսչությունը տեղանվան վկայագիրն ուժը կորցրած է ճանաչում, եթե՝

ա) այն անվավեր է ճանաչվել սույն օրենքի 43 հոդվածի համաձայն:

բ) ապրանքը կորցրել է գրանցամատյանում նշված առանձնահատկությունները:

գ) տեղանվան գրանցման գործողությունն ուժը կորցրած է ճանաչվել սույն հոդվածի 1-ին կետի համաձայն:

դ) լուծարվել է վկայագրի սեփականատերը:

ե) վկայագրի սեփականատերը վկայագրից հրաժարվելու մասին դիմում է ներկայացրել գերատեսչություն:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 45. Պետական տուրքերը

Ապրանքային նշանի գրանցման, տեղան-

վան գրանցման կամ օգտագործման իրավունքի վկայագրի հայտ ներկայացնելու, ինչպես նաեւ դրանց հետ կապված այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվում են տուրքեր, որոնց տեսակները, չափերն ու վճարման կարգը սահմանվում են օրենքով:

Հոդված 46. Սույն օրենքի կիրառման հետ կապված վեճերի լուծումը

Դատական կարգով լուծվում են սույն օրենքի կիրառման հետ կապված վեճերը, այդ թվում այն վեճերը, որոնք վերաբերում են՝

ա) ապրանքային նշանի բացառիկ իրավունքի խախտմանը:

բ) լիցենզային պայմանագրի կնքմանը եւ կատարմանը, ինչպես նաեւ ապրանքային նշանի գիշման պայմանագրին:

գ) տեղանվան ապօրինի օգտագործմանը:

Հոդված 47. Ապրանքային նշանի եւ տեղանվան ապօրինի օգտագործման համար պատասխանատվությունը

1. Ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի, ինչպես նաեւ տեղանվան կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի օգտագործումը, որը հակասում է սույն օրենքի 4 եւ 41 հոդվածների պահանջներին, առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Ապրանքային նշանի ապօրինի օգտագործման դեպքում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, բացի ապօրինի օգտագործման դադարեցման եւ վնասների փոխհատուցման պահանջից, իրականացվում է նաեւ հետեւյալ եղանակներով՝

ա) խախտողի կողմից դատարանի որոշման հրապարակումով՝ տուժածի հեղինակությունը վերականգնելու նպատակով:

բ) ապօրինի օգտագործվող ապրանքային նշանը կամ դրան շփոթելու աստիճան նման նշանն ապրանքից կամ նրա փաթեթավորումից այնպիսի եղանակով հանելով, որը կբացառի ապրանքի կամ նրա փաթեթավորման վրա այն նորից գետեղելու վտանգը:

գ) ոչնչացնելով ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի պատկերները:

դ) սույն կետի «բ» և «գ» ենթակետերում նախատեսված եղանակների իրականացման անհնարինության դեպքում, բացառելով ապրանքային նշանի սեփականատիրոջը հետագայում որեւէ վնաս պատճառելու հնարավորությունը՝ առանց

որելից փոխհատուցման առգրավելով կամ ոչնչացնելով նաեւ ապօրինի ապրանքային նշանով մակնշված ապրանքը եւ(կամ) փաթեթը:

3. Գրանցված տեղանունը կամ դրան շփոթելու աստիճան նման նշանն ապօրինի օգտագործող անձն ապրանքների ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի սեփականատիրոջ, հասարակական կազմակերպության պահանջով պարտավոր է՝

ա) դադարեցնել դրա օգտագործումը եւ բոլոր տուժածներին փոխհատուցել հասցված վնասները, ինչպես նաեւ տեղական բյուջե մուծել տեղանվան ապօրինի օգտագործումից ստացված շահույթից վնասների հատուցումը գերազանցող գումարը:

բ) հրապարակել դատական որոշումը՝ տուժածի հեղինակությունը վերականգնելու նպատակով:

գ) ապրանքի, դրա փաթեթավորման, ձեւաթղթի եւ այլ փաստաթղթերի վրայից այնպես վերացնել ապօրինի օգտագործվող տեղանվան կամ դրան շփոթելու աստիճան նման նշանը (արտահայտչամիջոցը), որպեսզի բացառվի ապրանքի կամ նրա փաթեթավորման վրա այն նորից գետեղելու վտանգը:

դ) ոչնչացնել պատրաստված տեղանվան պատկերները:

ե) սույն կետի «գ» և «դ» ենթակետերում նշված պահանջները կատարելու անհնարինության դեպքում՝ ապօրինի տեղանվամբ մակնշված ապրանքը եւ(կամ) փաթեթը առանց որելից փոխհատուցման ենթակա է առգրավման կամ ոչնչացման:

4. Ապրանքային նշանի կամ ապրանքի ծագման տեղանվան ապօրինի օգտագործման դեպքում, հետագա խախտումների վտանգը նվազեցնելու նպատակով քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել խախտման համար հիմք ծառայած նյութական օբյեկտների (նյութերի, սարքերի գովազդային միջոցների եւ այլնի) առգրավմամբ, եթե դրանք գերակշռորեն օգտագործվել են նշված նպատակով:

5. Ցանկացած անձ, որի իրավունքները ապրանքային նշանի կամ տեղանվան նկատմամբ խախտվում կամ կարող են խախտվել, իրավասու է դիմել դատարան, ապօրինի օգտագործվող ապրանքային նշան կամ տեղանուն կրող ապրանք տիրապետողից այդպիսի ապրանքների արտադրությանը եւ տարածմանը մասնակցող երրորդ անձանց, ինչպես նաեւ՝ դրանց ձեռքբերման աղբյուրների ու տարածման ուղիների մասին տեղեկատվություն պահանջելու խնդրանքով:

6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում՝

ա) ապօրինի օգտագործվող ապրանքային նշան կամ տեղանուն կրող ապրանք տիրապետող անձը, որը հրաժարվում է հայտնել այդպիսի ապրանքների ձեռքբերման աղբյուրի մասին:

բ) ցանկացած անձ, որն ապրանքային նշանի կամ տեղանվան իրական իրավատիրոջ վերաբերյալ կեղծ հայտարարություն է անում, կամ ապրանքի (կամ դրա փաթեթավորման) վրայից ապօրինաբար հեռացնում է ապրանքային նշանը կամ տեղանունը, կամ խաբեությամբ իրեն ներկայացնում է իբրեւ ապրանքային նշանի կամ տեղանվան իրավատեր:

գ) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված ապրանքային նշանի կամ ապրանքի ծագման տեղանվան հետ նախազգուշական գրառում կիրառող անձը, եթե այդ գրառումը չի արտահայտում որեւէ վկայակոչում այլ երկրում գրանցված լինելու մասին կամ տվյալ ապրանքների համար այդ ապրանքային նշանը կամ տեղանունն իրականում գրանցված չէ նշված երկրում:

Հոդված 48. Օտարերկրյա անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց իրավունքները

1. Օտարերկրյա անհատ ձեռնարկատերերը եւ իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան կամ փոխադարձության սկզբունքով օգտվում են սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ կրում են պատասխանատվությունը՝ Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատերերին եւ իրավաբանական անձանց հավասար:

2. Հայաստանի Հանրապետությունում տեղանվան գրանցման եւ օգտագործման իրավունքը տրվում է այն պետությունների անհատ ձեռնարկատերերին եւ իրավաբանական անձանց, որոնք նույնանման իրավունք են տալիս Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատերերին եւ իրավաբանական անձանց:

Հոդված 49. Միջազգային պայմանագրերը

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 50. Անցումային դրույթներ

1. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը

գրանցված ապրանքային նշանների գրանցման գործողությունը, ինչպես նաև ապրանքների ծագման տեղանունների գրանցումը եւ դրանց օգտագործման իրավունքի վկայագրերը մնում են ուժի մեջ:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը գերատեսչություն ներկայացված ապրանքային նշանների եւ ապրանքների ծագման տեղանունների գրանցման եւ(կամ) օգտագործման այն հայտերով, որոնց քննարկումը չի ավարտվել, փորձաքննությունն անցկացվում է սույն օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Ուժը կորցրած ճանաչել 1997 թ. մայիսի 12-ին ընդունված «Ապրանքային եւ սպասարկման

նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՅ
Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

Երեւան
31 մարտի 2000թ.
ՀՕ-41

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 Արտոնագրի համարը
 - 13 Փաստաթղթի տեսակի կոդը
 - A1 Արտոնագրով պաշտպանված գյուտի նկարագրություն
 - A2 Նախնական արտոնագրով պաշտպանված գյուտի նկարագրություն
 - B1 Արտոնագրով պաշտպանված գյուտի նկարագրություն
 - B2 Արտոնագրով պաշտպանված գյուտի նկարագրություն
 - 21 Հայտի համարը
 - 22 Հայտի ստացման թվականը
 - 23 Լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
 - 24 Արտոնագրի գործողության սկիզբը
 - 31 Առաջնային հայտի համարը
 - 32 Առաջնային հայտի ներկայացման թվականը
 - 33 Երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
 - 41 Հայտի համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
 - 45 Արտոնագրային փաստաթղթի հրապարակման թվականը
 - 51 Միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
 - 54 Գյուտի անվանումը
 - 56 Հղումներ
 - 57 Ռեֆերատ
 - 62 Հայտը, որից զատվել է տվյալ հայտը
 - 65 Ավելի վաղ հրապարակված արտոնագիր
 - 71 Հայտատուն, երկրի կոդը
 - 72 Գյուտի հեղինակը, երկրի կոդը
 - 73 Արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
 - 74 Արտոնագրային հավատարմատար
 - 85 Միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
 - 86 Միջազգային հայտ (PCT)
 - 87 Միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51)⁷ **A01B 15/00** (11) **878** (13) **A2**
E02F 5/02
 (21) P20000014 (22) 06.03.2000
 (41) 08.08.2000
 (72) Ա. Փեշտիմալյան (AM), Շ. Գրիգորյան (AM), Հ. Փեշտիմալյան (AM)
 (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
 (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)
- (54) **Հարթ վարի գութանի իրան**
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես հողամշակման գործիքներին՝ հատկապես հարթ վարի գութաններին:
 Հարթ վարի գութանի իրանը բաղկացած է ամ-
 շարժ կանգնակից, խոփից, շրջող մակերեսույթը կազմող մետաղաշերտերից եւ դրանց թիկունքում տեղակայված կոշտության ճոճվող կողերից: Վերջիններս իրենց ճոճման հարթության մեջ իրականացված են որպես ճկուն ձողեր, որոնք բաղկացած են առանձին լծակներից, որոնց միացման առանցքները համընկնում են մետաղաշերտերի ճոճման առանցքներին: Յուրաքանչյուր մետաղաշերտ կոշտության կողերին միացված է պարուրավոր սոնիների եւ վռանների միջոցով, որոնք կոշտ ամրացված են թաթիկներին: Կոշտության կողերն իրենց վերին տարրով հենվում են կանգնակին միացված ճոճվող սեկտորի ճեղքի պատին:
- Առաջարկվող գութանի իրանը ապահովում է շրջող մակերեսույթի նախագծային եզրագիծն ու ուղորկությունը, ամրությունն ու կոշտությունը, զգալիորեն նվազեցնում է գութանի էներգատարությունը, բարձրացնում արտադրողականությունը, ապահովում նրա հուսալի աշխատանքն ու վարի որակը եւ կրճատում շահագործական ծախսերը: 4 նկ.:
- (51)⁷ **A01B 63/118** (11) **879** (13) **A2**
 (21) P20000054 (22) 19.06.2000
 (41) 22.09.2000
 (72) Շ. Գրիգորյան (AM), Ն. Բազիկյան (AM), Ա. Եսոյան (AM), Պ. Տոնապետյան (AM)
 (71) Շավարշ Գրիգորյան (AM), Նորիկ Բազիկյան (AM), Արամայիս Եսոյան (AM), Պարգե Տոնապետյան (AM)
 (73) Շավարշ Գրիգորյան, Երևան, Ա. Տիգրանյան 5, բն. 73 (AM), Նորիկ Բազիկյան, Երևան, Մանթաշյան 4/5, բն. 7 (AM), Արամայիս Եսոյան, Կոտայքի մարզ, գ. Քանաքեռավան (AM), Պարգե Տոնապետյան, Երևան, Թադևոսյան 6, բն. 58 (AM)

- (54) **Լանջերում հողամշակ մեքենաների ընթացքի խորության համաչափության եւ ագրեգատի ուղղության կայունության կարգավորման հարմարանք**
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ գյուղատնտեսական մեքենաների կախովի հարմարանքներին:

Հարմարանքն ունի տրակտորին հողակապով միացված եռակետ կախովի մեխանիզմի լծակներ, դրանք բարձրացնող-իջեցնող սարքավորում, որը բաղկացած է հիդրոգլանից, լայնական լիսեռից, դրան կոշտ միացված երկայնական լծակներից եւ կարգավորվող լծակներից: Թեքությամբ դեպի վեր գտնվող կարգավորվող լծակը իրականացված է հիդրոգլանի ձեւով:

Ապահովվում է գյուղատնտեսական մեքենայի դիրքի ուղղումը մշակվող մակերեսույթի նկատմամբ, խորության համաչափությունը եւ մեքենա-տրակտորային ագրեգատի ուղղության կայունությունը: 1 նկ.:

- (51)⁷ **A01K 67/033** (11) **880** (13) **A2**
C05F 3/00
C05F 17/00
 (21) P20000018 (22) 22.03.2000
 (72) Ա. Պողոսյան (AM)
 (71) Արամ Պողոսյան (AM)
 (73) Արամ Պողոսյան, Երևան, Հաղբանակի 9-րդ փող. 23 (AM)
- (54) **Որդի ընտրասերման եղանակ եւ այդ որդի կիրառմամբ վերմիկուլտիվացման եղանակ**
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը եւ կարող է կիրառվել ինչպես գոմաղբից արժեքավոր օրգանական պարարտանյութի (կենսահումուսի) ստացման (վերմիկուլտիվացման) տեխնոլոգիայում, այնպես էլ ձկների կենդանի եւ չոր կեր, կենդանիների կերային հավելույթներ ստանալու համար:
- Խոշոր եղջյուրավոր անասունի գոմաղբի կոմպոստը նախապես մաղում են, հասունացնում 15-20 ժամվա ընթացքում, որից հետո այն վարակում Հայաստանի կարմիր անձրեւորդի խմբաքանակով, իսկ 2-3 շաբաթ հետո՝ կալիֆոռնիական կարմիր որդի (*Eisenia foetida*) խմբաքանակով, 2-3 ամիս հետո զատում խառնասերունդ որդերի կենսազանգվածը: Կոմպոստի խոնավությունը 30-35% է:

Վերմիկուլտիվացումը կատարում են՝ կոմպոստը վարակելով խառնասերունդ որդով (*Eisenia foetida* Armeniaka):

Բարձրանում է խառնասերունդի կերային ար-

Ժեքը եւ հարմարվողությունը չկապված ազոտի եւ մետաղների նկատմամբ: 2 անկախ կետ:

- (51)⁷ **A61B 10/00** (11) **881** (13) **A2**
 (21) P20000031 (22) 13.04.2000
 (41) 08.08.2000
 (72) Հ. Նաղաշյան (AM), Հ. Հարությունյան (AM), Վ. Գրիգորյան (AM)
 (71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
 (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Նմուշահան

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես սարկոպտոիդոզով վարակված կենդանու մաշկի հատվածներից հետազոտման մնուշ վերցնելու սարքերին:

Նմուշահանը կազմված է բռնակից եւ տաշտականման աշխատող մասից: Տաշտակի ներքին խոռոչի ծայրային մասը կոնի ձևով լայնացված է դեպի վեր՝ առաջացնելով սուր եզրեր:

Նմուշահանի կառուցվածքը բույլ է տալիս մնուշն ամբողջությամբ հավաքել տաշտակում՝ կանխելով վարակի նոր օջախի առաջացումը: 2 նկ.:

- (51)⁷ **A61B 17/00** (11) **882** (13) **A2**
 (21) P20000019 (22) 27.03.2000
 (41) 08.08.2000
 (72) Ա. Աղավեյան (AM), Ա. Հակոբյան (AM), Ա. Արահամյան (AM), Մ. Հակոպով (AM), Ա. Զարգարյան (AM)
 (71) Ալեքսանդր Աղավեյան (AM)
 (73) Ալեքսանդր Աղավեյան, Երևան, Թումանյան 12, բն. 27 (AM)

(54) Ուղիղ աղիքի որովայնաշեքային էքստիրպացիայի ժամանակ կառավարելի սեղմող ապարատի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ ուղիղ աղիքի հեռավոր հատվածի քաղցկեղի եւ ուղիղ աղիքի վերին հատվածներում գտնվող որոշ ուռուցքների վիրաբուժական միջամտությանը, հատկապես այն դեպքերում, երբ սեղմակապահական վիրահատություններ հնարավոր չէ կատարել:

Ուղիղ աղիքի որովայնաշեքային էքստիրպացիայի ժամանակ աղիքը հեռացվում է շեքային վերքի միջից, հեռավոր ծայրից անջատվում ազդրի մուրբ մկանը, ազդրի վերքից դեպի շեքի վերքը կազմվում անցուղի, որով մուրբ մկանը դուրս է բերվում շեքի վերք, իջեցված աղիքը փաթաթվում է մուրբ մկանով, կազմավորվում է սեղմող ապարատ, իջեցված աղիքը սեղմվում է մկանին, որի հեռավոր հատվածը հակառակ կողմից ամրացվում է մատաթմբի շրջակայքին եւ ապա կարվում բոլոր վերքերը:

Մեծանում է սեղմող ապարատի կառավարելիությունը եւ ապահովությունը ուղիղ աղիքի որովայնաշեքային էքստիրպացիայի ժամանակ:

- (51)⁷ **A61B 17/00** (11) **883** (13) **A2**
 (21) P20000033 (22) 25.04.2000
 (41) 08.08.2000
 (72) Պ. Անանիկյան (AM), Պ. Անանիկյան (AM), Ա. Գրիգորյան (AM), Ա. Խաչատրյան (AM)
 (71) Պավել Անանիկյան (AM), Պետրոս Անանիկյան (AM), Արտակ Գրիգորյան (AM), Արտակ Խաչատրյան (AM)
 (73) Պավել Անանիկյան, Երևան, Մաշտոցի 48, բն. 27ա (AM), Պետրոս Անանիկյան, Երևան, Սարյան 2, բն. 34 (AM), Արտակ Գրիգորյան, Գեղարքունիքի մարզ, գյուղ Աստղածոր (AM), Արտակ Խաչատրյան, Երևան, Ամիրյան 18, բն. 51 (AM)

(54) Լեղապարկի մասնահատման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է վիրաբուժությանը, մասնավորապես, լեղապարկի մասնահատման եղանակներին:

Ենթալյարդային շրջանը վիրախժուծներով տարանջատելուց հետո, ծծիչի հսկողության ներքո, լեղապարկի առաջնային պատից կտրում են սրտածեւ մեծ լաթ, հեռացնում քարերն ու լեղապարկի փոփոխված մասերը, մշակում հականեխիչով լեղապարկի ներքին մակերեսը, կատարում լեղապարկի պատերի նովոկաինով ու պենիցիլինով բլոկադա, իսկ վիրահատության վերջում լեղապարկի առաջնային պատը կարում երկշարք կարով:

Առաջարկվող եղանակի առավելությունն այն է, որ տարեց հիվանդների դեպքում փոքրանում է վիրահատական միջամտության տրավմատիզացումը, միաժամանակ վերացվում է պարոտիդի պատճառը՝ քարերը, վարակված ու նեկրոտիկ հյուսվածքները, առավելագույնս փոքրանում է լեղապարկի խոռոչը, ինչը կանխարգելում է նոր քարերի առաջացումը՝ պահպանելով լեղապարկի ֆիզիոլոգիական ֆունկցիան:

- (51)⁷ **A61B 17/00** (11) **884** (13) **A2**
 (21) P20000055 (22) 19.06.2000
 (41) 08.08.2000
 (72) Լ. Մկրտչյան (AM)
 (71) Լեւոն Մկրտչյան (AM)
 (73) Լեւոն Մկրտչյան, Երևան, Վարդանանց 5ա, բն. 304 (AM)
(54) Չարորակ նորագոյացությունների կանխարգելման եղանակ ըստ Մկրտչյանի
 (57) Գյուտը վերաբերում է ուռուցքաբանությանը եւ կարող է կիրառվել նախաքաղցկեղային վիճակների

բուժման եւ չարորակ ուռուցքների առաջացման կանխարգելման համար:

Նախաքաղցկեղային վիճակները բուժելու եւ չարորակ նորագոյացությունների առաջացումը կանխարգելելու համար նախաքաղցկեղային համախտանիշներով հիվանդների եւ քաղցկեղով հիվանդանալու վտանգի առաջ կանգնած մարդկանց պատվաստում են սաղմնային հակաուռուցքային մոդուլարար, որը պարունակում է օնկոֆետալ հակաժինների լայն սպեկտր: Մոդուլարարի պատվաստումը կատարում են ենթամաշկային, տարին մեկ անգամ, 0,03 մգ/կգ դեղաչափով:

Բարձրանում է հակաուռուցքային դիմադրողականությունը նախաքաղցկեղային համախտանիշներով հիվանդների եւ քաղցկեղով հիվանդանալու վտանգի առաջ կանգնած մարդկանց մոտ:

(51)⁷ **A61D 1/08** (11) **885** (13) **A2**
(21) P20000022 (22) 31.03.2000
(41) 08.08.2000

(72) Հ. Հարությունյան (AM), Հ. Նաղաշյան (AM), Ա. Հարությունյան (AM), Հ. Կարապետյան (AM), Օ. Բալասանյան (AM)

(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)

(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Ծննդօգնության սարք**

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես, անասունների դժվար ծննդաբերության ժամանակ պտուղը հանելու սարքերին:

Սարքի իրանին հողակապորեն միացված են երկու հենարանային ոտքեր, որոնցից յուրաքանչյուրի ծայրին հողակապորեն միացված է հենարանային թաթիկ: Իրանում տեղադրված է թմբուկ, որի վրա փաթաթված են երկու ճուղակ: Սարքն ունի ձեռքի շարժաբեր: Ճուղակների ծայրերը կապում են ծննդողիներից դուրս բերված պտղի վերջույթներին: Թմբուկի պտտման ընթացքում ճուղակները փաթաթվում են թմբուկի վրա եւ հանում պտուղը: 3 նկ.:

(51)⁷ **A61D 15/00** (11) **886** (13) **A2**
(21) 99028 (22) 19.03.1999
(41) 08.08.2000

(72) Հ. Հարությունյան (AM), Ա. Վարդանյան (AM), Ս. Երեմյան (AM)

(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)

(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Ունիվերսալ երախակալ**

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես երախակալներին:

Երախակալը բաղկացած է երկմատ աղեղից, երկու ալտերից, ձողից եւ երկու առաձգական օղե-

րից: Աղեղն իր մատների ծայրամասում ունի համառանցք անցքեր: Ալտերն ունեն փակ շեղ ատամնավոր ակոսներ եւ կեռեր: Ալտերից մեկը ստորին մատով հողակապով միացված է աղեղի մատների անցքերին, իսկ մյուսը անշարժ ամրացված է աղեղի մատներին:

Երախակալը տեղակայելիս աղեղը տեղադրում են անասունի ստորին ծնոտի վրա, իսկ վերին ծնոտի դիրքը որոշվում է ձողով, որն անցկացնում են ալտերի համապատասխան ակոսներով: Երախակալի դիրքը սեւեռակվում է առաձգական օղեղով, որոնք արտաքինից ընդգրկում են անասունի ստորին եւ վերին ծնոտները: 3 նկ.:

(51)⁷ **A61F 9/00** (11) **887** (13) **A2**

(21) P20000016

(22) 14.03.2000

(41) 08.08.2000

(72) Ա. Մալայան (AM)

(71) Ալեքսանդր Մալայան (AM)

(73) Ալեքսանդր Մալայան, Երևան, Պուշկինի 40, բն. 92 (AM)

(54) **Միկրովիրաբուժական գործիք**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ ակնամիկրաբուժական կարող գործիքներին:

Գործիքի սնամեջ իրանում տեղակայված է զսպանակաձև սողան, որին ամրակցված է ասեղը: Ասեղի՝ իրանից դուրս ցցված մասը գտնվում է կտրացված ծայրով խողովակաձև պատյանի մեջ, որը համառանցք ամրակցված է իրանին, ընդ որում ասեղի աշխատող ծայրն ունի սուր կողեգրեր, իսկ ունկը գտնվում է աշխատող ծայրամասում:

Նվազեցվում է նուրբ կառուցվածքային տարրերի վիրահատական վնասվածքների հավանականությունը: 2 նկ.:

(51)⁷ **A61F 9/00** (11) **888** (13) **A2**

A61B 17/30

(21) P20000040

(22) 04.05.2000

(41) 22.09.2000

(72) Ա. Մալայան (AM), Ա. Հովսեփյան (AM)

(71) Ալեքսանդր Մալայան (AM), Ասատուր Հովսեփյան (AM)

(73) Ալեքսանդր Մալայան, Երևան, Պուշկինի 40, բն. 92 (AM), Ասատուր Հովսեփյան, Աբովյան, Քանաքեռի 2, բն. 28 (AM)

(54) **Ներակնային ոսպնյակների պատվաստման ունեղի**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ ակնամիկրաբուժության մեջ ներակնային ոսպնյակների պատվաստման ժամանակ օգտագործվող գործիքներին:

Ունեղին ունի երկու զսպանակաձև թել, որոնց բրանշներն ունեն քաղցվածքի հարթության մեջ ու-

դիդ անկյան տակ թեքված են միեւնույն ուղղությամբ: Բրանշների ծայրերը կեռիկաձեւ են, ընդ որում, արտաքին բրանշի կեռիկի ներքին տրամագիծը եւ ներքին բրանշի կեռիկի լայնությունը հավասար են ներակնային ոսպնյակների ոտիկի տրամագծին: Ներքին բրանշի կեռիկն ունի թեք ճակատային մակերես, որը բրանշների համընթաց շարժման ժամանակ փակում է արտաքին բրանշի կեռիկի բացվածքը:

Ունեւոր կառուցվածքը թույլ է տալիս ներակնային ոսպնյակների պատվաստման ժամանակ դրա ոտիկի տեղավորման ընթացքում փոքրացնել աչքի նուրբ կառուցվածքային տարրերի վնասման հավանականությունը: 15 նկ.:

- (51)⁷ **A61K 31/00** (11) **889** (13) **A2**
 (21) P20000007 (22) 04.02.2000
 (41) 08.08.2000
 (72) Ռ. Մելիքյան (AM)
 (71) Ռ-ուղով Մելիքյան (AM)
 (73) Ռ-ուղով Մելիքյան (AM)
 (74) Ա. Պետրոսյան
 (54) **Երիկամների բորբոքային հիվանդությունների բուժման պատրաստուկ**
 (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես, երիկամների հիվանդությունների՝ նեֆրիտի, քրոնիկական պիելոնեֆրիտի, երիկամային անբավարարության, գլադոնեֆրիտի, երիկամաքարային հիվանդության, ուրեմիայի բուժման պատրաստուկների:
- Պատրաստուկը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը՝ զանգվ. %.
- Էթիլային սպիրտ՝ 38-42, ցիտրանեւլ՝ 0,05-0,06, կենդանական ճարպ՝ 0,6-0,7, կալցիում՝ 0,0027-0,0054, երկաթ՝ 0,0006-0,0012, տանին՝ 0,0006-0,0012, բուսական յուղ՝ մնացածը:
- Ընդլայնվում է հակաբորբոքային դեղամիջոցների տեսականին:

- (51)⁷ **A61K 31/295** (11) **890** (13) **A2**
 (21) P20000001 (22) 03.01.2000
 (41) 08.08.2000
 (72) Կ. Լալան (AM), Է. Գաբրիելյան (AM)
 (71) Կարեն Լալան (AM), Էմիլ Գաբրիելյան (AM)
 (73) Կարեն Լալան (AM), Էմիլ Գաբրիելյան (AM)
 (74) Ա. Պետրոսյան
 (54) **Բուժական պատրաստուկ «Կապրոֆեր», հիվանդությունների կանխարգելման եւ/կամ բուժման եղանակ**
 (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ պատրաստուկի ստացմանը եւ կարող է կիրառվել հիվանդությունների կանխարգելման եւ բուժման համար:

Պատրաստուկը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ. %. եռլորերկաթ՝ 51-54, էպսիլոն-ամինակապրոնաթթու՝ 11-13, 0,9%-անոց իզոտոնային լուծույթ՝ մնացածը:

Բորբոքումները, ուռուցքները եւ այտուցները բուժում են եւ/կամ կանխարգելում պատրաստուկի 0,9%-անոց իզոտոնային լուծույթով՝ նոսրացված 1:100 հարաբերակցությամբ, բերանի խոռոչի ամենօրյա ողողումներով:

Տեղական արյունահոսությունների դադարեցման համար օգտագործում են բամբակե վիրախձուծներ, ապլիկացիաներ, տուրունդներ:

Ընդլայնվում է պատրաստուկի ազդեցության սպեկտրը: 5 անկախ կետ:

- (51)⁷ **A61K 31/295** (11) **891** (13) **A2**
 (21) P20000057 (22) 27.06.2000
 (41) 22.09.2000
 (72) Հ. Սարգսյան (AM), Է. Գաբրիելյան (AM), Կ. Լալան (AM)
 (71) Հեղինե Սարգսյան (AM)
 (73) Հեղինե Սարգսյան (AM)
 (74) Ա. Պետրոսյան
 (54) **Բերանի խոռոչի լորձաթաղանթի եւ բերանամերձ շրջանի հիվանդությունների բուժման պատրաստուկ**
 (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը եւ կարող է կիրառվել ստոմատոլոգիայում միկոզների, պարադոնտիտների եւ գինգիվիտների բուժման համար:
- Պատրաստուկը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ. %. եռլորերկաթ՝ 14-20, էպսիլոն-ամինակապրոնաթթու՝ 3-7, 0,9 %-անոց իզոտոնային լուծույթ՝ 10-14, վիտամին E-ի 30 %-անոց յուղային լուծույթ՝ 10-20, էմուլսարար՝ մնացածը:
- Բարձրանում է բերանի խոռոչի լորձաթաղանթի եւ բերանամերձ շրջանի հիվանդությունների բուժման արդյունավետությունը, ընդլայնվում են պատրաստուկի ֆունկցիոնալ հնարավորությունները:

- (51)⁷ **A61K 35/78** (11) **892** (13) **A2**
 (21) P20000058 (22) 29.06.2000
 (41) 22.09.2000
 (72) Ս. Քարամյան (AM), Հ. Գալստյան (AM), Ս. Գրիգորյան (AM), Ն. Քարամյան (AM)
 (71) Սամվել Քարամյան (AM), Սմբատ Գրիգորյան (AM)
 (73) Սամվել Քարամյան, Երեւան, Չարենցի 70, բն.107 (AM), Սմբատ Գրիգորյան, Երեւան, Գյուլբենկյան, 43, բն.91 (AM)
 (54) **Լեյկոպոէտիկ ակտիվություն ունեցող բուսաբուժական պատրաստուկ եւ ուռուցքաբանական հիվանդությունների մոտ բազմաքիմիաբուժության եւ ճառագայթաբուժության հետեւանքով առաջացած**

արյունաբանական փոփոխությունների կանխարգելման եւ/կամ բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես ուռուցքաբանությանը:

Լեյկոպոէտիկ ակտիվություն ունեցող պատրաստուկը իրենից ներկայացնում է իշառվույտ դեղաբույսի վերգետնյա մասի (խոտի) եւ վաղենակ դեղաբույսի ծաղիկների խառնուրդ՝ բաղադրամասերի 2:1 հարաբերակցությամբ:

Ուռուցքաբանական հիվանդների մոտ բազմաքիմիաբուժության եւ ճառագայթաբուժության հետեւանքով առաջացած արյունաբանական փոփոխությունների (լեյկոցիտների քանակի անկում) կանխարգելման եւ/կամ բուժման համար հիվանդին նշանակում են վերոհիշյալ պատրաստուկը, որը օգտագործում են խառնուրդի թարմ ջրաթուրմի ձեւով՝ խառնուրդի եւ ջրի (5-7,5):100 հարաբերակցությամբ, օրական երեք անգամ 70 մլ դեղաչափով, ուտելուց 20 րոպե առաջ, 1 ամսվա ընթացքում:

Բարձրանում է բուժման արդյունավետությունը, նվազում պատրաստուկի ինքնարժեքը: 2 անկախ կետ:

- (51)⁷ **A61K 35/78** (11) **893** (13) **A2**
 (21) P20000059 (22) 29.06.2000
 (41) 22.09.2000
 (72) Ս. Քարամյան (AM), Ս. Գրիգորյան (AM), Ա. Մինասյանց (AM), Ն. Քարամյան (AM), Թ. Սաղաթեյան (AM)
 (71) Սամվել Քարամյան (AM), Սմբատ Գրիգորյան (AM)
 (73) Սամվել Քարամյան, Երեւան, Չարենցի 70, բն.107 (AM), Սմբատ Գրիգորյան, Երեւան, Գյուլբենկյան, 43, բն.91 (AM)
 (54) **Հակադերմատիտային բուսաբուժական պատրաստուկ եւ ուռուցքաբանական հիվանդների մոտ ճառագայթաբուժության հետեւանքով առաջացած մաշկային փոփոխությունների կանխարգելման եւ/կամ բուժման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես ուռուցքաբանությանը:

Հակադերմատիտային պատրաստուկը իրենից ներկայացնում է յուղային լուծամզուք, որը պարունակում է ծիծեռնախոտ մեծ եւ երկտուն եղինջ դեղաբույսերի վերգետնյա մասերի (խոտերի) խառնուրդ եւ յուղ, բաղադրամասերի 1:1:10 հարաբերակցությամբ:

Ուռուցքաբանական հիվանդների մոտ ճառագայթաբուժության հետեւանքով առաջացած մաշկային փոփոխությունների (դերմատիտներ) կանխարգելման եւ/կամ բուժման համար հիվանդին նշանակում են վերոհիշյալ պատրաստուկը, որը քսվում է մաշկի ճառագայթվող հատվածի վրա օրական մեկ անգամ յուրաքանչյուր ճառագայթման սեանսից հե-

տո, 5-10 մլ դեղաչափով (կախված ճառագայթվող մակերեսի չափերից):

Բարձրանում է բուժման արդյունավետությունը, նվազում պատրաստուկի ինքնարժեքը: 2 անկախ կետ:

- (51)⁷ **A61K 37/24** (11) **894** (13) **A1**
A61K 37/36
 (21) 96155 (22) 15.09.1993
 (31) 07/949,594 (32) 22.09.1992 (33) US
 (85) 28.06.1996
 (86) PCT/US93/08734, 15.09.1993
 (72) Ռ. Ջ. Բլաք (US)
 (71) Ջենենթեք, Ինք. (US)
 (73) Ջենենթեք, Ինք. (US)
 (74) Ն. Թումանյան

(54) Սուր երիկամային անբավարարության կանխարգելման եղանակ, աճի ինսուլինանման գործոն-I-ի կիրառումը սուր երիկամային անբավարարության կամ վնասվածքի կանխարգելման դեղորայքների արտադրությունում

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, հատկապես՝ սուր երիկամային անբավարարության կամ վնասվածքի կանխարգելման եղանակներին:

Սուր երիկամային անբավարարությամբ հիվանդանալու ռիսկով խմբի կաթնասուններին ներմուծում են արդյունավետ քանակությամբ աճի ինսուլինանման գործոն-I (IGF-I), երբ սպասվում է, որ հիվանդությունը տեղի կունենա, կամ ընթացքում է, բացառությամբ այն դեպքերի, երբ հիվանդությունը տեղի է ունեցել: 2 անկախ կետ:

- (51)⁷ **B03C 7/00** (11) **895** (13) **A2**
 (21) 99105 (22) 04.10.1999
 (41) 08.08.2000
 (72) Գ. Կարապետյան (AM), Վ. Մակարյան (AM), Վ. Մխիթարյան (AM), Ժ. Հակոբյան (AM)
 (71) Գազիկ Կարապետյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Վանյա Մխիթարյան (AM), Ժանետա Հակոբյան (AM)
 (73) Գազիկ Կարապետյան, Երեւան, Բաշինջաղյան 121 (AM), Վիկտոր Մակարյան, Երեւան, Բաբայան 28, բն. 29 (AM), Վանյա Մխիթարյան, Երեւան, Նորքի 4-րդ զանգվ., 1-ին թաղ. 15, բն. 29 (AM), Ժանետա Հակոբյան, Երեւան, Նար-Դոսի 4, բն. 82 (AM)
 (54) **Նավի իրանի ճեղքվածքի փակման սարք**
 (57) Գյուտը վերաբերում է նավաշինությանը, հատկապես վթարված նավի իրանի ճեղքվածքների փակման սարքերին:

Սարքը բաղկացած է թմբուկից, որի վրա փաթարված է էլաստիկ անջրանցիկ ժապավեն, որի մեջ հաջորդաբար տեղակայված են մետաղական եւ

մագնիսական ձողեր, շղթայավոր ձգաճուղաններից, գլաններից, երկու քարշային շարժաբերներից, որոնք ներառում են էլեկտրաշարժիչ, ռեդուկտոր եւ արգելակող սարք:

Ճեղքվածքը փակելու համար թմբուկի ժապավենը նավի իրանին սեղմվում է ձգաճուղանների միջոցով, որոնք միացված են քարշային շարժաբերներին:

Գյուտի առավելություններն են՝ օգտագործման համապիտանիությունը, վերանորոգման պարզեցումը եւ աշխատանքի ժամանակի կրճատումը: 5 նկ.:

(51)⁷ **B28B 15/00** (11) **896** (13) **A2**
B28C 1/00
C04B 33/00
 (21) P20000011 (22) 02.03.2000
 (41) 08.08.2000
 (72) Մ. Համամյան (AM)
 (71) Միքայել Համամյան (AM)
 (73) Միքայել Համամյան, Երեւան, Մարշալ Բաղրամյան պող. 62, բն. 60 (AM)
(54) Կղմինդրի պատրաստման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է կղմինդրի արտադրությանը, մասնավորապես՝ ֆիզիկաքիմիական կազմի տարասեռությամբ եւ կալցիումի ու մագնեզիումի օքսիդների բարձր պարունակությամբ բնորոշվող կավահումքից կղմինդրի պատրաստման եղանակներին:

Գյուտի էությունն այն է, որ կղմինդրի պատրաստման եղանակում, ըստ որի կավահումքը ենթարկում են սառնապահման եւ հողմահարման, կատարում քարե ներառուկների հեռացում, կավահումքի վտիտացում, խեցեզանգվածի պատրաստում, հասունացում եւ կաղապարում, կղմինդրի մամլում, չորացում եւ թրծում, գյուտի համաձայն որպես կավահումք օգտագործվում է Լանջազատի հանքավայրի կավն ու կավոտ ավազը, իսկ խեցեզանգվածի պատրաստման փուլում կավահումքը մանրացվում է մինչեւ մասնիկների 1.2 մմ-ը չզերազանցող չափերի:

Եղանակը հնարավորություն է տալիս կղմինդրի արտադրության մեջ օգտագործելու նախկինում անհեռանկարային համարվող մագնեզիումի օքսիդի եւ կալցիումի օքսիդի համեմատաբար բարձր պարունակություն ունեցող Լանջազատի հանքավայրի կավահումքը:

(51)⁷ **B28B 15/00** (11) **897** (13) **A2**
B28C 1/00
C04B 33/00
 (21) P20000012 (22) 02.03.2000
 (41) 08.08.2000
 (72) Մ. Համամյան (AM)
 (71) Միքայել Համամյան (AM)
 (73) Միքայել Համամյան, Երեւան, Մարշալ Բաղրամյան պող. 62, բն. 60 (AM)

(54) Խցիկային վառարաններում կղմինդրի թրծման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կղմինդրի արտադրությանը, մասնավորապես՝ կղմինդրի չորացված նախապատրաստվածքների թրծման եղանակներին:

Գյուտի էությունն այն է, որ լրաչորացումը կատարվում է 5 ժամվա ընթացքում՝ հավասարաչափ բարձրացնելով օդի ջերմաստիճանը մինչեւ 270-330°C եւ այն անփոփոխ պահելով 1 ժամ: Տաքացումը կատարվում է 8 ժամվա ընթացքում՝ հավասարաչափ բարձրացնելով ջերմաստիճանը մինչեւ 970-1030°C: Թրծումը կատարվում է 2 ժամվա ընթացքում՝ անփոփոխ պահելով տաքացման փուլում ձեռք բերված ջերմաստիճանը: Հովացման առաջին փուլը կատարվում է 1-2 ժամվա ընթացքում հավասարաչափ նվազեցնելով ջերմաստիճանը մինչեւ 600-650°C, իսկ հովացման երկրորդ փուլը՝ 9-10 ժամվա ընթացքում հավասարաչափ նվազեցնելով ջերմաստիճանը մինչեւ 40-50°C:

Եղանակը հնարավորություն է տալիս կղմինդրի արտադրության մեջ օգտագործել նախկինում անհեռանկարային համարվող մագնեզիումի օքսիդի, կալցիումի օքսիդի եւ երկաթի(III) օքսիդի համեմատաբար բարձր պարունակություն ունեցող Ջովաշենի հանքավայրի կավահումքը: 1 նկ.:

(51)⁷ **B60C 27/04** (11) **898** (13) **A2**
 (21) P20000008 (22) 14.02.2000
 (41) 08.08.2000
 (72) Հ. Հարությունյան (AM)
 (71) Հրաչյա Հարությունյան (AM)
 (73) Հրաչյա Հարությունյան, Երեւան, Վարդանանց 73 (AM)

(54) Ավտոմեքենայի անիվների սահումը կանխելու սարք

(57) Սարքի իրանն ամրակցված է անվակալանդի արտաքին կողմում՝ համառանց: Իրանի վրա տեղակայված են շառավղային ուղղությամբ տարաշառժուն թաթիկներ, որոնք ունեն ծալովի հողավոր օղակներ: Ծալային օղակն ընդգրկում է անվաղողի պաշտպանաչերտի առանձին հատվածմասը եւ փոխազդում գետնի հետ: Թաթիկներից յուրաքանչյուրը ճկուն մետաղաճուղանով կապված է թաթիկների տարաշարժման եւ ծալման մեխանիզմին: Մետաղաճուղաններն իրենց մյուս ծալերի ծալրոցներով հաջորդաբար փոխազդում են կառավարման մեխանիզմի հետ, որը տեղակայված է ավտոմեքենայի հետին կամրջակի վրա եւ կառավարվում է ավտոմեքենայի ներսից: 7 նկ.:

(51)⁷ **B62D 55/116** (11) **899** (13) **A2**
 (21) P20000036 (22) 03.05.2000
 (41) 08.08.2000
 (72) Ն. Բազիկյան (AM), Ը. Գրիգորյան (AM), Ա. Եսոյան (AM)

(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա,
Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Թրթուրավոր մեքենայի ընթացքային մաս**

(57) Գյուտը վերաբերում է տրանսպորտային մեքենաշինությանը, մասնավորապես՝ թրթուրավոր ընթացքով տրանսպորտային միջոցների ընթացքային մասին:

Թրթուրավոր մեքենայի ընթացքային մասն ունի շրջանակ, թրթուր, պահիչ հոլովակներ, շարժական հենարաններ, հենարանային գլանավակներ, որոնք կապված են շրջանակի հետ լծակներով: Շրջանակի ուղղաձիգ ուղղորդիչ անցքերի միջով անցնում են զսպանակներ, որոնք ստորին մասով հենված են գլանավակների լիսեռներին, իսկ զսպանակների վերին մասի վրա տեղակայված են շարժական հենարաններ, որոնք դիրքը կարգավորվում է հիդրոգլանների միջոցով:

Ապահովվում է մեքենայի երթևեկության կայունությունը: 2 նկ.:

(51)⁷ **B65G 15/00** (11) **900** (13) **A2**

(21) P20000038

(22) 04.05.2000

(41) 22.09.2000

(72) Բ. Բաբայան (AM), Վ. Բաբայան (AM)

(71) Բելլա Բաբայան (AM), Վազգեն Բաբայան (AM)

(73) Բելլա Բաբայան, Երևան, Օրբելու 4, բն. 8 (AM),

Վազգեն Բաբայան, Երևան, Արեւյան 9, բն. 22 (AM)

(54) **Ժապավենային փոխադրիչի ժապավենի կողային սահքի կարգավորման սարք**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ քարհավաք մեքենաների փոխադրիչներին:

Սարքը բաղկացած է ժապավենի ձգվածությունը կարգավորող գույգ ձգիչներից: Առաջին ձգիչը բաղկացած է պտտատակավոր ձողից եւ երկու մանեկից, իսկ երկրորդ ձգիչը հիդրոգլան է:

Սահքի ուղղությունը եւ թույլատրելի շեղման մեծությունը որոշելու համար սարքն ունի տվիչներ, ուսային եւ ձայնային ազդանշանների գործարկիչ:

Ղեկավարվելով նշված ազդանշաններով՝ տրակտորիստը տրակտորի խցիկից կարգավորում է ժապավենի կողային սահքը:

Սարքը բարձրացնում է փոխադրիչի արտադրողականությունը եւ հուսալիությունը: 3 նկ.:

(51)⁷ **C04B 7/36** (11) **901** (13) **A2**

(21) P20000052

(22) 16.06.2000

(41) 08.08.2000

(72) Ա. Մարիկյան (AM), Լ. Համբարձումյան (AM)

(71) Ալբերտ Մարիկյան (AM), Լեւոն Համբարձումյան (AM)

(73) Ալբերտ Մարիկյան, Երևան, Պուշկինի 58, բն.

24 (AM), Լեւոն Համբարձումյան, Արարատ, Խանջյան 66, բն. 9 (AM)

(54) **Ցեմենտի կլինկերի արտադրման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է ցեմենտի կլինկերի չոր եղանակով արտադրությանը:

Գյուտի էությունն այն է, որ թրծավառարանների էլեկտրագոլիչներում որսած փոշին ավելացնում են հումքանյութին՝ այն հումքախառնուրդի աղացք սնող կուտակիչ մատուցելուց առաջ: Ավելացվող փոշու եւ հումքախառնուրդի հարաբերությունը ընտրվում է 1:15-ից մինչեւ 1:25:

Էլեկտրագոլիչների ստորին հատվածամասերում որսած փոշին ավելացնում են առանց նախնական մշակման, 60-80°C ջերմաստիճանի պայմաններում:

Ապահովվում է տեխնոլոգիական պրոցեսի անխափանությունը: 1 նկ.:

(51)⁷ **C04B 33/00**

(11) **902** (13) **A2**

(21) P20000013

(22) 02.03.2000

(41) 08.08.2000

(72) Մ. Համամյան (AM)

(71) Միքայել Համամյան (AM)

(73) Միքայել Համամյան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 62, բն. 60 (AM)

(54) **Հում կղմինդրի չորացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կղմինդրի արտադրությանը, մասնավորապես՝ կղմինդրի կաղապարված նախապատրաստվածքների չորացման եղանակներին:

Գյուտի էությունն այն է, որ առաջին 24 ժամվա ընթացքում խցիկի օդի պարամետրերը պահպանվում են հաստատուն՝ ջերմաստիճանը՝ 15-25°C, իսկ հարաբերական խոնավությունը՝ 70-80%, հաջորդ 24 ժամվա ընթացքում ջերմաստիճանը հավասարաչափ բարձրացվում է մինչեւ 30-40°C, իսկ հարաբերական խոնավությունը հավասարաչափ նվազեցվում է մինչեւ 40-60%, այնուհետեւ 12 ժամվա ընթացքում ջերմաստիճանը հավասարաչափ բարձրացվում է մինչեւ 45-50°C, իսկ հարաբերական խոնավությունը հավասարաչափ նվազեցվում է մինչեւ 10-30%:

Եղանակը հնարավորություն է տալիս կղմինդրի արտադրության մեջ օգտագործել նախկինում անհեռանկարային համարվող մագնեզիումի օքսիդի, կալցիումի օքսիդի եւ երկաթի(III) օքսիդի համեմատաբար բարձր պարունակություն ունեցող կավահումքը: 1 նկ.:

(51)⁷ **C05F 3/00**

(11) **903** (13) **A2**

(21) P20000010

(22) 22.02.2000

(41) 08.08.2000

(72) Ա. Պողոսյան (AM)

(71) Արամ Պողոսյան (AM)

(73) Արամ Պողոսյան, Երևան, Հաղթանակի 9-րդ փ. 23 (AM)

(54) **Խոշոր եղջյուրավոր անասունի գոմաղբի վերամշակման եղանակ**

(57) Գոմաղբը փռում են մոտավորապես 30 սմ բարձրությամբ շերտով եւ այդ շերտի մեջ տեղավորում մազանոթային զարգացած կառուցվածք ունեցող նյութի կտորներ, այնպես, որ դրանց վերին մասերը դուրս գցվեն գոմաղբի մակերեսից: Որպես մազանոթային զարգացած կառուցվածք ունեցող նյութ օգտագործում են ցելոլիթ, տուֆ, պեռլիտ եւ այլն: Նյութի կտորների նախընտրելի չափերն են՝ 20 x 20 x 40 սմ: Կարող են օգտագործվել նաեւ նյութի տծե կտորներ: Նախընտրելի է նյութի կտորների տեղադրումը հատակից 5-15 սմ բարձրության վրա, մեկը մյուսից 10-50սմ հեռավորությամբ: Գոմաղբի շերտը փռում են վերմիկուլտիվացման մահճի վրա:

Կրճատվում է գոմաղբի վերամշակման տեղությունը եւ աշխատատարությունը: 2 նկ.:

(51)⁷ C07C 101/24

(11) 904

(13) A2

(21) 99018

(22) 02.03.1999

(41) 08.08.2000

(72) Ա. Աղաջանյան (AM), Ե. Աղաջանյան (AM)

(71) Արմեն Աղաջանյան (AM)

(73) Արմեն Աղաջանյան, Երևան, Գրիբոյեդովի 3, բն. 47 (AM)

(54) **Հիմնային ամինաթթվի հիմքի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես հիմնային ամինաթթուների հիմքերի ստացման եղանակներին:

Հիմնային ամինաթթվի տեխնիկական բյուրեղների լուծույթը անցկացնում են կատիոնափոխանակման խեժի միջով, կլանված ամինաթթուն ենթարկում էլյուացման, էլյուատը խտացնում վակուումային գոլորշիացմամբ, ստացված խտանյութը գտում են եւ չորացնում: Որպես կատիոնափոխանակման խեժ օգտագործում են NH_4^+ -ծելի կատիոնիտը: Գոլորշիացումից հետո էլյուատը լրացուցիչ անցկացնում են հիմնային ամինաթթվի ձեւի կատիոնիտի միջով, իսկ չորացումը կատարում փոշիացմամբ:

Ապահովվում է հիմնային ամինաթթվի հիմքի ստացման բարձր արդյունավետություն:

(51)⁷ C07C 323/62

(11) 905

(13) A1

C07D 207/16

A61K 31/165

(21) 97010

(22) 11.07.1995

(31) 08/286,816

(32) 05.08.1994

(33) US

08/446,917

01.06.1995

US

(85) 05.02.1997

(86) PCT/US95/08802, 11.07.1995

(72) Ջ. Մ. Դոմաջեյա (US), Է. Ֆ. Էլսեյջեր (US), Ռ. Դ. Ջոլիթի (US)

(71) Վարներ-Լամբերտ Քամփնի (US)


(73) Վարներ-Լամբերտ Քամփնի (US)

(74) Ա. Պետրոսյան

(54) **Արիթմոմիացություններ, դեղագործական բաղադրանյութ եւ բուժման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական արդյունաբերությանը, հատկապես՝ արիթմոմիացություններին, որոնք որպես ակտիվ բաղադրամաս կիրառվում են հակավիրուսային եւ հակամանրէային պատրաստուկների կազմում:

Արիթմոմիացությունները ունեն ընդհանուր բանաձեւ (1)



Առաջարկվում են նաեւ դեղագործական բաղադրանյութեր, որոնք ունեն հակավիրուսային եւ հակամանրէային ազդեցություն եւ պարունակում են, որպես ակտիվ բաղադրամաս, առնվազն մեկ բանաձեւ (1)-ի միացություն:

Առաջարկվում է նաեւ վիրուսային եւ մանրէային վարակների բուժման եղանակ: 3 անկախ կետ:

(51)⁷ C07D 219/06

(11) 906

(13) A1

C07D 401/12

A61K 31/435

A61K 31/47

(21) 96252

(22) 07.01.1992

(31) 9100628.8

(32) 11.01.1991

(33) GB

9100637.9

11.01.1991

GB

9115956.6

24.07.1991

GB

9115981.4

24.07.1991

GB

(85) 12.08.1996

(86) PCT/EP 92/00020, 07.01.1992

(72) Բ. Ա. Դյումեթր (FR), Ն. Դոդիք (FR)

(71) Լաբորատուար Գլաքսո Ուեյլըմ Ս. Ա. (FR)


(73) Լաբորատուար Գլաքսո Ուեյլըմ Ս. Ա. (FR)

(74) Ռ. Գետրգյան

(54) **Ակրիդինի ածանցյալները**

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական արդյունաբերությանը, մասնավորապես՝ ակրիդինի ածանցյալներին, դրանց ստացման եղանակներին եւ դրանց կիրառմանը բժշկության մեջ:

Ընդհանուր բանաձևի



միացությունները կամ դրանց ֆիզիոլոգիապես ընդունելի աղերը ներառվում են հակառուտոցային ազդեցություն ունեցող դեղագործական բաղադրանյութերի կազմում: Հակառուտոցային ազդեցությունը կայանում է հակառուտոցային ազդանյութի նկատմամբ ուռուցքի զգայունության բարձրացման եւ հակառուտոցային ազդանյութի նկատմամբ ուռուցքի դիմադրողականության նվազեցման մեջ: Դեղագործական բաղադրանյութերը ստանում են per os, ներաշտային, պարենտերալ կամ ներուղիադիքային նշանակման համար կիրառելի ձևով: 6 անկախ կետ:

- | | | |
|---|-----------------|---------|
| (51) ⁷ C07D 503/18
A61K 31/42 | (11) 907 | (13) A1 |
| (21) 97050 | (22) 22.12.1995 | |
| (31) 9426261.5 | (32) 24.12.1994 | (33) GB |
| (85) 20.06.1997 | | |
| (86) PCT/GB95/03039, 22.12.1995 | | |

(72) Ջ. Լ. Քոլուանթ (GB)

(71) Սփըրբորթ Լիմիթիդ (GB)


(71) Սփըրբորթ Լիմիթիդ (GB)

(74) Ռ. Գեորգյան

(54) **Երկամինաթերի երկկլավուլանային աղ եւ դրա ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է դեղաբանությանը, մասնավորապես կլավուլանաթթվի աղերի ստացմանը եւ դրանց օգտագործմանը դեղագործական բաղադրանյութերում:

Երկամինաթերի երկկլավուլանային աղը ստացվել է կլավուլանաթթվից եւ



բանաձևի երկամինաթերից, որտեղ R¹-ը C₁-C₄-ալկիլ են է, իսկ R² եւ R³ ռադիկալներից յուրաքանչյուրը ջրածնի ատոմ է կամ C₁-C₈-ալկիլ:

Երկամինաթերի երկկլավուլանային աղի ստացման եղանակը կայանում է նրանում, որ երկամինաթերը փոխազդում են կլավուլանաթթվի կամ նրա աղի հետ օրգանական լուծիչում եւ անջատում ստացված աղը: 2 անկախ կետ, 3 նկ.:

(51)⁷ C07K 3/02

(11) 908

(13) A2

C07K 3/18

(21) P20000021

(22) 31.03.2000

(41) 08.08.2000

(72) Գ. Սիմոնյան (AM), Գ. Գրիգորյան (AM), Ռ. Սիմոնյան (AM)

(71) Մաքսիմ Սիմոնյան (AM)

(73) Մաքսիմ Սիմոնյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 1ա, բն. 3 (AM)

(54) **Էրիթրոցիտների թաղանթներից Բ-տիպի ցիտոքրոմների ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես՝ Բ-տիպի ցիտոքրոմների ստացման եղանակներին, եւ կարող է կիրառվել բժշկության մեջ, որպես ախտորոշման միջոց:

Բ-տիպի ցիտոքրոմները, ինչպիսիք են՝ Բ-558-III-ը եւ Բ-558-IV-ը, ստանում են արյան Էրիթրոցիտների թաղանթներից, որոնք նախապես մոտ մեկ ժամ պահվում են հիմնային միջավայրում (pH 9-11): Դիալիզից հետո նշված սպիտակուցները մաքրում են՝ անցկացնելով իոնափոխանակման խեժերի միջով, ինչպիսիք են DE-52 ու KM-52 ցելյուլոզները եւ DEAE A-50 սեֆադեքսը, ինչպես նաեւ ժելադոման եղանակով, G-100 սեֆադեքսի միջոցով:

(51)⁷ **C07K 3/02** (11) **909** (13) **A2**
C07K 3/18
 (21) P20000025 (22) 05.04.2000
 (41) 08.08.2000
 (72) Հ. Անդրեասյան (AM)
 (71) Հակոբ Անդրեասյան (AM)
 (73) Հակոբ Անդրեասյան, Երևան, Ամիրյան 24, բն. 17 (AM)
 (54) **Ալկոհոլային խմիչքների հավելույթ**
 (57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ լիկյորի եւ օղու արտադրությանը:
 Ալկոհոլային խմիչքին ավելացվում է 1:100 հա-
 րաբերակցությամբ հավելույթ, որը պարունակում է D-լիմոնեն, միվենոլ եթրային յուղ, 3,7-երկմեթիլ-1,6-
 օկտադիեն-1-ոլ, 4-մեթիլ-1-(1-մեթիլէթիլ)-3-ցիկլոհեք-
 սեն-1-ոլ, ալֆա-3-ցիկլոհեքսեն-1-մեթանոլ, քիմոլ եւ
 էթանոլ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակ-
 ցությամբ, զանգվ. %.

<i>D-լիմոնեն</i>	<i>0,1457-0,1623</i>
<i>միվենոլ եթրային յուղ</i>	<i>0,2523-0,2638</i>
<i>3,7-երկմեթիլ-1,6- օկտադիեն-1-ոլ</i>	<i>0,1198-0,1301</i>
<i>4-մեթիլ-1-(1-մեթիլէթիլ)- 3-ցիկլոհեքսեն-1-ոլ</i>	<i>0,0509-0,0608</i>
<i>ալֆա-3-ցիկլոհեքսեն-1- մեթանոլ</i>	<i>0,1358-0,1535</i>
<i>քիմոլ</i>	<i>0,0708-0,0803</i>
<i>էթանոլ</i>	<i>մնացածը:</i>

Բարելավվում է ալկոհոլային խմիչքների հա-
 վելույթի համը, ուժեղացվում խթանող ու տոնուալ
 բարձրացնող ազդեցությունը:

(51)⁷ **C08F 212/14** (11) **910** (13) **A2**
C08F 8/00
BO1J 20/26
 (21) 99134 (22) 24.12.1999
 (41) 08.08.2000
 (72) Մ. Մացոյան (AM), Մ. Աղաջանով (AM)
 (71) Մարգարիտա Մացոյան (AM), Սիխայիլ Աղաջա-
 նով (AM)
 (73) Մարգարիտա Մացոյան, Երևան, Կորյունի 5, բն.
 31 (AM), Սիխայիլ Աղաջանով, Երևան, Սիխ-
 քար Հերացու 18, բն. 34 (AM)

(54) **Ստիրոլի եւ դիվինիլբենզոլի հիմքով ազոտ
 պարունակող համապոլիմերային կլանիչ՝ արյան մեջ
 խոլեստերինի քանակի նվազեցման համար**
 (57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիային,
 մասնավորապես՝ ստիրոլի եւ դիվինիլբենզոլի հիմ-
 քով ազոտ պարունակող համապոլիմերային կլանիչ-
 ներին:

Կլանիչը ստանում են երկփուլ սինթեզով: Առա-
 ջին փուլում, քլորմեթիլավորված բաղադրիչին ավե-
 լացնում են իմիդազոլ, իսկ երկրորդ փուլում, իմիդա-
 զոլ պարունակող սինթեզված միացությանը ավելաց-
 նում են միկոտինամիդ:

Ստացված կլանիչն ունի հիպոխոլեստերինա-
 յին ազդեցություն, քոլաթթվի կլանման բարձր ունա-
 կություն եւ կարող է կիրառվել աթերոսկլերոզի ու ար-
 յան մեջ խոլեստերինի քանակի ավելացմամբ ուղեկ-
 ցվող այլ հիվանդությունների բուժման եւ կանխար-
 գելման համար:

(51)⁷ **C22B 3/00** (11) **911** (13) **A2**
C22B 11/00
 (21) P20000042 (22) 15.05.2000
 (41) 22.09.2000
 (72) Թ. Ղարիբյան (AM), Լ. Վարսիկյան (AM), Ռ.
 Գրիգորյան (AM), Վ. Մինասյան (AM), Ռ. Մալ-
 խասյան (AM), Ս. Գրիգորյան (AM), Ս. Քաման-
 չաջյան (AM)
 (71) Թամարա Ղարիբյան (AM), Ռազմիկ Մալխաս-
 յան (AM)
 (73) Թամարա Ղարիբյան, Երևան, Տերյան 57, բն.
 18 (AM), Ռազմիկ Մալխասյան, Երևան, Սոսեի
 2/2, բն. 50 (AM)

(54) **Ալտիվ մետաղական կատալիզորդների ստաց-
 ման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է քիմիայի բնագավառին,
 մասնավորապես՝ նանոչափ, ամորֆ մետաղական կա-
 տալիզորդների ստացման եղանակներին, որոնք կա-
 րող են կիրառվել տարբեր քիմիական պրոցեսներում:

Սիլիցիումի կամ ալյումինիումի օքսիդից կազմ-
 ված կրողները տոգորում են մետաղ պարունակող
 աղի լուծույթով, չորացնում 80-100°C ջերմաստի-
 ճանում, շիկացնում օդում, 400°C ջերմաստիճանում՝
 մինչեւ համապատասխան մետաղի օքսիդի ստացու-
 մը, ապա այդ օքսիդը վերականգնում են մինչեւ մե-
 տաղի ստացումը ջրածնի գրգռված մոլեկուլների մի-
 ջոցով, կամ նախապես շիկացված 400°C ջերմաս-
 տիճանում կրողները հեքսանի միջավայրում մեխա-
 նիկորեն պատում են քվանտաքիմիական մեթոդով
 վերականգնված ամորֆ մետաղի նանոչափ մասնիկ-
 ներով:

Գյուտը ապահովում է մետաղի մասնիկների
 նանոչափ, ալտիվ, ամորֆ վիճակում ստացումը:

(51)⁷ **F01L 3/08** (11) **912** (13) **A2**
 (21) 99133 (22) 23.12.1999
 (41) 08.08.2000
 (72) Ա. Աղաբաբյան (AM)
 (71) Աշոտ Աղաբաբյան (AM)
 (73) Աշոտ Աղաբաբյան, Երևան, 16 թաղամաս 23,
 բն. 12 (AM)

(54) **Կափույրի ձողի խցվածքային հանգույց**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մաս-
 նավորապես ներքին այրման շարժիչի գազաբաշխ-
 ման մեխանիզմի կափույրի ձողի խցվածքին:

Հանգույցն ունի կափույրի ձող, ուղղորդիչ ա-

կանոց, վերին եւ ստորին յուղադարձիկ թասակներ: Վերին թասակը կիպ նստեցվածքով տեղակայված է կափույրի ձողի վրա, իսկ ստորինը՝ ուղղորդիչ ականոցի վզիկի վրա:

Թասակների միջեւ բացակը 0,2-ից մինչեւ 0,5 մմ է:

Ձողի տեղաշարժման ընթացքում վերին թասակը նվազագույն բացակով պարփակում է ստորին թասակը՝ նվազեցնելով յուղի կորուստը ձողի եւ ականոցի միջեւ եղած բացակի միջով: 1 նկ.:

(51)⁷ **F02P 13/00**

(11) **913**

(13) **A2**

(21) P200000002

(22) 10.01.2000

(41) 08.08.2000

(72) Մ. Մովսիսյան (AM), Խ. Գետրոյան (AM), Կ. Շահգալոյան (AM), Մ. Եսայան (AM), Լ. Խաչատրյան (AM)

(71) Մերութան Մովսիսյան (AM)

(73) Մերութան Մովսիսյան, Չարենցավան, 6-րդ թաղամաս 6/28 (AM)

(54) **Կայծառ ներքին այրման շարժիչների համար**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ ներքին այրման շարժիչների կայծառներին:

Կայծառը բաղկացած է իրանից, մեկուսիչից, կենտրոնական եւ կողմնային էլեկտրոդներից:

Իրանի փեշի մասն ունի շրջանաձեւ ակոս, որի մակերեսույթը կարող է լինել ուղղանկյուն, կամ արտահայտվել որել է ֆունկցիայով, իսկ փեշի եզրն ունի շեղ ակոսներ: Կենտրոնական եւ կողմնային էլեկտրոդները երկճյուղ են: 3 նկ.:

(51)⁷ **F03G 7/06**

(11) **914**

(13) **A2**

(21) 99130

(22) 20.12.1999

(41) 08.08.2000

(72) Պ. Նաջարյան (AM), Վ. Մնացականյան (AM), Ա. Հովհաննիսյան (AM)

(71) Պետրազ Նաջարյան (AM), Վահան Մնացականյան (AM), Արթուր Հովհաննիսյան (AM)

(73) Պետրազ Նաջարյան, Երեւան, Բարբյուսի 9, բն. 15 (AM), Վահան Մնացականյան, Երեւան, Թումանյան 28/20, բն. 39 (AM), Արթուր Հովհաննիսյան, Երեւան, Դավիթբաշեն, 2-րդ թաղ. 15, բն. 15 (AM)

(54) **Ջերմային շարժիչ**

(57) Գյուտը վերաբերում է մեխանիկական էներգիայի ստացման սարքերին:

Շարժիչն ունի տաք եւ սառը ջերմափոխանակիչներով հաղորդակցվող առնվազն մեկ զույգ միատեսակ գլաններ: Յուրաքանչյուր գլանում տեղադրված է ծնկաձեւ լիսեռի հետ կինեմատիկական կապի մեջ գտնվող միաց: Որպես աշխատանքային մարմին օգտագործվում է ջերմահաղորդականության առավելագույն գործակցով հեղուկ, օրինակ՝ ջուր:

Գլաններում միացներով պարփակված աշխատանքային մարմինը ջերմավերականգնիչի պատյանի անցքերով հաղորդակցվում է սեղմման եւ ընդարձակման փոփոխման ադիաբատ հնարավորությամբ հեղուկով ռեգերվուարին:

Առաջարկված է շարժիչի կոնստրուկտիվ եւ ջերմատեխնիկական պարամետրերի որոշման բանաձեւ:

Պարզեցվում է շարժիչի կառուցվածքը, բարձրացվում են տեսակարար հզորությունը եւ օգտակար գործողության գործակիցը: 10 նկ.:

(51)⁷ **F16 H 21/28**

(11) **915**

(13) **A2**

(21) 99029

(22) 19.03.1999

(41) 08.08.2000

(72) Թ. Ասատրյան (AM)

(71) Թեման Ասատրյան (AM)

(76) Թեման Ասատրյան, Երեւան, Հ. Հակոբյանի նրբ. 1, բն. 36 (AM)

(54) **Աստղարդային շարժիչի պտտող մոմենտի փոխանցման հանգույց**

(57) Գյուտը վերաբերում է ներքին այրման շարժիչներին, հատկապես ներքին այրման աստղարդային շարժիչի հանգույցներին:

Ոլորող մոմենտի փոխանցման հանգույցն ունի իրան, հակադիր այտերով միաձուլված լիսեռ, երկու առամնամիկ, որոնցից մեկը երկկողմանի գլանային դարձյակներով է, եւ տանող լիսեռ: Միաձուլված լիսեռը հողակապորեն միացված է երկկողմանի գլանային դարձյակներով ատամնամիկին, իսկ վերջինիս դարձյակները՝ իրանին: Միաձուլված լիսեռի պտույտները ատամնամիկների միջոցով փոխանցվում են տանող լիսեռին:

Կառուցվածքի պարզեցում: 1 նկ.:

(51)⁷ **F16H 21/28**

(11) **916**

(13) **A2**

(21) 99030

(22) 19.03.1999

(41) 08.08.2000

(72) Թ. Ասատրյան (AM)

(71) Թեման Ասատրյան (AM)

(73) Թեման Ասատրյան, Երեւան, Հ. Հակոբյանի նրբ. 1, բն. 36 (AM)

(54) **Ներքին այրման աստղարդային շարժիչ**

(57) Գյուտը վերաբերում է ներքին այրման շարժիչներին, մասնավորապես աստղարդային ներքին այրման շարժիչին:

Շարժիչի ութ գլանները զույգ առ զույգ դեմ հանդիման տեղադրված են ուղղանկյուն, քառակուսի նիստով գուգահեռանիստի չորս կողերի երկայնքով: Շարժիչն ունի երկու հետադարձ-առաջընթաց շարժում ապահովող մեխանիզմ, ընդ որում, միեւնույն անկյունագծային հարթության մեջ գտնվող երկու զույգ գլանները հողակապով միացված են մեկ հետա-

դարձ-առաջընթաց շարժում ապահովող մեխանիզմին, որի միջոցով, նույնպես հողակապով միացված են հետադարձ-առաջընթաց շարժումը պատասկանի փոխակերպող եւ տանող լիսեռին հաղորդող հանգույցին:

Շարժիչի բոլոր գլանների աշխատանքի միատեսակ պայմանների ապահովում, երկարակեցության բարձրացում: 1 նկ.:

- (51)⁷ **F16H 21/28** (11) **917** (13) **A2**
 (21) 99031 (22) 19.03.1999
 (41) 08.08.2000
 (72) Թ. Ասատրյան (AM)
 (71) Թեվման Ասատրյան (AM)
 (73) Թեվման Ասատրյան, Երեւան, Հ. Հակոբյան նրբ. 1, բն. 36 (AM)
 (54) **Երկտակտ ներքին այրման աստղադրային շարժիչ**
 (57) Գյուտը վերաբերում է ներքին այրման շարժիչներին, հատկապես երկտակտ ներքին այրման աստղադրային շարժիչին:

Շարժիչն ունի չորս գլան, միաժույգ լիսեռ եւ ատամնավալային զույգ, ընդ որում, գլանները տեղադրված են զույգ առ զույգ դեմ հանդիման, փոխողդահայաց, բայց միմյանցից հեռացված առանցքներով: Մխոցները շարժաթելերով հողակապորեն միացված են միաժույգ լիսեռի հակադիր այտերին:

Պարզեցվում է շարժիչի կառուցվածքը, եւ ստեղծվում կրկնակի հզորության զարգացման հնարավորություն: 1 նկ.:

- (51)⁷ **G01F 1/00** (11) **918** (13) **A2**
 (21) P20000043 (22) 16.05.2000
 (41) 22.09.2000
 (72) Ռ. Մխիթարյան (AM), Ա. Դուլյան (AM), Ա. Գալայան (AM), Ս. Դոնադյան (AM)
 (71) Ռուդիկ Մխիթարյան (AM)
 (73) Ռուդիկ Մխիթարյան, Էջմիածին, Վ. Կոստանյանի 1, բն. 43 (AM)
 (54) **Ջրի ծախսի հսկման համակարգ**
 (57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ ջրի ծախսի հսկման համակարգերին եւ կարող է օգտագործվել քաղաքային տնտեսությունում՝ բնակարանային ջրի ծախսը հսկելու համար:

Համակարգն ունի բաժանորդների անհատական ջրաչափիչ սարքեր, որոնք ներառում են տուրբին, տվիչ, ձեւավորիչ, միկրոհսկիչ, կառավարվող էլեկտրափական, կապի գծեր, մի խումբ բաժանորդներին սպասարկող կառավարվող բլոկներ, որոնք ունեն ցուցասարք, կառավարման վահան, սնուցման աղբյուր, կապի գծեր եւ կենտրոնական համակարգիչ: Համակարգը երկաստիճան է: Ջրաչափիչ սարքերը խմբակային բլոկներին միացված են ցածրա-

վոլտ կապի գծերի միջոցով, իսկ յուրաքանչյուր խմբակային բլոկ համակարգչին միացված է ցանկացած հայտնի կապի միջոցով: Տվիչն ունի մեկը մյուսի մեջ փոխողդահայաց դասավորված ինդուկտիվ փաթույթներ, որոնց հատման կենտրոնը համընկնում է տուրբինի երկրաչափական առանցքին, իսկ տուրբինն ունի կենտրոնում տեղակայված ֆեռիտային թիթեղ:

Ապահովվում է շահագործման անվտանգությունը: 2 նկ.:

- (51)⁷ **G01F 1/34** (11) **919** (13) **A2**
 (21) P20000030 (22) 13.04.2000
 (41) 08.08.2000
 (72) Գ. Ավետիսյան (AM)
 (71) Գուրգեն Ավետիսյան (AM)
 (73) Գուրգեն Ավետիսյան, Գյումրի, Տիմիրյազեի 32 (AM)
 (54) **Հեղուկների եւ գազերի ծախսի եւ քանակի չափիչ սարք**

(57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ ճնշման փոփոխական անկման մեթոդով հեղուկների եւ գազերի ծախսի եւ քանակի չափիչ սարքերին եւ կարող է օգտագործվել գազային, ջերմային եւ ջրամատակարարման ցանցերում:

Սարքն ունի երկու խոռոչներից կազմված չափիչ խողովակաշար, որի մեջ տեղադրված է նեղացում ունեցող հարմարանք: Խողովակաշարի խոռոչները խողովակների միջոցով միացված են դիֆուզմոնտերին: Սարքն ունի նաեւ հավասարեցնող եւ անջատող փականներ:

Բարձրանում է չափման ճշտությունը՝ ցանցերում բաբախումների առկայության դեպքում: 6 նկ.:

- (51)⁷ **G01L 9/08** (11) **920** (13) **A2**
G01L 9/12
 (21) 99128 (22) 15.12.1999
 (41) 08.08.2000
 (72) Վ. Վարդանյան (AM), Վ. Վարդանյան (AM), Ն. Վարդանյան (AM)
 (71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
 (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105 (AM)
 (54) **Ճնշման ունակային հայտնիչ**
 (57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկային, մասնավորապես՝ ճնշման ունակային հայտնիչներին եւ կարող է կիրառվել թռչող ապարատների բարձրաչափերում:

Հայտնիչն ունի երեք մասից բաղկացած իրան, երկու ընդունող խուց՝ մեմբրաններով, որոնց կոշտ կենտրոնները միացված են լծակի երկու բազուկների վրա՝ տեղադրված ուղղանկյուն թիթեղի տեսքով կա-

տարված շարժական էլեկտրոդների կենտրոններին: Լծակն ունի առաձգական հող՝ երկու միջակայի տեսքով, որոնք միացնում են թիթեղի եւ հենարանի տարրի ուղղանկյուն շրջանակի կենտրոնները: Իրանի միջնամասում կա ուղղանկյուն շրջանակ, որի ներսում եւ հարթության վրա տեղակայված է հենարան, որի միջնամասում տեղադրված են մեկուսացված անշարժ էլեկտրոդները: Հենարանն ունի ձող, որի միջոցով այն միացված է իրանի ներքեւի մասում տեղակայված կոշտ կենտրոնով եւ դիրքի կարգավորման համակարգով մեմբրանին: Անշարժ էլեկտրոդների հենարանը տեղակայված է միջակայերի միջոցով իրանին միացված հեծանի կենտրոնական մասում եւ իրանի հետ կազմում է մեկ ամբողջություն: Հեծանի ծայրերը ձողերի միջոցով միացված են իրանի հիմքին տեղակայված կոշտ կենտրոններով մեմբրաններին, որոնք տեղակայված են համապատասխան լծակի ծայրին: Լծակի մյուս ծայրն ամրացված է լրացուցիչ մանրաքայլ պտտատակածողի ծայրին, որը ազատ տեղակայված է բաց շրջանակի անցքում:

Բարձրացվում է հայտնի թրթռահարվածային կայունությունը, մեծացվում ջերմակայունությունը, լայնացվում ունակությունների անհատական կարգավորումը ինչպես հավաքման, այնպես էլ շահագործման ժամանակ: 4 նկ.:

- (51)⁷ **G01V 7/00** (11) **921** (13) **A1**
 (21) 97037 (22) 04.10.1995
 (31) 264610 (32) 04.10.1994 (33) NZ
 (85) 02.05.1997
 (86) PCT/GB95/02349, 04.10.1995
 (72) Ա. Վ. Վերյասկին (NZ)
 (71) Գրեվիտեք Ինսթրումենթս Լիմիթիդ (GB)
 (73) Գրեվիտեք Ինսթրումենթս Լիմիթիդ (GB)
 (74) Ռ. Գետրոյան
 (54) **Գրավիտացիոն դաշտի պարամետրերի չափման սարք եւ եղանակ**
 (57) Գյուտը վերաբերում է գրավիտացիոն դաշտերի չափմանը, մասնավորապես, գրավիտացիայի գրադիենտաչափությանը եւ գրավիտացիոն գրադիենտի տենզորի ոչ անկյունագծային բաղադրիչների բացարձակ արժեքների չափման եղանակին:

Սարքն ունի երկու ծայրերից ամրացված լար, որը երկու գրգռման տլենոիդների հետ ինդուկտիվորեն կապված գերհաղորդիչ հաղորդաշղթայի մասն է: Լարի շեղումը ի պատասխան գրավիտացիոն դաշտի ազդեցությանը գրանցվում է մագնիսական հոսքի երկու կերպափոխիչներով, որոնցից յուրաքանչյուրն ունի ազդանշանային եւ երկու չափիչ կոճեր: Չափիչ կոճերի գույգերը տեղակայված են երկու ուղղահայաց հարթություններում՝ ստեղծելով երկու անկախ չափիչ անցուղի: Յուրաքանչյուր կերպափոխիչ երկու թելերը հավասարակշռված են այնպես,

որ ելքային լարման կերպափոխեն միայն լարի սեփական ասիմետրիկ մոդերի ամպլիտուդը: Յուրաքանչյուր անցուղու ելքային լարումն օգտագործվում է հակադարձ կապի հոսանքի տեղաբաշխման համար՝ լարին զուգահեռ եւ նրա անմիջական մոտակայքում: Շնորհիվ հակադարձ կապի հոսանքի կարգավորման հնարավորության, կարելի է կարգավորել լարի առաջին ասիմետրիկ մոդի ռելաքսացիայի արդյունավետ ժամանակը եւ ռեզոնանսային հաճախությունը, մինչդեռ սիմետրիկ մոդերը մնում են անփոփոխ, ինչը բարձրացնում է սարքի զգայունությունը գրավիտացիայի գրադիենտի նկատմամբ: Բարձրանում է նաեւ չափումների ճշտությունը, նվազում է վիբրացիայի աղմուկների ազդեցությունը չափման արդյունքների վրա: 2 անկախ կետ, 2 նկ.:

- (51)⁷ **H01B 12/00** (11) **922** (13) **A2**
H01L 39/24
 (21) 99106 (22) 12.10.1999
 (41) 08.08.2000
 (72) Ն. Սարգսյան (AM), Ռ. Անանյան (AM), Լ. Նազարյան (AM)
 (71) Նորայր Սարգսյան (AM), Ռադիկ Անանյան (AM), Լյուդվիգ Նազարյան (AM)
 (73) Նորայր Սարգսյան, Երեւան, Շիրվանգադեի 4/2, բն. 10 (AM), Ռադիկ Անանյան, Երեւան, Մ. Սարգսյան 27, բն. 28 (AM), Լյուդվիգ Նազարյան, Երեւան, Մարկվարտի 101 (AM)
 (54) **Գերհաղորդիչ նյութ եւ դրա ստացման եղանակ**
 (57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային, մասնավորապես՝ գերհաղորդիչ նյութերին եւ դրանց ստացման եղանակին:
 Գերհաղորդիչ նյութը պարունակում է Nb, Al, Cu, Ag, Ge, Zn, Sn՝ հետեւյալ տոկոսային հարաբերությամբ(%). Nb= 80-91,5; Al =2,0-5,0; Cu =3,0-8,5; Ag =0,15-0,3; Ge=0,2-0,5; Zn=1,0-4,0; Sn=1,0-3,5: Անցման կրիտիկական ջերմաստիճանը $T_c=213.15^\circ\text{K}$ է, իսկ տեսակարար դիմադրությունը՝ $\rho=10^{-23}-10^{-25}\text{Օմ.սմ.}$

Ըստ եղանակի գերհաղորդիչ նյութի ստացումը սկսում են 2650-2750°C ջերմաստիճանից, 0,1 մթն. ճնշման ներքո, եւ հետագա սառեցման պայմաններում բաղադրիչներն ավելացվում են հետեւյալ հերթականությամբ՝ Nb, Cu, Ag, Ge, Al, Zn, Sn: Սառեցման ընթացքում մետաղներն ավելացվում են այն ժամանակ, երբ համահավաքի ջերմաստիճանը մետաղի հալման ջերմաստիճանից բարձր է 15-20 տոկոսով, որից հետո 1000°C-մ էլեկտրաստատիկ դաշտում համահավաքը սառեցվում է մինչեւ 1200°C ջերմաստիճանը, իսկ 1200°C-ից մինչեւ սենյակային ջերմաստիճանը՝ 10000-12000 Ա/մ մագնիսական դաշտում: 2 անկախ կետ:

- (51)⁷ **H01L21/18** (11) **923** (13) **A2**
 (21) 99095 (22) 06.09.1999
 (41) 08.08.2000
 (72) Գ. Այվազյան (AM), Ա. Շաբոյան (AM)
 (71) Գազիկ Այվազյան(AM), Արմեն Շաբոյան (AM)
 (73) Գազիկ Այվազյան, Երեւան, Ավան, Դանիել Վարուժանի քաղ., 10/19 (AM), Արմեն Շաբոյան, Երեւան, Կորեական 14 (AM)

(54) Ուժային սիլիցիումային տրանզիստորների պատրաստման եղանակ

- (57) Գյուտը վերաբերում է ուժային կիսահաղորդչային տեխնիկային եւ կարող է կիրառվել ուժային սիլիցիումային տրանզիստորների պատրաստման համար:

Գյուտի էությունն այն է, որ ուժային սիլիցիումային տրանզիստորների պատրաստման եղանակում, ըստ որի կատարում են n^+-n^+ բազային սիլիցիումային կառուցվածքի նախապատրաստում, p^+-p բազային շերտի ձեւավորում՝ ակցեպտորային խառնուրդների դիֆուզիայով, սիլիցիումի երկօքսիդի դիմակային թաղանթի ստեղծում, այդ թաղանթում լուսավիմազրության մեթոդով պատուհանների բացում, էմիտերային գրպանիկների ստեղծում, էմիտերային n^+ լոկալ տիրույթների ձեւավորում դոնորային խառնուրդների դիֆուզիայով, ջերմային մշակումներ եւ լուսավիմազրական գործողությունների իրականացում, գյուտի համաձայն՝ էմիտերային գրպանիկների ստեղծումը իրականացվում է անոդային խառնատման մեթոդով՝ 1.4-1.6 գ/սմ³ ծավալային խտությամբ ծակոտկեն սիլիցիումի առաջացման ռեժիմում:

Այս եղանակով կարելի է բարելավել ուժային տրանզիստորների էլեկտրաֆիզիկական պարամետրերը եւ բարձրացնել պիտանի սարքերի ելքի տոկոսը: 7 նկ.:

- (51)⁷ **H01L 23/36** (11) **924** (13) **A2**
H05K 7/20
 (21) P20000023 (22) 04.04.2000
 (41) 08.08.2000
 (72) Ս. Պետրոսյան (AM)
 (71) Սուրեն Պետրոսյան (AM)
 (73) Սուրեն Պետրոսյան, Երեւան, Ավան, Խուդյակովի 84/2, բն. 11 (AM)

(54) Կիսահաղորդչային սարքերի հովացման սարքվածք

- (57) Գյուտը վերաբերում է կիսահաղորդչային սարքերի հովացմանը եւ կարող է կիրառվել ռադիոէլեկտրոնային ապարատուրայի նախագծման ժամանակ:

Կիսահաղորդչային սարքերի հովացման սարքվածքը պատրաստված է ջերմահաղորդիչ նյութի ժապավենից, որը ծավալված է կնճռածալքերի ձեւով, ծավալվածքի թիթեղներից մեկը կիպ սեղմված է հովացման սարքի ջերմանջատող ճակատին, իսկ ծայրային

թիթեղները կարող են լինել ինչպես ազատ, այնպես էլ սարքի իրանի տարրերին ամրացված:

Նման կառուցվածքի շնորհիվ ավելացվում է կիսահաղորդչային սարքերի հովացման սարքվածքի ուրվագծի փոփոխման ազատության աստիճանների թիվը: 1 նկ.:

- (51)⁷ **H01L 37/00** (11) **925** (13) **A2**
 (21) 99071 (22) 15.07.1999
 (41) 08.08.2000
 (72) Ս. Գրիգորյան (AM), Ռ. Աբրահամյան (AM), Վ. Նազարյան (AM)
 (71) Սուրեն Գրիգորյան (AM), Վաղինակ Նազարյան (AM)
 (73) Սուրեն Գրիգորյան, Երեւան, Մոսկովյան 37, բն. 20 (AM), Վաղինակ Նազարյան, Երեւան, Լեւինգրադյան 48, բն. 11 (AM)

(54) Մարդու եւ գյուղատնտեսական կենդանիների խորը սառեցված սերմնահեղուկի հալեցման ապարատ

- (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը եւ անասնապահությանը, մասնավորապես՝ խորը սառեցված սերմնահեղուկի հալեցման ապարատներին:

Ապարատը բաղկացած է իրանից, որի մեջ տեղակայված են ջրային բաղնիք, տաքացուցիչ տարրեր, կենտրոնախույս պոմպ, հեղուկի խառնիչ, իրանի առջեւից ամրացված է հերմետիկ փակվող ստերիլ հալեցման կոնաձեւ խցիկ, որի մեջ տեղադրվում է հալեցվող սերմնահեղուկը: Էլեկտրաջերմակարգավորիչի միջոցով ապահովվում է հալեցման $37^{\circ}-40^{\circ}\text{C}$ ջերաստիճանը: Ջերմահաղորդիչ հեղուկը պոմպով մղվում է հալեցման խցիկ, որտեղ 10 վայրկյանի ընթացքում կատարվում է սերմնահեղուկի հալեցումը:

Ապարատի առավելություններն են՝ հալեցման ժամանակի կրճատումը, հալեցված սերմնահեղուկի կենսաբանական լիարժեքության եւ բեղմնավորելու հատկությունների պահպանումը: 1 նկ.:

- (51)⁷ **H01L 39/12** (11) **926** (13) **A2**
 (21) P20000017 (22) 15.03.2000
 (41) 22.09.2000
 (72) Ս. Հայրապետյան (AM), Ա. Տոնոյան (AM), Է. Առաքելովա (AM), Ա. Սահակյան (AM), Ս. Դավթյան (AM)
 (71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
 (73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) Պոլիմեր-կերամիկական հիմքով բարձրջերմաստիճանային գերհաղորդիչ իրերի ստացման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է բարձրջերմաստիճանային գերհաղորդչականության բնագավառին, մասնավորապես՝ գերհաղորդիչ պոլիմեր-կերամիկական հիմ-

քով կոմպոզիցիաների ստացմանը եւ կարող է կիրառվել պահանջվող գերհաղորդիչ բնութագրերով օժտված բարձրջերմաստիճանային իրերի ստացման համար:

Ըստ գյուտի, գերհաղորդիչ կերամիկայի եւ մանրահատիկ պոլիմերային կապակցանյութի փոշեման բաղադրամասերի մեխանիկական խառնուրդը ենթարկում են ջերմային մամլման, խառնուրդի մեջ լրացուցիչ ավելացնում են 2-5 զանգվ.% հակաօքսիդանտ, օրինակ՝ իրգանօքս կամ ՆԳ-2246, իսկ խառնուրդի մամլումը իրականացնում են պոլիմերային կապակցանյութի հալման կամ ապակիացման ջերմաստիճանից ավելի բարձր ջերմաստիճաններում:

(51)⁷ H03M 1/66

(11) 927

(13) A2

(21) 99114

(22) 26.10.1999

(41) 08.08.2000

(72) Վ. Հակոբյան (AM), Վ. Ավագյան (AM), Ա. Վաթյան (AM)

(71) Վարուժան Հակոբյան (AM), Արման Վաթյան (AM)

(73) Վարուժան Հակոբյան, Երեւան, Թամանյան 3, բն. 63 (AM), Արման Վաթյան, Երեւան, Ալեք Մանուկյան 15, բն. 8 (AM)

(54) **Գործառական պիեզոէլեկտրոնային կերպափոխիչ**

(57) Գյուտը վերաբերում է հաշվողական տեխնիկային եւ ավտոմատիկային, մասնավորապես՝ պիեզոէլեկտրոնային կերպափոխման տեխնիկային:

Գործառական պիեզոէլեկտրոնային կերպափոխիչն ունի ձայնային միաձույլ երկձեւ բազմաէլեկտրոդային ելքային թիթեղի կառուցվածքով պիեզոէլեկտրամիկական տարր՝ պիեզոկառուցվածքի ձայնային տատանումների քվադրեզոնանսային գրգռման հաճախությունները որոշող գործառական տեղայնային տիրույթների ընդհատուն քվանտացվող մնացորդային բեռնայնություններով: Անալոգաքվանշանային եւ քվանշանաանալոգային կերպափոխումներն իրականացվում են միասնական գործույթային միջավայրում ամպլիտուդային հայտանիշով, կախված մանակային պիեզոէլեկտրափոխված ազդանշանների ձեւավորման տրակտերի ուղիների աշխատանքային ընդգրկույթի կարգավորումից, ինչպես դրական կամ բացասական, այնպես էլ երկբևեռ ելքային ու մուտքային մանակային ազդանշանների արժեքների տիրույթում:

Նման կերպափոխիչն օժտված է համապիտանիությամբ ու գործույթային ճկունությամբ եւ կարող է կիրառվել տարբեր դասերի կառավարման ճշգրիտ պիեզոէլեկտրոնային համակարգերում: 1 նկ.:

(51)⁷ H03M 1/66

(11) 928

(13) A2

(21) 99115

(22) 26.10.1999

(41) 08.08.2000

(72) Վ. Հակոբյան (AM), Վ. Ավագյան (AM), Ա. Վաթյան (AM)

(71) Վարուժան Հակոբյան (AM), Արման Վաթյան (AM)

(73) Վարուժան Հակոբյան, Երեւան, Թամանյան 3, բն. 63 (AM), Արման Վաթյան, Երեւան, Ալեք Մանուկյան 15, բն. 8 (AM)

(54) **Պիեզոէլեկտրոնային քվանշանաանալոգային կերպափոխիչ**

(57) Գյուտը վերաբերում է հաշվողական տեխնիկային եւ ավտոմատիկային, մասնավորապես՝ պիեզոէլեկտրոնային կերպափոխման տեխնիկային:

Պիեզոէլեկտրոնային քվանշանաանալոգային կերպափոխիչն ունի ձայնային միաձույլ երկձեւ ելքային թիթեղների կառուցվածքով պիեզոէլեկտրամիկական տարր՝ պիեզոկառուցվածքի գրգռման քվադրեզոնանսային հաճախությունները որոշող գործույթային տեղայնային տիրույթների ընդհատուն քվանտացված մնացորդային բեռնայնություններով: Երկուական կողի մանակային ազդանշանի կերպափոխումը իրականացվում է ամպլիտուդահաճախային ու հաճախային հայտանիշներով, քվադրեզոնանսային տատանումների գրգռումով, տեղայնային տիրույթների պիեզոէլեկտրափոխված ելքային ազդանշանների ձեւավորումով, քվադրեզոնանսային հաճախության որոշումով եւ պիեզոէլեկտրափոխված ազդանշանների հաճախային ընտրությամբ ելքային մանակային ազդանշանի առանձնացումով:

Առաջարկված կառուցվածքով կարելի է բարձրացնել պիեզոէլեկտրոնային քվանշանաանալոգային կերպափոխիչի արագագործությունը եւ ընդլայնել գործառման հնարավորությունները: 2 նկ.:

(51)⁷ H05B 41/00

(11) 929

(13) A2

(21) P20000078

(22) 14.08.2000

(41) 22.09.2000

(72) Ա. Մկրտչյան (AM), Գ. Ասատրյան (AM)

(71) Ալպիկ Մկրտչյան (AM)

(73) Ալպիկ Մկրտչյան, Երեւան, Հր. Քոչարի 20, բն. 3 (AM)

(54) **Ալյումաֆոսֆատային կապակցանյութի ստացման եղանակ եւ դիմադրական բաղադրանյութ**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային եւ կարող է կիրառվել ջերմաառաքիչների պատրաստման ժամանակ:

Ֆոսֆորական թթվի վրա ազդում են ալյումինի հիդրօքսիդով՝ 3:1 կշռային հարաբերակցությամբ, ընդ որում, որպես ալյումինի հիդրօքսիդ վերցնում են ալյումինե նրբաթիթեղից տրանսֆորմատորների փաթույթների արտադրության թափոնը, որը պարունակում է 3-5% Al, 95-97% Al(OH)₃, ռեակցիան ընթանում է էկզոթերմիայի հաշվին 0,5 ժամում:

Դիմադրական բաղադրանյութը պարունակում է մանրադիսպերս էլեկտրահաղորդիչ հավելում, օրինակ, գրաֆիտ, հանքային լցանյութ՝ բազալտի, տուֆի, գրանիտի կամ դրանց խառնուրդի, յուրահա-

տուկ կավի հիման վրա եւ կապակցանյութ: Օրինակ, որպէս լցանյութ վերցված է բազալտի, տուֆի, գրաֆիտի հղկումից առաջացած թափոնը կամ դրանց խառնուրդը, իսկ որպէս կապակցանյութ՝ ֆոսֆորական թթվի 1 եւ 2 տեղակալված ալյումինի աղերը: Բաղադրամասերի հարաբերակցությունը բաղադրանյութում, կշռ. %՝ էլեկտրահաղորդիչ գրաֆիտ 7–10, լցանյութ 55–63, կապակցանյութ 25–30:

Գյուտը հնարավորություն է տալիս, օգտագործելով բնական թափոնները եւ ածխածնի տարբեր վերափոխումները, ստանալ թաղանթային եւ ծավալային ջերմաառաքիչներ: 2 անկախ կետ:

- | | | |
|------------------------------|-----------------|---------|
| (51) ⁷ H05B 41/4 | (11) 930 | (13) A2 |
| (21) P20000027 | (22) 11.04.2000 | |
| (41) 08.08.2000 | | |
| (72) Ա. Հարությունյան (AM) | | |
| (71) Աշոտ Հարությունյան (AM) | | |

(73) Աշոտ Հարությունյան, Երեւան, Շիրվանզադեի 4, բն. 6 (AM)

(54) **Բարձր ճնշման գազապարպիչ լամպերի խմբակային եղանակով իմպուլսային լարումով սնող սարք**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկայի բնագավառին, մասնավորապէս՝ գազապարպիչ լամպերին եւ կարող է կիրառվել արտադրական շինությունների լուսավորման եւ արտաքին լուսավորման համակարգերում:

Գյուտի էությունն այն է, որ լամպերը սնվում են միաբեւեռ իմպուլսային լարումով, ինչը թույլ է տալիս կիրառել ինդուկտիվ բալաստային դիմադրություն: Լամպերի խմբի համար օգտագործվում է մեկ երկպարբերական ուղղիչ կամրջակ, որի շնորհիվ լուսավորման էլեկտրական ցանցի լարումը դառնում է հաստատուն: Յուրաքանչյուր լամպի համար նախատեսված տրանզիստորային բանալիները կառավարվում են մեկ ընդհանուր աղբյուրից:

Լավանում են շահագործման ցուցանիշները: 1 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՄՅ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
Ս օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ստացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24 թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
41 հայտի համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
45 արտոնագրային փաստաթղթի հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչ(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 հղումներ
57 ռեֆերատ
62 հայտը, որից զատվել է տվյալ հայտը
65 ավելի վաղ հրապարակված արտոնագիր
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը, երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտ (PCT)
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51)⁷ **D04C 7/00** (11) **34** (13) **U**
 (21) U20000118 (22) 21.12.2000
 (72) Մ. Բարսեղյան (AM), Հ. Բարսեղյան (AM), Լ. Ներսիսյան (AM)
 (71) Մարինե Բարսեղյան (AM), Հենրիկ Բարսեղյան (AM)
 (73) Մարինե Բարսեղյան, Երեւան, Գ. Նժդեհի 30/3, բն. 31 (AM), Հենրիկ Բարսեղյան, Երեւան, Գ. Նժդեհի 30/3, բն. 31 (AM)
 (54) **Մաքրամեի հյուսման սարք**
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է մաքրամեի ձեռքով հյուսման սարքերին:
 Մաքրամեի հյուսման սարքն ունի փոխադրացավոր խողովակներից բաղկացած երկու կանգնակ եւ հյուսվածքի հենաձող: Յուրաքանչյուր կանգնակի ներքեւի խողովակը տեղակայված է հորիզոնական առանցքի շուրջը շրջադարձման հնարավորությամբ եւ փոխգործակցում է կարգավորման հողակապավոր հենալծակի հետ, ունի հենարաններ՝ հանովի հարմարանքների (ուղղանկյունաձեւ փափուկ բարձիկի, գլանաձեւ փափուկ բարձիկի) տեղակայման համար: Նշված խողովակը եւ կարգավորման հողակապավոր հենալծակը տեղակայված են բարձակների վրա, որոնք ամրակցված են հիմքի վրա ձգված պտուտակամամուլին: Ընդ որում, հյուսվածքի հենաձողը կարող է ունենալ տարբեր հատվածքներ եւ առանցքային տեղաշարժման հնարավորությամբ տեղակայված սահմանափակիչներ:
 Սարքը համապիտանի է, թույլ է տալիս կատարել տարբեր չափերի ու ձեւերի մաքրամեի հյուսման աշխատանքներ: 8 նկ:

(51)⁷ **F04B 39/12** (11) **35** (13) **U**
 (21) U20010011 (22) 23.01.2001
 (72) Ռ. Թովմասյան (AM)
 (71) Ռոբերտ Թովմասյան (AM)
 (73) Ռոբերտ Թովմասյան (AM)
 (74) Ա. Պետրոսյան
 (54) **Գազային ճնշակ**
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է բարձր ճնշման գազային ճնշակներին:
 Օգտակար մոդելի էությունն այն է, որ որպես իրան, ուղղորդիչ սողան եւ շարժաբեր մեխանիզմ ծառայում են ցածր ճնշման ճնշակի համապատասխանաբար իրանը, գլանը, մխոցը եւ շարժաբեր մեխանիզմը:
 Օգտակար մոդելի նախընտրելի տարբերակում սողանի հողակապային միացումը մխոցակոթի երկրորդ ծայրին կատարված է կցաշուրթի միջոցով, որը կոշտ ամրակցված է սողանի ճակատին, ընդ որում կցաշուրթն ունի կենտրոնական առանցքային բնիկ, իսկ մխոցակոթի երկրորդ ծայրն ունի գլխիկ, որը տեղադրված է կցաշուրթի բնիկի մեջ: Սողանի եւ մխոցի տրամագծերի հարաբերակցությունը 200:29 – 200:27 է, իսկ կցաշուրթի վրա եւ սողանի ճակատին կան համառանցք միջանցիկ անցքեր՝ մխոցի տեղաշարժման գոտի քսուքի ներմուծման համար:
 Օգտակար մոդելը ապահովում է բարձր եւ ցածր ճնշման ճնշակների կառուցվածքների ունիֆիկացման մակարդակի բարձրացում եւ դրանով ընդլայնում բազային մոդելի հիման վրա թողարկվող արտադրանքի տեսակաշարը: 2 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՄՀ ST.80 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
24	թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը(ները)
54	արդյունաբերական նմուշի անվանումը
55	արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
57	էական հատկանիշների ամբողջությունը
71	հայտատու(ները), երկրի կոդը
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51)⁶ **09-01** (11) **50** (13) **S**
 (21) 200000008 (22) 21.12.2000
 (72) Կ. Ջեյթլյան (US), Գ. Օսկանյան (BE)
 (71) «Ջերմուկ» ՓԲԸ (AM)
 (73) «Ջերմուկ» ՓԲԸ, ք. Ջերմուկ, Գործարանային 1 (AM)
 (54) **Շիշ**
 (55)



(57) Շիշի հորինվածքային տարրերի կազմը՝ իրան, ուսեր, վզիկ եւ պսակիկ • գլանաձեւ իրան՝ միջին եւ ներքեւի մասերում միմյանցից նեղ ելուստով առանձնացված օղակաձեւ խորացումներով, որոնք համապատասխանաբար նախատեսված են՝ մեծը՝ պիտակը փակցնելու, իսկ փոքրը՝ «ՄԱՅՐ ԳՈՐԾԱՐԱՆ ՋԵՐՄՈՒԿ 1951» գրության համար • իրանի հետ սահուն լծորդված, ուռուցիկ հատած կոնի տեսքով ուսեր • ուսերի ներքեւի մասում՝ իրարից հավասար հեռավորության վրա գտնվող երեք հարթ շրջանների մեջ առնված եղնիկի գլխի պատկերումներ • կարճ, գլանաձեւ վզիկ • ցցուն, օղակաձեւ ելուստով ավարտվող կոնական պսակիկ:

(51)⁶ **09-01** (11) **51** (13) **S**
 (21) 200000007 (22) 04.12.2000
 (31) 4 00 05 243. 1 (32) 03.06.2000 (33) DE
 (72) Վիլլի Դիտե (DE)
 (71) Հենկել Կոմանդիտգեզելշաֆտ աուֆ Ակցիեն (DE)
 (73) Հենկել Կոմանդիտգեզելշաֆտ աուֆ Ակցիեն (DE)
 (74) Ա. Պետրոսյան
 (54) **Սրվակ (երկու տարբերակ)**

(55)



(57) Հիմնական հորինվածքային տարրերի կազմը՝ իրան եւ դրա վերնամասում գտնվող թասակ՝ կափարիչի հետ • իրանի եւ թասակի տափակացված, համահարթեցված կատարում, ընդ որում նեղ եւ լայն կողմերի միջեւ անցումները կլորացված են • իրանի ներքեւի մասում՝ ալիքաձեւ բաժանարար գծով առանձնացված բռնելու տեղամաս՝ դրա ողջ մակերեսի վրա բաշխված փոքրիկ ելունների բազմությամբ • կլորացված թասակ, որի ներքեւի եզրը ալիքաձեւ է եւ նեղ մասերում հակադարձ է իրանի բռնելու տեղամասի բաժանարար գծին • թասակի վերնամասում՝ սրվակի ելքի անցքը փակող կափարիչ, դրա տակ գտնվող կլորացված փորվածքով:

Առաջին տարբերակը բնութագրվում է թասակի եւ իրանի ներքեւի մասի կատարմամբ հակադիր գույներով՝ իրանի մնացած մասի նկատմամբ:

Երկրորդ տարբերակը բնութագրվում է թասակի կատարմամբ հակադիր գույներով՝ իրանի նկատմամբ եւ իրանի ներքեւի մասի (բաժանարար գծով)՝ միջին մասի նկատմամբ անջատովի կառուցվածքով:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ
ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային եւ սպասարկման նշաններին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

600	նախկին ԽՍՀՄ վկայականի համարը եւ հայտի ներկայացման թվականը
111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
510	ապրանքների եւ (կամ) ծառայությունների ցանկը
511	դասերը ըստ նշանների գրանցման ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման (Նիցայի դասակարգում)
526	չպաշտպանվող տարրեր
540	ապրանքային նշանի պատկերը
551	կոլեկտիվ նշան
554	ծավալային նշան
591	գույնը եւ գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը եւ թվականը
730	նշանի սեփականատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար


Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին

(210) **990424** (111) **5301**
 (220) **20.05.1999** (151) **11.09.2000**
 (181) **20.05.2009**
 (730) Ուորներս Ու. Ս., Ինք., Գելավերի նահանգ, ՄՏ
 (540)

NANCY GANZ

(511)(510)
 դաս 25. հագուստ, կոշիկեղեն, գլխարկներ:
 (740) Ռ. Գեորգյան

(210) **990446** (111) **5302**
 (220) **26.05.1999** (151) **11.09.2000**
 (181) **26.05.2009**
 (730) “Մարան” ՍՊԸ, Եղեգնաձոր, Աթարեկյան 22, ԱՄ
 (540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:

(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, սեւ, կարմիր եւ սպիտակ գունային համակցությամբ:
 (511)(510)
 դաս 33. “Արենի” տեսակի խաղողից պատրաստված “Արենի” գինի:

(210) **990462** (111) **5303**
 (220) **31.05.1999** (151) **11.09.2000**
 (181) **31.05.2009**
 (730) “Հարատիղ” ՍՊԸ, Վանաձոր, Կուրդինյան 1, ԱՄ
 (540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
 (591) Նշանը պահպանվում է երկնագույն, սպիտակ, կարմիր, կանաչ եւ սեւ գունային համակցությամբ:
 (511)(510)
 դաս 32. հանքային ջուր:
 (740) Ա. Մալումյան

(210) **990483** (111) **5304**
 (220) **03.06.1999** (151) **11.09.2000**
 (181) **03.06.2009**
 (730) Գլաբսոն Գրուփ Լիմիթիդ, GB
 (540)

SERETIDE

(511)(510)
 դաս 5. դեղագործական պատրաստուկներ եւ նյութեր:
 (740) Ռ. Գեորգյան

(210) **990484** (111) **5305**
 (220) **03.06.1999** (151) **11.09.2000**
 (181) **03.06.2009**
 (730) Գլաբսոն Գրուփ Լիմիթիդ, GB
 (540)

FLIXOVENT

(511)(510)
 դաս 5. դեղագործական պատրաստուկներ եւ նյութեր:

(740) Ռ. Գետրգյան

(210) **990518** (111) **5306**
(220) **08.06.1999** (151) **11.09.2000**
(181) **08.06.2009**

(730) Գլաքսո Գրուփ Լիմիթիդ, GB
(540)

AGENERASE

(511)(510)
դաս 5. հակավիրուսային դեղագործական
պատրաստուկներ եւ նյութեր:

(740) Ռ. Գետրգյան

(210) **990553** (111) **5307**
(220) **15.06.1999** (151) **11.09.2000**
(181) **15.06.2009**

(730) Փ.Գ. Լիզինգ Ա/Ս, DK
(540)

GOLD FRANKS

(511)(510)
դաս 29. մսամթերք, երշիկեղեն, այդ թվում՝ եր-
շիկ, նրբերշիկ եւ սալյամի:

(740) Ռ. Գետրգյան

(210) **990554** (111) **5308**
(220) **15.06.1999** (151) **11.09.2000**
(181) **15.06.2009**

(730) Ամերիքն Հոուն Փրոդաքս Բորիդերշն, Դե-
լավերի նահանգ, US

(540)



(511)(510)
դաս 5. հորմոնալ դեղագործական պատրաս-
տուկներ:

(740) Ռ. Գետրգյան

(210) **990569** (111) **5309**
(220) **17.06.1999** (151) **11.09.2000**
(181) **17.06.2009**

(730) Բայրաքլի Բոյա վե Վերնիք Ֆաբրիքալարի Ա-
նոնիմ Շիրքեթի, TR

(540)

Dewilux

(511)(510)

դաս 1. քիմիական նյութեր, որոնք նախատես-
ված են օգտագործելու արդյունաբերական եւ գիտա-
կան նպատակներով, լուսանկարչության, գյուղա-
տնտեսության, այգեգործության եւ անտառաբուծու-
թյան մեջ. չմշակված սինթետիկ խեժեր, չմշակված
պլաստմասսաներ. պարարտանյութեր. կրակմարող
բաղադրություններ. քիմիական նյութեր մետաղների
գողման եւ մխման համար. քիմիական նյութեր
սննդամթերքի պահածոյացման համար. դաբաղիչ
նյութեր. սոսնձող նյութեր արդյունաբերական նպա-
տակներով օգտագործելու համար.

դաս 2. ներկեր, արծնուկներ, լաքեր. մետաղը
ժանգոտումից եւ փայտանյութը քայքայումից պաշտ-
պանող նյութեր. ներկանյութեր. խածանյութեր, ներ-
կանյութերի սեւեռակալիչներ. չմշակված բնական
խեժեր. թերթավոր եւ փոշենման մետաղներ՝ գեղար-
վեստական, գեղագարդման նպատակների եւ գե-
ղարվեստական տպագրության համար:

(740) Ռ. Գետրգյան

(210) **990632** (111) **5310**
(220) **30.06.1999** (151) **11.09.2000**
(181) **30.06.2009**

(730) “Տիգրան Մադոյան” ՍՊԸ, Վանաձոր, Գր. Լու-
սավորչի փ. 39-28, AM

(540)



(591) Նշանը պահպանվում է կանաչ, բաց եւ մուգ մա-
նուշակագույն, դեղին եւ երկնագույն գունային
համակցությամբ:

(511)(510)

դաս 29. թան.

դաս 32. գազավորված ջրեր, ոչ ալկոհոլային
գովաջուցիչ ըմպելիքներ, սննդարար եւ տոնուսը
բարձրացնող ըմպելիքներ, ըմպելիք պատրաստելու
այլ բաղադրանյութեր, բանջարեղենի հյութեր, մրգա-
հյութեր:

(740) Ա. Մալումյան

(210) **990796** (111) **5311**
(220) **13.08.1999** (151) **11.09.2000**
(181) **13.08.2009**

(730) Ե. Ի. Դյու Փոն դե Նեմուր ընդ Քամփնի, Դելա-
վերի նահանգ, US

(540)

ТАЙТЛ

(511)(510)

դաս 5. հերբիցիդներ, ֆունգիցիդներ եւ միջատասպան նյութեր:

(740) Է. Նահապետյան

(210) 990812

(111) 5312

(220) 20.08.1999

(151) 11.09.2000

(181) 20.08.2009

(730) Անհատ ձեռնարկատեր Վաղարշակ Աղաբեկյան, Երեւան, Զ. Սարկավազի 54/1, բն. 9, AM

(540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:

(591) Նշանը պահպանվում է սպիտակ, կարմիր եւ սև գունային համակցությամբ:

(511)(510)

դաս 30. աղացած սուրճ:

(210) 991127

(111) 5313

(220) 30.11.1999

(151) 11.09.2000

(181) 30.11.2009

(730) Փլեյբոյ Էնթրփրայզիզ Ինթրնեյշնլ, Ինք., US

(540)



(511)(510)

դաս 25. հագուստ, կոշիկեղեն, գլխարկներ:

(740) Հ. Մանուկյան

(210) 20000110

(111) 5314

(220) 24.02.2000

(151) 11.09.2000

(181) 24.02.2010

(730) “Մովսիսյան” ՍՊԸ, Երեւան, Այգեստան 11 փող., շենք 3, բն. 1, AM

(540)



(591) Նշանը պահպանվում է սև, կանաչ եւ սպիտակ գունային համակցությամբ:

(511)(510)

դաս 19. բնական քարերի մշակում, ընդգրկված դաս 19-ում:

(210) 980704

(111) 5315

(220) 15.09.1998

(151) 15.09.2000

(181) 15.09.2008

(730) Յունայթիդ Թեքնոլոջիզ Բորիտրեյշն, Դելավերի նահանգ, US

(540)



(511)(510)

դաս 1. քիմիական պատրաստուկներ, մասնավորապես՝ հեղուկ ռեակտիվ էլաստոմերներ սինթետիկ կաուչուկի արտադրության համար. տիեզերանավերում եւ հրթիռներում օգտագործվող պինդ վառելիքի կատալիզորդներ. կայունարարներ արդյունաբերության մեջ օգտագործելու համար, մասնավորապես՝ կայունարարներ պոլիմերային բաղադրությունների համար.

դաս 3. մաքրման ունիվերսալ նյութեր մեքենաների եւ մեխանիզմների, մասնավորապես՝ էլեկտրական վերելակների եւ ամբարձիչների, փոքր բեռնատար վերելակների եւ շարժասանդուղքների համար.

դաս 4. քսանյութեր փոքր բեռնատար վերելակների եւ մեխանիզմների ուղղորդ տարրերի համար. քսասարքեր եւ քսայուղեր եւ քսուքներ էլեկտրական վերելակների, փոքր բեռնատար վերելակների եւ շարժասանդուղքների համար. վառելիք տիեզերանավերի եւ հրթիռների շարժիչների համար.

դաս 6. ավիացիայում եւ տիեզերագնացության մեջ օգտագործվող սարքավորումների համար մետաղական փականներ եւ պահեստամասեր դրանց համար. հպումային մետաղական կալիչներ, շարժաքերի

մետաղական շղթաներ, մետաղական փականքներ եւ կողպեքներ դռների համար, մետաղական սեղմակներ, մետաղական աստամնաձողեր, մետաղական սեղմաձողիկներ, դիրքորոշիչ մետաղական սարքեր եւ մետաղական տափակապիչներ՝ որպէս վերելակների, ամբարձիչների եւ շարժասանդուղքների, էլեկտրոնային ղեկավարմամբ թեք եւ հորիզոնական շարժվող հետիոտնային ուղիների, եւ օդային բարձով աշխատող տրանսպորտային միջոցների պահեստամասեր.

դաս 7. տիեզերանավերի ու հրթիռների շարժիչներ. տիեզերանավերի եւ հրթիռների շարժիչների քարշի վեկտորի կառավարման սարքեր եւ պահեստամասեր դրանց համար. ռոբոտների կառավարմամբ բարձր ճնշման էլեկտրական ցրցայտիչներ եւ դրանց մասեր, մասնավորապէս բարձր ճնշման ցրցայտիչների ծայրափողակներ՝ ծածկանյութերի հեռացման համար. արդյունաբերական գազատուրքիներ եւ մասեր դրանց համար. գազատուրքիներից շարժաբերվող էներգակայանքներ, էլեկտրական գեներատորների սարքավորանք, ջերմավերարտադրմամբ շոգեգեներատորներ եւ էներգատուրքիներ՝ վերգետնյա եւ ծովային կայանքներում օգտագործելու համար. պնեմատիկ մեկնասարքեր՝ թոշող ապարատների շարժիչների համար. էլեկտրամեխանիկական, էլեկտրահիդրավիկ, հիդրավիկ եւ մեխանիկական շարժաբերներ՝ թոշող ապարատների շարժիչների համար, ինչպիսիք են՝ ռեակտիվ շարժիչի օդի մատակարարման հիդրավիկ շարժաբերները եւ ռեակտիվ շարժիչի ստատորի շարժաթելի հիդրավիկ շարժաբերները. հիդրոմեխանիկական շարժաբերներ թոշող ապարատների թիչքի կառավարման համակարգերի համար. օժանդակ ուժային սարքեր, մասնավորապէս գազատուրքիների շարժիչներ. թոշող ապարատների շարժիչների վառելիքի մատակարարման կառավարման էլեկտրական, էլեկտրոնային եւ հիդրոմեխանիկական սարքեր. թոշող ապարատների շարժիչների օդի մատակարարման կառավարման էլեկտրական եւ հիդրոմեխանիկական սարքեր. հրթիռային շարժիչներ. ջրի կենտրոնախույս գտիչներ. գազատուրքիների մուտքային օդի գտման համակարգեր. ջեռուցման եւ հովացման համակարգեր հեղուկ ջերմակրիչով, ջերմաստիճանի մեխանիկական կամ էլեկտրամեխանիկական կարգավորիչներով՝ թոշող ապարատներում եւ տիեզերանավերում օգտագործելու համար. շրջանառու ջերմափոխանակման կայանքներ, որոնք թոշող ապարատներում օգտագործվում են որպէս ջերմաստիճանի կարգավորման սարքեր. ջրի հեռացման սարքեր՝ ավիացիոն պնեմատիկ համակարգերում օգտագործելու համար. վառելիքի պոմպեր, վառելիքի մատուցման, կարգավորման սարքեր ստացիոնար գազատուրքիների շարժիչների համար. գազատուրքիների շարժիչների պիտույքներ, ինչպիսիք են՝ կարգավորիչ փականները եւ տվիչները. օդափոխիչի աշխատանքային եւ ուղորդիչ թիակներ՝ ավիացիոն

շարժիչների, աէրոդինամիկական խողովակների եւ աէրոդինամիկական տուրքիների համար. մուտքային գտիչներ՝ ծովային գազատուրքինային շարժիչներում օգտագործելու համար. ավտոմատ եւ ձեռքի փորձարկման սարքեր՝ ավիացիոն շարժիչների վառելիքի հիդրոմեխանիկական եւ էլեկտրոնային կառավարման սարքերի համար. գազատուրքինային ավիացիոն շարժիչների շահագործման եւ արատորոշման ավտոմատ եւ ձեռքի վերլուծիչներ. ավիացիոն շարժիչների օդային պտուտակներ. ավիացիոն շարժիչների հիդրավիկ շարժաբերներ, ինչպիսիք են՝ ռեակտիվ շարժիչի բոցամուղի արտանետման հիդրավիկ շարժաբերները եւ ռեակտիվ շարժիչի քարշուժի դարձման հիդրավիկ շարժաբերները. ավիացիոն շարժիչների օդապտուտակների քայլի կառավարման էլեկտրոնային եւ հիդրոմեխանիկական սարքեր. քարշուժային օդափոխիչներ եւ պահեստամասեր դրանց համար. վառելիքային բաքով էլեկտրական գեներատորներ եւ դրանց բաղադրամասեր. շարժիչներ՝ թոշող ապարատները, ջրային փոխադրամիջոցները, մասնավորապէս՝ լաստամավերը, բեռնամավերը, սառցահատները, ռազմամավերը, կատերները, եւ բարձր արագության փորձարարական փոխադրամիջոցները եւ ցամաքային ստացիոնար տեղակայանքներն էներգիայով ապահովելու համար, մասնավորապէս՝ էներգիայի արտադրման սարքեր՝ ներքին այրման շարժիչներից շարժաբերով, էլեկտրական էներգիայի արտադրման սարքավորանք, ջերմավերարտադրմամբ շոգեգեներատորներ, շոգետուրքիներ եւ էլեկտրական տուրքիներ. գործարկիչներ շարժիչների, մասնավորապէս՝ բենզինով աշխատող փոքր շարժիչների եւ նավակային կախովի շարժիչների համար. շարժիչների հովացման մոդուլներ ցամաքային փոխադրամիջոցների համար եւ դրանց մասեր, մասնավորապէս՝ ռադիատորների հովացման օդափոխիչների մոդուլներ, վառելիքային ներարկիչների եւ (կամ) կարբյուրատորների հովացման մոդուլներ, շարժիչներ հովացման օդափոխիչների համար եւ կոնդենսատորների հովացման օդափոխիչների մոդուլներ. շարժասանդուղքներ եւ դրանց մասեր. վերելակներ, ամբարձիչներ եւ դրանց մասեր. էլեկտրական շարժիչներ մեքենաների եւ հաստոցների համար. էլեկտրոնային կառավարման սարքերով վերելակներ, ամբարձիչներ, էլեկտրոնային կառավարման սարքեր եւ դրանց պահեստամասեր. էլեկտրական գեներատորներ. պահեստամասեր վերելակների, ամբարձիչների եւ շարժասանդուղքների համար. էլեկտրական եւ էլեկտրոնային տեսա- եւ լսա- ազդանշանների գեներատորներ՝ վերելակների, ամբարձիչների եւ փոքր բեռնատար վերելակների հետ օգտագործելու համար. մեքենաների մասեր, մասնավորապէս՝ առանցքակալներ, ականոցներ, արգելակային մակադրակներ, արգելակային մակադրակի գամեր, ներդրակներ, խոզանակներ, խոզանակակալներ, էլեկտրական շարժիչներ, քայլային մեխանիզմների ատամնանիվներ, հոլովակ-

ներ, մասնավորապես՝ առանցքակալների հոլովակներ, առամնաձողեր, փոխանցման տուփեր, ներդրվող տարրեր, մեխանիկական լծակներ, օղակներ, լարեր, տափակապիչներ, լեզվակներ, ձգաձողեր, բռնցքներ, փոկանիվներ, ճոպանային փոկանիվներ, դռների գործարկման լարեր, փոքր բեռնատար վերելակների լարեր, գսպանակներ, առամնանիվներ եւ խցուկներ, որոնք օգտագործվում են որպես վերելակների, ամբարձիչների, շարժասանդուղքների եւ էլեկտրոնային գործարկմամբ թեք եւ հորիզոնական շարժվող հետիոտնային ուղիների պահեստամասեր. շարժասանդուղքի ագուստներ եւ դրանց մասեր. վերելակների, ամբարձիչների խցիկի կախման համակարգեր՝ բաղկացած վերելակների, ամբարձիչների հարթակից, խցիկի հենարանային ճոճանակից, միացնող ձողերից եւ ծանրության ուժի վերականգնման բռնցքներից.

դաս 9. կոմուտացման սարքավորանք, որն օգտագործվում է էլեկտրական վերելակների, ամբարձիչների, փոքր բեռնատար վերելակների եւ շարժասանդուղքների հետ, մասնավորապես՝ էլեկտրական փոխարկիչներ եւ էլեկտրոնային շարժա- եւ հպագ-գայուն փոխարկիչներ. տեսա- եւ լսա- ազդանշանային սարքեր, որոնք օգտագործվում են էլեկտրական վերելակների, ամբարձիչների եւ փոքր բեռնատար վերելակների հետ, մասնավորապես՝ ազդանշանային զանգեր եւ պրոցեսորներ. կցամասեր խողովակատարների համար, որոնք օգտագործվում են վերելակների, ամբարձիչների, փոքր բեռնատար վերելակների եւ շարժասանդուղքների էլեկտրական լարերի անցկացման համար. շարժման էլեկտրական կոնտրոլերներ եւ դրանց պահեստամասեր. էլեկտրական էներգիայի սնուցման սարքեր՝ վթարային օժանդակ էներգիա սարքերի տեսքով, որոնք էներգիայի խափանման ժամանակ ապահովում են վերելակի անվտանգ բերումը ամենացածր հարկի կամ հարթակի մակարդակին. էլեկտրոնային տեսա- եւ համակարգչային մոնիտորներ՝ շինություններում ջեռուցման, օդափոխման, օդի լավորակման, վերելակների, ամբարձիչների եւ շարժասանդուղքների գործարկման համակարգերի համար. պահեստամասեր վերելակների, ամբարձիչների, շարժասանդուղքների, էլեկտրոնային կառավարմամբ թեք եւ հորիզոնական շարժվող հետիոտնային ուղիների եւ մաքրային տրանսպորտային միջոցների համար, մասնավորապես՝ կոնդենսատորներ, էլեկտրական կոճեր, էլեկտրական հաղորդալարեր, էլեկտրական մալուխներ, էլեկտրական հպակներ, էլեկտրոնային հսկման սարքեր եւ դրանց հավաքակազմեր, էլեկտրոնային ընթերցող սարքեր, էլեկտրական հալուն ապահովիչներ, էլեկտրական միկրոփոխարկիչներ եւ փոխարկիչներ, ռելեներ, ռեզիստորներ, ուղղիչներ, էլեկտրական ածխային հպակներ, էլեկտրական փողակներ եւ վերելակների, ամբարձիչների խցիկների եւ հարթակների սարքեր, մասնավորապես՝ տեղեկատվական արտապատկերման էկրաններ, մասնավորա-

պես՝ պանելներ, տեղեկատվական դիսփլեյներ՝ լուսարձակող դիողային դիսփլեյների ձեւով, խոսքի էլեկտրոնային սինթեզատորներ եւ դրանց մասեր, մասնավորապես՝ կառավարման էլեկտրոնային պանելներ, եզակի եւ կրկնակի ազդանշանների էլեկտրոնային զանգեր եւ հարկի համարի ցուցիչներ. վթարային կապի հեռախոսներ վերելակների, ամբարձիչների խցիկներում օգտագործելու համար եւ դրանց մասեր, անվտանգության էլեկտրոնային սարքեր՝ կանխարգելու համար վերելակների, ամբարձիչների կամ մնամատիպ փոխադրամիջոցների դռների փակվելը մինչեւ բոլոր ուղեւորների դուրս գալը կամ բեռի դուրս հանելը. էլեկտրոնային սարքավորում՝ շինությունների համակարգերի մոնիտորինգի համար, մասնավորապես՝ տեսա- եւ համակարգչային մոնիտորներ. վերելակների, ամբարձիչների աշխատանքի մոնիտորինգի համակարգչայնացված սարքավորում, մասնավորապես՝ տեսա- եւ համակարգչային մոնիտորներ. համակարգչային ծրագրային ապահովում, մասնավորապես՝ վերելակների, ամբարձիչների դիսպետչերական վերահսկման ծրագրային ապահովում. վերելակների, ամբարձիչների համակարգչայնացված վերահսկման սարքեր եւ պահեստամասեր եւ դրանց ծրագրային ապահովում. վերելակների, ամբարձիչների աշխատանքի մոնիտորինգի եւ արատորոշման համակարգչայնացված սարքավորում. էլեկտրամեխանիկական ապրանքներ վերգետնյա փոխադրամիջոցների համար, մասնավորապես՝ էլեկտրամագնիսական շարժաբերներ, սոլենոիդներ, էլեկտրամեխանիկական շարժաբերներ եւ փոխարկիչներ, մասնավորապես՝ ճակատային լուսարձակի փոխարկիչներ, ներքին լամպերի փոխարկիչներ, լամպերի հովարքի փոխարկիչներ, լույսի կարգավորիչի փոխարկիչներ, շրջադարձի ազդանշանի փոխարկիչներ, նստարանների կառավարման փոխարկիչներ, դեկասյան բազմաֆունկցիոնալ փոխարկիչներ, հայելիների դիրքի կարգավորման փոխարկիչներ, դռների կողպեքների փոխարկիչներ, ձայնային ազդանշանների փոխարկիչներ, խմբային փոխարկիչներ եւ կառավարման փոխարկիչներ՝ վերգետնյա փոխադրամիջոցների համար. էլեկտրոնային սարքեր վերգետնյա փոխադրամիջոցների համար, մասնավորապես՝ անբանալի դռների համակարգչայնացված մուտքային համակարգեր, ներքին լուսավորման մոդուլներ, հեռակառավարվող ֆունկցիոնալ շարժաբերներ, հակառեւանգման համակարգեր, էլեկտրոնային ժամանակաչափ սարքեր, շրջադարձի ազդանշանի կառավարման սարքեր, վթարային առկայծող լուսավորության կառավարման սարքեր, սարքերի վահանակի լուսավորման կարգավորիչների կառավարման սարքեր, ջեռուցիչի կառավարման սարքեր՝ լուսամուտների խավարումը վերացնելու համար, չորս անիվների տանող լիեռնի փոխադրիչի կառավարման մոդուլներ, ջեռուցման, օդափոխման եւ օդի լավորակման կառավարման սարքեր, անվտանգության պասիվ միջոցների կառավար-

ման սարքեր եւ կառավարման մոդուլներ՝ կապված վերգետնյա փոխադրամիջոցների համար շարժիչների եւ փոխարկիչների հետ. էլեկտրաբաշխման սարքեր վերգետնյա փոխադրամիջոցների համար, մասնավորապես՝ մետաղալարային հաղորդագծեր, սեղմակներ եւ միակցիչներ մետաղալարային հաղորդագծերի համար, բաշխիչ տուփեր, էլեկտրասնուցման տուփեր, հալուն ապահովիչների բլոկներ, կուտակչային մարտկոցների մալուխներ, սեղմակներ կուտակչային մարտկոցների մալուխների համար, հաղորդագծման մուլտիպլեքսային համակարգեր եւ դրանց վերաբերող կառավարման էլեկտրոնային մոդուլներ. վառելիքային բաքեր՝ արդյունաբերությունում եւ կենցաղում օգտագործելու համար նախատեսված էլեկտրաէներգիայի արտադրման համար, համակարգչային ծրագրային եւ ապարատային ապահովում վառելիքային բաքերով էներգակայանների տվյալների հեռավորահավաքման, արատորոշման, գնահատման եւ մոնիտորինգի համար. վառելիքային բաքերով էներգակայաններ եւ դրանց պահեստամասեր. վառելիքային բաքերով էներգակայաններ եւ դրանց բաղադրամասեր. մասնավորապես՝ վառելիքային բաքերի մարտկոցներ՝ ջերմային էներգիան էլեկտրական էներգիայի վերածելու համար, եւ(կամ) ջերմային էներգիայի կերպափոխիչներ՝ ջերմային էներգիան մշակելու համար, եւ(կամ) էլեկտրաէներգիայի կերպափոխիչներ՝ հաստատուն հոսանքը փոփոխականի վերածելու համար. էլեկտրական էներգակայաններ եւ դրանց մասեր. համակարգչային ծրագրային ապահովում, համակարգչային ծրագրեր եւ համակարգչային ծրագրային ապահովման մոդելավորման ծրագրեր, որոնք օգտագործվում են անալիզների կիրառման համակարգի վերատադրման մեջ, մասնավորապես՝ վիրտուալ իրականության ստեղծման ծրագրային ապահովում՝ շարժիչների եւ արդյունաբերական սարքավորանքի ֆունկցիոնալ հնարավորությունների օգտագործման բնագավառում. ինտեգրալային սխեմաներ, մասնավորապես՝ փոխակրիչային պրոցեսորներ. ինտեգրալային սխեմաներ՝ հաջորդական մուլտիպլեքսային տեղեկատվական հաղորդաձողերի հետ օգտագործելու համար. վառելիքային բաքերով էներգակայաններ. վառելիքային բաքեր եւ դրանց պահեստամասեր. վառելիքային բաքերով էներգակայաններ, որոնք ներառում են վառելիքային բաքերի մարտկոցներ, որոնք ապահովում են քիմիական վառելիքի եւ քիմիական օքսիդիչի էլեկտրաքիմիական կերպափոխում հաստատուն էլեկտրական հոսանքի եւ վաճառվում են որպես միասնական հավաքակազմ կամ վառելիքի կերպափոխիչի հետ, եթե քիմիական վառելիքը մշակման կարիք ունի եւ(կամ) վաճառվում են էլեկտրաէներգիայի կերպափոխիչի հետ, եթե հաստատուն հոսանքը պետք է կերպափոխվի փոփոխական հոսանքի. վառելիքային բաքեր՝ արդյունաբերությունում եւ կենցաղում օգտագործելու համար եւ էլեկտրական էներգիայի արտադրման համար. էլեկ-

տրամեխանիկական կառավարման սարքեր՝ ավիացիայում օգտագործելու համար. միջավայրի կառավարման սարքեր՝ թռչող ապարատների համար. թռիչքի էլեկտրոնային կառավարման սարքեր՝ թռչող ապարատներում եւ տիեզերանավերում օգտագործելու համար. տիեզերագնացների կենսապահովման համակարգեր, մասնավորապես՝ տիեզերական համագետի կենսապահովման համակարգեր. շրջակա միջավայրի կառավարման սարքեր տիեզերանավերի համար. էլեկտրաէներգիայի էլեկտրոնային ստատիկ կերպափոխիչներ. էլեկտրաէներգիայի էլեկտրոնային ստատիկ կոնվերտորներ. շարժիչի ճնշման անվանական արժեքի տվիչներ. էլեկտրոնային համաժամիչներ՝ թռչող ապարատների օդապտուտակների համար. տվյալների ձեռքբերման համակարգեր թռչող ապարատների համար եւ թռչող ապարատների, ծովային եւ վերգետնյա փոխադրամիջոցների, վերգետնյա ստացիոնար կայանքների շարժիչների համար եւ փոխադրամիջոցների համակարգերի համար, մասնավորապես՝ էլեկտրական եւ կախովի համակարգերի համար. ճնշման տվիչներ, որոնք վաճառվում են որպես ճնշման չափման համակարգերի մասեր, եւ առանձին, եւ դրանց մասեր. արագության էլեկտրական տվիչներ եւ ցուցիչներ. ավտոմատ կայունացման էլեկտրոնային սարքավորանք թռչող ապարատների, տիեզերանավերի, ջրային տրանսպորտի համար. ջերմաստիճանի կառավարման սարքեր. խցիկի ճնշման կառավարման պնեւմատիկ եւ էլեկտրոնային համակարգեր. վերգետնյա ապահովման սարքավորում թռչող ապարատների, վերերկրյա փոխադրամիջոցների եւ տիեզերանավերի համար, մասնավորապես՝ տեխնիկական սպասարկման եւ փորձարկման սարքավորանք. շարժիչի վառելիքի ծախսի վերհսկման փորձարկման ստենդներ, գազի կառավարման սարքավորանք՝ օդի վերականգնման եւ հեղուկի կերպափոխման համար՝ տիեզերագնացության եւ ստորգետնյա տեղափոխումների ժամանակ օգտագործելու համար. էլեկտրոնային համաժամիչներ թռչող ապարատների շարժիչների օդապտուտակների համար. թթվածնի մատակարարման համակարգեր տիեզերական, թռչող եւ ստորջրյա ապարատներում օգտագործելու համար. կենսապահովման դյուրատար համակարգեր՝ տիեզերական թռիչքների ժամանակ միջավայրի հսկման համար. տիեզերական սկաֆանդրներ. արատորոշիչ համակարգիչներ՝ կենսապահովման համակարգերի համար արագության տվիչներ եւ գիրոսկոպներ, որոնք վաճառվում են որպես թռչող ապարատներում, հրթիռներում եւ տիեզերական ապարատներում օգտագործվող ուղղորդման եւ(կամ) կառավարման համակարգերի մասեր, եւ առանձին. էլեկտրական էներգակայանների կառավարումը մոդելավորող սարքեր. պնեւմատիկ, էլեկտրական եւ էլեկտրոնային փորձարկիչներ՝ թռչող ապարատների շարժիչային օդապտուտակների ականոցների, օդի լավորակիչների, շարժիչի վառելիքի կառավարման սարքերի, շարժիչի վա-

ռելիքի պոմպերի եւ թռչող ապարատների եւ շարժիչների շարժաբերների համար. թռչող ապարատների օդի մուտքի կառավարման էլեկտրոնային սարքեր. ինտեգրալային տվյալների ձեռքբերման էլեկտրոնային ավիացիոն համակարգեր՝ ավիացիոն ենթահամակարգերի մոնիտորինգի, արատորոշման եւ կանխորոշման, թռչող ապարատների ընդհանուր բնութագրերի եւ թռչող անձնակազմի աշխատանքի համար. թռիչքի համակարգչայնացված կառավարման սարքեր՝ կառավարելու համար թռչող ապարատների կառավարման մակերեսայինները՝ թռչող ապարատներում, մասնավորապես՝ ուղղաթիռներում, կայունացման բարձրացման եւ թռիչքային ուղու կառավարմանը նպաստելու նպատակով. շարժաբերներ՝ կառավարման մակերեսայինների, մասնավորապես՝ անշարժ թեւերով թռչող ապարատների պոչային թեւիկների կամ ուղղաթիռների թիակների կառավարման համար, իներցիալ նավագնացության համակարգեր թռչող ապարատների համար, ներառյալ գիրոսկոպները, ակսելերոմետրերը, էլեկտրասնուցման սարքերը, տեղեկատվության վերարտադրման էլեկտրոնային սարքերը. համակարգչային կառավարմամբ ուղղորդման եւ կառավարման սարքեր՝ տիեզերանավ ուղղորդելու եւ տիեզերագնացության համար՝ օգտակար բեռը տիեզերքում որոշակի կետի հասցնելու եւ շարժիչի վառելիքի սպառման չափը կառավարելու համար՝ համոզվելով, որ տիեզերանավն ունի բավարար վառելիք տիեզերքում որոշակի կետի հասնելու համար. չափաբաժնային գիրոսների օգտագործմամբ թռչող ապարատների դիրքորոշման կառավարման սարքեր՝ կառավարելու համար թռիչքի ժամանակ թռչող ապարատի դիրքի տեղաշարժման ուղղությունը եւ ուղեծրում արբանյակի շարժման ուղղությունը. ուղղորդման եւ կառավարման համակարգեր, մասնավորապես՝ արագության տվիչների օգտագործմամբ արկերի դիրքի կառավարման սարքեր. թռչող ապարատների օդապտուտակների համար համաժամիչներ. էլեկտրաքիմիական տարրեր, մասնավորապես՝ գազի գեներատորներ, վառելիքի բաքեր, կոմպրեսորներ եւ տվիչներ. թռիչքի էլեկտրոնային կառավարման սարքեր թռչող ապարատների համար. արագացումաչափեր. վայրէջքի ապահովման սարքավորանք թռչող ապարատների համար. նավային էլեկտրոնային սարքավորանք նավային տվիչները, ինչպիսիք են՝ հիդրոտեղորոշիչը կամ ռադիոտեղորոշիչը միացնելու համար նավի ռազմական համակարգերին՝ դրանք տվյալների ազդանշաններով կամ հսկիչ ազդանշաններով ապահովելու համար. ավիացիոն էլեկտրոնային սարքավորում՝ զննվող ստորջրյա նավերի բնութագրիչ ազդանշանների հավաքման եւ այդ ազդանշանները մայր նավին ետ հաղորդելու համար՝ վերլուծության եւ կրակի կառավարման նպատակով. օդային թռիչքի աշխատանքի համակարգչային մոնիտորային սարքավորում. ավիացիոն էլեկտրոնային սարքավորում, մասնավորապես՝ ռազմական համակարգչային ին-

տերֆեյս, որն անձնակազմին եւ համակարգիչներին հնարավորություն է տալիս հսկել ամբողջ նավի սպառազինության համակարգերի աշխատանքն ու գործունեությունը, աշխատունակությունը եւ վիճակը. նավերի ռադիոկայանների հաճախության ակեհավաքները մեկ կամ մի քանի ակեհավաքների հետ կցորդող սարքերի կառավարման միջոցներ՝ միկրոհամակարգիչների օգտագործմամբ. ռադիոհեռաչափական սարքավորանք՝ հրթիռի թռիչքի եւ աշխատանքի մասին տեղեկատվություն հավաքելու եւ այն կառավարման երկրային կետին հաղորդելու համար. էլեկտրոնային սարքավորում, որն ապահովում է թռչող ապարատների ռադիոկայանների օգտագործումը նավի ներսում, թռչող ապարատների ռադիոկայանների շուրջ էլեկտրոնային պաշտպանիչ էկրանի ստեղծման միջոցով եւ թռչող ապարատների ռադիոկայանները նավային համակարգերին, ինչպիսիք են՝ էլեկտրասնուցման, հովացման եւ շրջակա միջավայրի հսկման համակարգերը միացնելու միջոցով. դյուրատար էլեկտրոնային փորձարկման սարքեր՝ թռչող ապարատների թռիչքային տարբեր համակարգերի, ինչպիսիք են՝ թռչող ապարատների ավիացիոն էլեկտրոնային համակարգերը եւ ավիացիոն էլեկտրոնային ստորջրյա ռազմական ենթահամակարգերը, վերգետնյա փորձարկման համար. էլեկտրոլիզարարներ եւ դրանց պահեստամասեր. էլեկտրաքիմիական տարրեր, մասնավորապես՝ էլեկտրաքիմիական գազային գեներատորներ, էլեկտրաքիմիական գազային կոմպրեսորներ, էլեկտրաքիմիական գազային տվիչներ, էլեկտրաքիմիական էներգիայի արտադրման վառելիքով աշխատող սարքեր եւ էլեկտրաքիմիական գազային գառիչներ, մասնավորապես՝ թթվածնի արտադրման էլեկտրոլիզարարներ ունեցող ենթահամակարգեր, գազային կոմպրեսորներ եւ գազային գառիչներ եւ դրանց պահեստամասեր. էլեկտրոնային կառավարման սարքեր, մասնավորապես՝ ժամանակի, խոնավության, ջերմաստիճանի, ճնշման, հոսանքի ուժի, ոլորող մոմենտի եւ արագության կառավարման սարքեր. շարժիչի եւ փոխադրամիջոցի համակարգչայնացված վերահսկիչ-չափիչ սարքեր՝ շարժիչի եւ փոխադրամիջոցի աշխատանքի փորձարկման եւ արատորոշման համար. շարժիչի էլեկտրոնային մոնիտորներ. ինֆրակարմիր լազերներ՝ ածխածնային երկօքսիդով թթվածնի արտադրության միջոցներ՝ թռչող ապարատների համար. թռչող ապարատների կառավարման համակարգերին վերաբերող էլեկտրոնային սարքավորում, կառավարման եւ փորձարկման սարքավորանք եւ դրանց պահեստամասեր. թռչող ապարատների աշխատանքի կառավարման համակարգերին վերաբերող սարքավորանք, կառավարման եւ փորձարկման սարքավորանք եւ դրանց պահեստամասեր. թռչող ապարատների թռիչքի տեսչության համակարգերին վերաբերող սարքավորանք, կառավարման եւ փորձարկման սարքավորանք եւ դրանց պահեստամասեր. թռչող ապարատի օդաչուի աշխա-

տանքի վերահսկման համակարգին վերաբերող սարքավորանք, եւ կառավարման փորձարկման սարքավորանք եւ դրանց պահեստամասեր. համակարգիչների ծրագրային եւ ապարատային ապահովում, որն օգտագործվում է ռեալ ժամանակի ռեժիմում շարժվող կամ կայուն օբյեկտների չափումների ժամանակ, ներառյալ օբյեկտի այնպիսի պարամետրերը, ինչպիսիք են՝ տարածական կողմնորոշումը, չափերը, արագությունը եւ օբյեկտի հեռավորությունը. համակարգիչների ծրագրային ապահովում, որն օգտագործվում է օպտո-էլեկտրոնային ծագման տվյալների, մասնավորապես՝ ալիքային ճակատի տվիչներից ազդանշանների եւ մասնիկների արագության տվյալների համակարգչայնացված վերլուծության ժամանակ. համակարգչային ծրագրային եւ ապարատային ապահովում, ներառյալ ռեալ ժամանակի ռեժիմում ամբողջաթվային համապրոցեսորներ, որոնք օգտագործվում են բարձր արագության կառավարման համակարգերի եւ ռեալ ժամանակի ռեժիմում պատկերման համար, ներառյալ ռեալ ժամանակի ռեժիմում խցիկով հետետելը եւ ռեալ ժամանակի ռեժիմում դեմքի արտահայտությանը հետետելը. խցիկի ապարատային ապահովում, որը մանրաչափավոր դետեկտոր-խցիկներում, մասնավորապես՝ միկրոօպտիկական սարքերում եւ ռսպնակային մոդուլներում նվազագույնի է հասցնում պատկերի աղավաղումը. շարժման որոշման եւ պատկերման սարքավորանք՝ դեմքի համակարգչային անիմացիայի համար, մասնավորապես՝ պատկերի հաղորդման թելքա-օպտիկական ալիքատարներ եւ օպտիկական սկաներներ. պատկերի մշակման էլեկտրաօպտիկական եւ օպտիկական սարքավորանք եւ դրանց բաղադրամասեր, մասնավորապես՝ ռսպնակներ, ռսպնակային խմբեր, օպտիկական սկավառակներ, գոլիչներ, հայելիներ, սիմվոլների ճանաչման օպտիկական սարքավորում, եւ օպտիկական ռսպնակային դիտողներ. էլեկտրաօպտիկական կապի միջոցներ հեռավոր խցիկի եւ հիմնական կայանքի միջեւ. համակարգչային ծրագրային ապահովում թռիչքի ժամանակ ուղղաթիռների շարժիչների արատորոշման, գնահատման եւ մոնիտորինգի համար. համակարգչային ծրագրային ապահովում ավիացիոն շարժիչների գազաօդային տրակտի տեխնիկական վիճակի արատորոշման, գնահատման եւ մոնիտորինգի համար. էլեկտրոնային տեսչական սարքավորում ուղղաթիռների եւ ձգիչ օդապտուտակների թիակների ճեղքերի եւ ճաքերի բացահայտման համար. էլեկտրոնային սարքավորում՝ շարժիչի տեխնիկական վիճակի արատորոշման եւ նախախափանումային վիճակի բացահայտման համար. թռչող ապարատների էլեկտրոնային կառավարման եւ ավտոմատ կառավարման սարքեր. էլեկտրական փոխարկիչներ ուղղաթիռների կառավարման վահանակների համար. էլեկտրոնային հսկող գործիքներ եւ սարքեր (ներառյալ անլար կառավարման միջոցները) ջեռուցման, օդափոխման, սառեցման, օդի լա-

վորակման համակարգերի կառավարման համար եւ դրանց մասեր, մասնավորապես՝ միկրոպրոցեսորներ, միկրովերահսկիչներ, համակարգչային ապարատային միջոցներ, կարգավորիչներ, թերմոստատներ, միկրոբյուրեղներ, կառավարման համակարգեր եւ ծրագրեր, համակարգչային գործող ծրագրեր եւ համակարգչային մոնիտորներ.

